

III

47.9251

-71

(91.542)

7-71

Ն. ԴՕԼԵՆՍ ԵՒ Ա. ԽԱՉ

Պ ԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԻ

Պ Ր Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՀԱՅԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ
ԵՒ

Հայ ազգի կազմակերպումները

Ֆրանս. բնագր. թարգմ.

Ռ. ԲԱԶԲԵՐՈՒՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐՈՆԱԳՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն.ԱՐԱՆԵԱՆՅԻ. ՊՕԼԻՑ, 7.
1910

1990

9(47.925)

2011 - 08

19 AUG 2006

7-71 պ. Ն. ԴՈԼԵՆՍ ԵՒ Ա. ԽԱՉ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԻ



ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1004
1681
2

ՀԱՅԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ԵՒ

Հայ ազգի կազմակերպությունը

Ֆրանս. բնագր. թարգմ.

Ռ. ՔԱՋԲԵՐՈՒՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԷՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑ. 7.

1909

03.04.2013

0005 00A 01 00 - 1105



Ա. ԳԼՈՒԽ

Հայերի վերջնական հայրենիքը

I

Հենց սկզբի ժամանակներից սկսած օտար ցեղերը յաճախ յարձակումներ էին գործում խորտակելու համար հնդկա-եւրոպական ժողովուրդների միութիւնը. հայերն այս ցեղերի ճնշումներից խուսափելու համար արդեօք թէ հնդկա-եւրոպական այս ընտանիքի միշտ աւելի բազմաթիւ, տարածութեան ու արկածների միշտ աւելի ծարաւի միւս անդամների անխուսափելի ճնշման ազդեցութեան տակ էր, որ Թեսալիան թողին և կտրեցին-անցան Եգէեան ծովից մինչև Մարմարա հասնող ծովեզերեայ ամբողջ գաւառը: Արդեօք սրանից յետոյ էլ անփառունակ ծնւող յունական աշխարհի աճման, տարածելուն տեղի տալու համար էր, որ նրանք ստիպւեցին առաջաւոր Ասիայից՝ հայերի համար այդ անհաստատ հողից միշտ իրենց քայլերն ուղղել աւելի ու աւելի դէպի արևելք: Պատմութիւնն ազգերի ծագումն աւելի ևս ուսումնասիրելով թերևս կարողանայ պարզաբանել, որոշել այս երկարատև գաղթականութեան պատճառները: Ներկայումս

նա կարող է ուսումնասիրել հայերին այն ժամանակահատվածից սկսած երբ նրանք հաստատուեցին այն բարձրամակարդակի վրայ, որի սահմաններն են հարաւային կողմից Տիգրիսի, հիւսիս-արեւելքից՝ Կուրի, իսկ արեւմուտքից՝ Ալիւս (Գրգիլ-Խրմակ) գետի հովիտները: Ընդհանուր առմամբ այս է ահա այն տերրիտորիան, որին հայերն իրանց իսկական հայրենիքն են համարում:

Անհնարին է մի անգամ ընդմիջտ գծել այս երկրի սահմանները, որովհետեւ դրանք յաճախ են փոփոխւել. Հայաստանն աւելի կամ պակաս չափերով ընդլայնւել կամ սեղմւել է, սակայն՝ չի կարողացել բնական այնպիսի պատւարներ գերտնել, որոնցով եւրոպական շատ երկիրներ ֆիզիկապէս սահմանագծւած են: Հայկական տերրիտորիա են համարում նաեւ Տիգրան Մեծի (Ք. ա. I. դար.) հռոմայեցոց հետ ունեցած կռիւները վերջացնելուց յետոյ տիրապետած երկիրները. բայց՝ հէնց այս դարումն էլ խօսւում է միմիայն «Մեծ-Հայք»-ի մասին, որը սահմանափակւած էր Եփրատ գետով: Հայերի իսկական ամբողջ հայրենիքը ցոյց տալու համար պէտք է սրան աւելացնել նաեւ «Փոքր-Հայք»ը, որը այդ ժամանակ միացրւած էր պոնտական թագաւորութեան հետ. «Փոքր-Հայք»ում մեծ մասամբ հայեր էին բնակւած և սկզբներում, քանի դեռ հայերը արեւելեան գաւառները չէին գրաւել, տիրապետող

տարրն էին կազմում. սրա համար էլ նրանք «Փոքր-Հայքը» համարում են իրենց սկզբնական, առաջին հայրենիքը:

Այս երկու հատւածները՝ Փոքր ու Մեծ Հայքը միանալով՝ հիւսիսային կողմից յենւում են աշխարհագրական մի հիմքի՝ Սև ծովի եզերքի լեռնաշղթայի վրայ, կամ աւելի շուտ այս Պարխար (Paryadres) կոչւած լեռնաշղթան կրող զանգւածի (massif) վրայ: Հայաստանի սահմանը զանազան դարերում աւելի կամ պակաս չափերով թափանցեց այս զանգւածի ներսերը նայելով թէ հայերի ձեռքումն էր մնում Ճորոխի հովտի մի մասը թէ ուրիշ ազգերին էր թողնւում: Պոնտական այս Ալպերից և Դէրման-Դէրէից—սրա գիտաբերանից է ուղղւում Տրապիզոնը—այն կողմն անցնող իրանց արեւմտեան ճիւղից բաժանւում է սահմանը, որպէսզի մի կոր ու անորոշ գծով Ամասիայի հարաւային կողմից անցնելով միանայ Ալիւսի միջին հոսանքին, որին նախ՝ հետեւում է և ապա՝ նոյն հոսանքով միառժամանակ դէպի վեր բարձրանալուց յետոյ կտրւում անցնում է դէպի այն կողմը, ուր Արժէ լեռան զանգւածից յետ է մղւում այդ գետը դէպի հիւսիս: Ուրեմն՝ Փոքր-Հայքի մէջ չի մտնում Կեսարիան, որը ստեղծւում էր հայկական գաւառ է եղել. բայց՝ Սեբաստիան (Սիվազ), Զելան (Զիլեհ), Մասալկան և Գոմանան, որը կապագովկիայի մեծ ամ-

բարն ու կրօնական կեդրօնատեղին էր, պէտք է միացնել Փոքր-Հայքի հետ. որովհետեւ մեր ընդ-գծած սահմանը հասնում էր մինչև այս վերջին քաղաքը, գոնէ որոշ ժամանակներում, անցնե-լու համար Անտի-Տարոսը: Այնուհետեւ մեր այս սահմանն անցնում էր նոյնիսկ Տաւրոսը, ձգւում Ասորիքի սահմանների երկարութեամբ և անցնում Եփրատից դէպի այն կողմը, ուր այս գետը շուռ է գալիս Միջագետք մտնելու համար, որտեղ միմիայն Մեծ-Հայքն էր կարողացել իւր սահմանները տարածել. այստեղ է, որ Տիգրան Մեծը շինեց իւր հսկայ մայրաքաղաքը՝ Տիգրա-նակերտը: Սակայն՝ Մեծ-Հայքում չպէտք է հա-կանալ նաև Եդեսիան (Ուրֆա) ու Նինվէի մը-նացորդները (այս աւերակները գտնւում են Մո-սուլի մօտերքում), որոնք գտնւում են Միջա-գետքում—չնայած որ այս երկու կէտերն իրենց աջ ու ձախ կողմերով մօտաւորապէս լայնու-թեան միլենոյն աստիճանի վրայ են գտնւում ինչոր Տիգրանակերտն ու Մծբինը. վերջինս մի ժամանակ Տիգրանի երկրորդ մայրաքաղաքն էր: Այսպէս՝ Հայաստանը պարփակելով իւր մէջ Տիգ-րիսի ամբողջ վերին հոսանքը՝ արևելեան կող-մից ընդգրկում է Տիգրիսի արևելեան ճիւղի՝ Մեծ Զաւի հովիտը, ապա՝ Վանի և Ուրմիոյ*)

*) Մեծ-Զաւր գտնւում է Բօտան-Սուրի (հին Կենդ-րիտէս) հարաւ-արևելեան կողմում: Այն լեռները, ու-

լճերը բաժանող լեռնագագաթը բարձրանալով գը-նում է իւր գիրկն առնելու Արաքսի ամբողջ հովիտը, որը Տիգրանից յետոյ թագաւորութեան կեդրօնը դարձաւ: Կուր գետի և Արաքսի խառ-նարանը կարելի է ծայրագոյն սահմանը համարել. սակայն՝ հայերը գոնէ շատ անգամ տիրել են կովկա-սեան մեծ գետի բերանին. միմիայն այս կողմից է, որ նրանք երբէք չկարողացան մի ծովի հաս-նել. Կասպից ծովն էլ հայի համար մի մեծ շու-կայ չէր ներկայացնում: * Ընդհանրապէս նա-յած Վրացիների ու Աղանների իրենց ասիա-կան դրացուն ցոյց տւած համակրանքին կամ դիմադրութեան՝ հիւսիսային սահմանը երբեմն մի քանի ծայրերով հետևում էր Կուրի հով-տին, սակայն երբեմն էլ այն լեռնակա-տարներին, որոնցով Կուրը բաժանւում է Արաքսից: ** Վերջապէս հիւսիս - արևմտեան

րոնց միջով հոսում է այս գետը հնում կոչւում էին Զակրօշ: Վանի և Ուրմիոյ լճերը բաժանող գագաթը կոչւում էր Սօհօնդ: Այս ընդարձակ ճիւղաւորումները, որոնք սփռւած են Քիւրդիստանի բարձրավանդակի վրայ, կազմում էին միմիայն մի անհաստատ սահման: Արևելքում Հայաստանը բաժանւում էր Կասպից ծովից Պարսիսադրէս լեռներով:

*) Արտաշիսեան հարստութեան ժամանակ Ք. ա. 11 դարուց սկսած մինչև IV դար Արշակունիների ժա-մանակ միմիայն՝ հայերը հասան Կասպից ծովին:

**) Վրացիները (Գուրիացիները, սկզբնական Ի-բերները) ու իրենց կովկասեան դրացիները՝ Աղան-ները մեր թւականութեան 1 դարում ստիպմամբ Հա-

կողմից սահման էին կազմում Կողքիսը ապա Ճորոխ (Ագամասիզ) գետը, որի բերանին սակայն երբեք չկարողացան տիրանալ. այստեղ իբրև ապաստանարան էր ծառայում այն ժողովուրդների համար, որոնց հայերը, գոնէ մի քանի գաւառներում, չկարողացան ընկճել և ստիպւեցին ազատ թողնել զրանց Սև ծովի և Հայաստանի միջև գտնւած անմատչելի լեռների վրայ:*)

յաստանին թագաւորներ տւին. երկու կամ երեք հաւիւր տարուց յետոյ հայերի միջոցով քրիստոնէութիւն ընդունելով ճանաչեցին նրանց կրօնական իշխանութիւնը: Այս երկու թագաւորութիւնների մօտիկ յարաբերութեան հետեանքն այն եղաւ, որ մի խառը ժողովուրդ կազմեց Արմէնո-Գրիգորեան անունով: Պոստական Ալպիքը գրաւող լազերը նոյնպէս մի քիչ ձուլւել են հայերի հետ Ճորոխի հովտում, ուր միջին դարում, Բագրատունեաց թագաւորութեան ժամանակ, Արմէնո-Գրիգորեանները հաստատուել էին իբրև տէրեր: Գալով Աղւաններին՝ նրանք Վրացիների օգնականներն էին և յետոյ հայոց կաթողիկոսի վասսալները: Դերբենդի անցքը պարսիկներից խլելուց յետոյ հայոց կաթողիկոսը սրանց էր յանձնել, որպէսզի այդ անցքը պահպանեն և արգելեն հոնգրիացիների մուտքը դէպի Կասպից ծովի երկարութիւնը:

*) Այն լեռները, որոնք եղբրաւորում են Կողքիսը և այդպիսով Հայաստանը բաժանում Սև ծովից կոչւում են Աճարա, վրացերէն Իմերքէլի: Այս լեռները Ճորոխին ճանապարհ տալուց յետոյ շարունակւում են դէպի հարաւ արևմուտք և կոչւում Պարխար

Այսպէս՝ Հայաստանը իւր կեդրօնական մասով նստած է լեռնոտ գագաթների մի գծի վրայ, որը շատ անուններ ունի. այդ գիծը կարելի է նկատել իբրև մի տեսակ ողնաշար այն պարանոցի, որը հիւսիսային և հարաւային կողմից ընկած է ծովային մեծ հովիտների մէջ, այսինքն՝ մի կողմից՝ Կասպից և Սև ծովի, միւս կողմից՝ Միջերկրական ծովի ու Հնդկական օվկիանոսի մեծ հովիտների մէջ: Այս ողնաշարը սահմանաւորում է ջրերի բաշխումը դէպի վերոյիշեալ երկու ուղղութիւնները՝ դէպի հիւսիս և հարաւ: Բայց՝ նա չի ընթանում համաչափ կերպով, իբրև առանձին, կանոնաւոր լեռնաշղթայ, այլ կազմւած է մի շարք մահիկաձև կտրուած բարձունքներից, որոնք ժանիքաձև սուր ծայրեր ունին. նա իւր միջին ամենամեծ բարձրութեամբ մի տեսակ պսակաւորում է լեռնադաշտի ամենաբարձր մասը: Սրա ընդհանուր ուղղութիւնն անցնում է հիւսիս-արևելքից դէպի հարաւ-արևմուտք: Հաշւելով նաև այն փոքրիկ լեռնաշղթան, որից սկսում է այս ողնաշարը, այսինքն՝ Արաքսից դէպի հարաւ, Կասպից ծովի մօտից, կարե-

(Պարխարէսի տառադարձութիւն): Հայոց լեզուի մէջ այստեղ է յիշւում Խաղտիք կամ հին Խախտեաց երկիրը: Ուրեմն՝ խաղիքը հալածելով հայերից Ուրարտուն թողին և այստեղ ապաստան գտան ինչպէս յետոյ կտեսնենք: Այս գաւառը տարածւում է մինչև Գայլ գետի ափունքները:

լի է ասել, որ նա իսկապէս սկսուում է Արարա-
տից՝ ամբողջ Հայաստանի ամենաբարձր գա-
զաթից (մօտ 5,185 մեթր վերջին չափով): Աղ-
րի-Դադն է, որ անմիջապէս միանում է Արա-
րատին. իր հրաբխային բազմաթիւ կոները մեծ
մասամբ ցած են, դրա համար էլ նրանց վրայ
իշխում են Ձինգիլ և Պերլի-Դադ լեռները (սը-
րանք 3,000 մեթրից աւելի բարձր են. մօտաւո-
րապէս 1,500 մեթր բարձր դաշտից): Աղրի-Դա-
դը ձգւելով մինչև Բինգէօլ-Դադ բաժանում
է Արաքսը Եփրատի արևելեան ճիւղից. վերջինս
սկիզբն է առնում Աղրի-Դադի հարաւային
կողմից. իսկ առաջինը՝ Բինգէօլի հիւսի-
սային կողմից է հոսում: Այս երկու գետե-
րը հոսում են միմեանց հակառակ ուղղու-
թեամբ: Բինգէօլը ներկայանում է իբրև մի
հանգոյց նաև ուրիշ փոքր լեռնաշղթաների
համար. հիւսիս - արևմտեան կողմից յատ-
կապէս նրանց համար, որոնք անցնե-
լով Արաքսի աղբիւրի վերևից կազմում են ջը-
րերի բաշխման մի գիծ և գնում, միանում են
Փալանթէօքէնին (3,250 մեթր). այս վերջինիս
հիւսիսային կողմից է բղխում արևմտեան Եփրա-
տը: Այս բազմաթիւ կոներից Բինգէօլը մի այն-
պիսի նստածք, մի այնպիսի բարձրութիւն ու-
նի (3,294 մեթր), որ կարող է ամբողջ գա-
ւառի ամբերը հաւաքել, խտացնել. նա

իր անթիւ փոքրիկ հովիտների միջով բազ-
մաթիւ առաւիյներ է հոսեցնում դէպի իւր
շրջապատի գետերը: Հայաստանի ջրաբանու-
թեան (hydrographie) համար Բինգէօլը Արարատի
հետ միասին ամենաօգտակար լեռնագագաթն է:
Այսպէս՝ հասնելով իւր միջին ծայրին ողնաշա-
րային այս քիստը շարունակւում է դէպի արև-
մուտք. տարածւելով Եփրատի երկու ճիւղերի մէջ
մինչև դրանց միացման տեղը նա ստա-
նում է Տերսիմ (Դերսիմ) անունը: Վերջապէս՝
այդ քիստը Եփրատի համար մի հասարակ անցք
բաց անելուց յետոյ տարածւում է մինչև Անդի-
Տաւրոսը, Եփրատի և Ալիսի միջև, ուր Սգիւ-
դիսէս (այժմ այս անունը փոխւած է) հին ա-
նունն է կրում: Անդի-Տաւրոսը դէպի հիւսիս-
արևելք ճիւղաւորութիւններ է ուղարկում, ո-
րոնք գնում են միանալու Պոնտական երկրորդ
Ալպերին և օգնելու այս զաւառում մեր նկարա-
դրած լեռնագագաթի կազմակերպման: Այս ճիւ-
ղաւորութեան գլխաւոր գագաթներն են Սիպի-
քօր-Դադ և Կոպ-Դադ. վերջինս գտնւում է Էր-
զրումի և Բաբերդի միջև:

Այսպէս է ահա Հայաստանի կեդրոնն ու
գօտին, որոնց նկարագրում են յոյն պատմիչ-
ները: Առաջին անգամ հերոդոտն է գրում, որ
Կիլիկիայի արևելեան կողմում գտնւում էին հա-
յերը, որոնք շատ եզներ և ոչխարներ ունէին:

Ստրաբոն* շատ որոշ, շատ պարզ կերպով պարզաբանում է դիրքը այն երկրի, որ հենց այդ ժամանակից յոյներն ու պարսիկները Արմենիա էին անւանում: Ասորեստանցիները Ուրարտու (Արարատ) հին անունով էին կոչում այդ երկիրը, իսկ հայերը՝ Մեծ-Հայք: Ստրաբոն (63 Ք. ա.—23 Ք. յ.) ծնւած լինելով Կապադովկիայի մայրաքաղաքներից մէկում՝ Ամասիայում շատ լաւ տնտեսական էր հայաստանին նա մերակարագրածի համաձայն կէտ առ կէտ որոշում է Հայաստանի սահմանները: Եթէ աշխարհագրութեան արդի գիտական լեզուով խօսենք, պէտք էասենք, որ Հայաստանը տարածւում է 35,5-ի և 46 արևելեան երկարութեան (Պարիզի միջօրիականով)

*) Ստրաբոնի ժամանակ Հայաստանի հիւսիսային կողմը Պարիադրէսն էր բռնում. Հայաստանը Կուրի բերաններով միացել էր Հիւրկանեան (Կասպից) ծովի հետ. նա զբաղւում էր Տաւրոսի հարաւային հոսանքը մինչև Տիգրիս գետը, ապա՝ հետևելով այս վերջին գետին հասնում էր Զաւ գետը: Հայաստանի կեդրոնական բարձրավանդակից բղխում են Եփրատի հրկու ճիւղերը. նա ծնունդ է տալիս նաև Տիգրիսի երկու եղջիւրներին: Հայաստանի հիւսիսային զրադիներն էին Աղւաններն ու Իւբները. արևելքից զրացի էին Մարերը, արևմուտքից՝ Կապադովկացիները: Սև ծովին տալիս է երկու գետ՝ Արևսն ու Գայլը: Երկրի կեդրոնն Արարատեան գաւառն է՝ այս կեդրոնը Կուրի և Տիգրիսի միջև կոչւում է Մեծ-Հայք:

և 37,5 ու 41,5 հիւսիսային լայնութեան միջև: Այս ընդարձակ տարածութեան կեդրոնը զբաղող լեռադաշտի համարեա թէ կէսը միջին բարձրութեամբ 1,500 մետր բարձր է ծովի մակերևոյթից:

Այսպէս՝ հայաստանի տեղը որոշելուց յետոյ հայերի բնաւորութիւնն ու պատմութիւնը հասկանալու համար անհրաժեշտ է համառօտ կերպով նկարագրել այդ երկրի լեռնագրութիւնը (orographie), ջրագրութիւնը, կլիման և բնական արտադրութիւնները: Քաղաքական բազմաթիւ դէպքեր ազդել կամ առաջ են եկել երկրի ֆիզիքական պայմաններից, որոնք Միջագետքի այրեցեալ գօտուց կեդրոնի հիւսիսային խստութիւններին անցնելով չափազանց տարբերւում են միմիանցից: Բացի այդ՝ հայ ժողովրդի բնաւորութիւնը, նրանք բերկապառակութիւնները, օտար արշաւանքներին դիմադրելը՝ նրա կղզիացումը եւրոպական քաղաքակրթութեան հանդէպ, կարճ՝ հայոց պատմութեան ամբողջ սօցիալական կողմը բացատրւում է աշխարհագրական այս պայմաններով: Աւելի շուտ այստեղ քան այլուր միջավայրը ստեղծել է այնպիսի ազդեցութիւններ, որոնց ենթակայ են ընդհանրապէս բոլոր լեռնական ժողովուրդները: Թւում է, որ կատաղի ու խոհեմ Հայաստանը իւր կամքովն է կղզիացել և ուրիշներին թողել օտարների համար չափազանց հեշտութեամբ մատչե-

լի դաշտերը կամ ծովափնեայն գետափնեայ տեղերը շահագործելու վտանգն ու օգուտը: Նա Պոնտոսի բնակիչներին, մօշէներին (լագերը բռնել են սրանց տեղը), կոխքիսցիներին (վրացիները սրանց ձուլել են իրանց հետ) էր թողել Սև ծովի եզերքները, որոնց գետերը, մանաւանդ Փազը (արդի Ռիօնը), Եագօնի որսած ոսկեզեղմ հօտերն էին արբուցանում. մարերին ու պարսիկներին էր թողել Կասպից ծովի եզերքները, որոնց նաւթի աղբիւրներն անընդհատ մրցակցութեան առարկայ էին, ամենքը աշխատում էին ձեռք բերել առանց ծախքի վառուղ այդ հեղուկը, որը չափազանց օգտակար էր կրակի պաշտամունքի համար. նա ասորեստանցիներին ու մակեդոնացիներին, պարթևներին ու հռոմայեցիներին էր թողնում Միջագետքի փարթամ մրջակութիւնը. մարդկանց կողոպտիչ հակումները բռնող Միջագետքը ցորենի մշտապէս լիքը մի ամբար էր, անընդհատ պատերազմների մի հսկայ դաշտավայր: Հայաստանը իւր բռնած այս դիրքի շնորհիւ էր, որ կատարելապէս չխորտակեց ինչպէս խորտակեցին իւր դրացի պետութիւնները: Երբ պատահաբար Հայաստանը ցանկութիւն էր ունենում մրցել իւր դրացիների փառասիրութեան հետ՝ նա երբեք յետ չէր մղւում իւր լեռնոտ դիրքերից, ուր բնակւել, ուժեղ կերպով դէրք էր բռնել: Հայաստանը թէև

երբեք չկարողացաւ Ասորեստանի կամ Պարսկաստանի փառահեղութիւնն ունենալ, սակայն՝ դրա փոխարէն նա դիմադրեց բոլորին, յամառօրէն զարգացաւ, օտտօմանեան կեդրօնական Ասիայում առաջդիմութեան նախակարապետը դարձաւ և կարողացաւ դիմանալ, ապրել մինչև մեր օրերը իւր էական յատկանիշներով, իւր բնաւորութեան էական գծերով:

Պէտք է նկատել, որ հայկական ամբողջ բարձրավանդակը, չնայած իւր բազմաթիւ անհարթութիւններին, կազմում է աշխարհագրական մի այնպիսի ամբողջութիւն, որը շատ նպաստաւոր է միատարր, համագգի մի ժողովուրդ կազմելու համար: Ոչ մի լեռնաշղթայ Հայաստանում այնպիսի դժւարանցանքի մի պատուար չի ներկայացնում ինչպիսին Ալպեան, Պիրինեան կամ Կովկասեան լեռներն են: Այսպիսով հաղորդակցութիւնը, որը ձմեռը շատ տաժանելի է, այնուամենայնիւ միշտ էլ տեղի է ունեցել առանց արհեստական աշխատանքների. մենք յետոյ կտեսնենք, որ հայերը հեշտութեամբ խուսափում էին թշնամիներից և չէին ցանկանում հռոմէական կամուրջների նման կամուրջներ ունենալ, որոնք նրանց աչքում միայն արշաւանքների դուռ կարող էին բաց անել: Նրանք ոտքով հեշտութեամբ անցնում էին գետերը, նոյնպիսի հեշտութեամբ էլ մագլցում էին ամեն տեղ բազմաթիւ խիստ

զառիվայրերը մինչև գագաթը. հայկական բարձրավանդակը շրջակայ ղրացի ժողովրդների առաջ ոչ մի անանցելի պատուար չունի. այս հանգամանքը նոյնպէս խիստ կարևոր է յետագայում մեր նկարագրած պատերազմները հասկանալու համար: Հիւսիսն ու արևմուտքը բազմաթիւ տեղերում մեղմ զառիվայրերով իջնում են դէպի Կուրի հովիտը և Կապադովկիան. արևելքը կազմում է Քիւրդիստանի բարձրավանդակների շարունակութիւնը. գալով հարաւին, չնայած նրա յանկարծակի իջածքին դէպի Միջագետքը, այնուամենայնիւ Տաւրոսը այն տեղ ամեն տեղից լայն է, և չի կարող մեծ արգելք լինել, այլ ընդհակառակն շատ հեշտութեամբ անցանելի տեղեր ունի արևելքում Զաւի ու Բօղան-Սուի միջոցով, իսկ արևմտեան կողմում Տիգրանակերտի և Բաբերդի միջև: Հայաստանի համար այս դիրքը հնարաւորութիւն էր ստեղծում երբեմն իւր սահմաններն ընդարձակելու և երբեմն էլ քաղաքակրթութիւնների ազդեցութիւններին ենթարկելու:

*) Լինչի կարծիքով միմիայն Մերձան-Մուղուր-Դաղը, որը եզերաւորում է Երզնկեանի դաշտը և յինարան դառնում Դերսիմի բարձրավանդակին, կարող է իսկապէս պատուար կոչուել:

II

Որպէսզի ընթերցողի համար պարզ կերպով պատկերանայ Հայաստանի Փիղիբական բնոյթը մենք խիզախում ենք մի համեմատութիւն անել, որը անշուշտ բոլոր կէտերով նման չէ, բայց՝ կարող է ազդեցիկ, համոզեցուցիչ լինել: Այս երկիրը, որը համարեա թէ ամբողջապէս լեռնոտ է, իւր կլիմայական պայմաններով ու բնական հարստութիւններով նման է Զւիցերիային, միայն թէ ալստեղ ամեն բանաւելի խիստ, աւելի ծայրահեղ է. Արարատն աւելի բարձր է քան թէ Մօն-Բլանը. Վանայ և Ուրմիոյ լճերը Կօստանյայի և Ժընէվի լճերից աւելի մեծ են. սրա կատարելապէս հորիզոնական դաշտերն այնքան ընդարձակ են, որ հելվետական փոքրիկ հովիտներին անծանօթ է այդպիսի ընդարձակութիւն. ձմրան խստութիւնը զգալի չափերով աւելի է շեշտւած քան թէ ալպեան շատ կանտօններում. այստեղ խիստ ցրտից, եղեամներից յանկարծ եղանակը փոխւում է այրող ամառւայ, միւս կողմից՝ արևադարձային գաւառները և վեց ամիս շարունակ սառույցներով պատած դաշտերն այնքան մօտիկ են, որ Եւրոպայում ոչ մի տեղի հետ չի կարող համեմատուել. Զւիցերիան չի կարող Հայաստանի նման 1,500 մեթր բարձրութեան վրայ ցորեն հասցնել, իսկ 2,000

1004
16894

մեթրի վրայ՝ գարի, կամ երբ լեռները փոքր ինչ ցածանում են բամբակ, գինի, բրինձ, շերամ և ամեն տեսակ պտուղներ տալ. բայց՝ սրա փոխարեն Ալպեան լեռները գեղազրական, պարզ ու վեհ են, իսկ Արևելքի լեռները՝ մերկ ու տըխուր: Ինչպէս որ Զւիցերիան Եւրոպայի ոռոգման սխտեմի գագաթն է այնպէս էլ Հայաստանը տիրապետում է Ասիայի ամբողջ արևմտեան մասին: Եթէ Միջերկրական ծովից սկսած մօտաւորապէս Եւրոպայի չափ մի տարածութիւն վերցնենք այս երկրում, կտեսնենք, որ նա այնքան ակունքներ ունի, որ շրջապատի բոլոր հովիտներին առուններ, գետեր է տալիս: Ինչպէս Ալպեան լեռների զանգւածներում այնպէս էլ Հայաստանում ձիւնը շատ առատ է. Բիթլիսում (Բաղէշ) յունվարին ձիւն խորութիւնը հինգ մեթրի է հասնում. Արարատի յաւիտենական ձիւն հաստութիւնը առնւազը 610 մեթր կլինի. Կարնում 1902—1903-ի ձմրան հարիւրաստիճան ջերմաչափն իջաւ մինչև—39 աստիճան և մի քանի ամիս տաքութիւնը մնաց—10-ի և—20 աստիճանների՝ միջև չնայած որ արևը յաճախ փայլում, բայց՝ անկարող էր օդը տաքացնել: Ձմեռը բոլոր դաշտերը սպիտակ են, միայն հեռաւոր գիւղերն են, որոնք մի-մի սև կէտեր են երևում. քաղաքների մեծ ճանապարհները ծածկւում են սառոյցի հաստ շերտով, որը

երբեմն մի մեթր խորութեան է հասնում. քիչ գործածական ճանապարհներն ամբողջապէս լեցւում են տեղաւորներից թափւած ձիւնով. այլևս ոչ ձիւն են երևում և ոչ ջրիներ, միմիայն ուղտերի կարվաններ, այդ էլ շնորհիւ ուղտերի երկար մագերին, որով ամեն տեսակ խստութիւնների կարողանում են դիմադրել. երբեմն էլ եզներ են երևում, որոնք քաշում են թեթև սահնակներ: Այստեղ մենք տեսնում ենք, որ ծովային կամ հասարակածային կլիմայ ունենալու համար բաւական չէ, որ մի երկիր մօտիկ լինի շատ ծովերի կամ լայնութեան մի այնպիսի աստիճանի վրայ գտնւի, որ զգալի չափով մօտենայ արևադարձային գօտուն. Հայաստանում լեռներն իրենց ուղղութեամբ դիմադրում են արևմուտքի և հարաւի քամիներին, միայն հիւսիսային քամիները (bis) ազատ են այստեղ. Վրաստանը Հայաստանից աւելի հիւսիս լինելով հանդերձ նրա չափ ցուրտ չէ, որովհետև Կովկասը մի անթափանցիկ պատւար է հիւսիսային քամու (աքվիլոնի) առաջ. միևս կողմից՝ Հայաստանի միջին բարձրութիւնը շատ է գերազանցում թէ Վրաստանից և թէ Զւիցերայից, ուստի և առաջ է գալիս ցամաքային ճառագայթացում (radiation), այդ պատճառով էլ պարզապէս ցամաքային կլիմայ, մի կլիմայ, որ իսկապէս ասած բարեխառն է, ամառը տա-

ժանելի չէ, արեւը չոր ու այրող լինելով հանդերձ թեթեւ է*։ Այս հանգամանքի շնորհիւ երկիրը չափազանց պտղաբեր է և նրա առողջապահական պայմանները գերազանցում են Արեւելքի բազմաթիւ այլ վայրերից։ Եթէ մեր այս համեմատութեան տարբերութիւնները հաշիւի չառնենք Հայաստանը ուղղակի մի Զւիցերիա է։

Սակայն երկու տարբերութիւններ կան, Զւիցերիան լաւ անտառներով պատած է, իսկ Հայաստանն ունի լաւ դաշտավայրեր։ Մշի, Կարինի, Երևանի, Խարբերդի, Բաօնի, Բաբերդի և Խնուսի մեծ դաշտավայրերը մշակութեան համար ահագին ընդարձակ տարածութիւններ են ներկայացնում չհաշւած դեռ Արաքսի և Տիգրիսի լայն հովիտները։ Նոյն է ներկայացնում նաև ոռոսական սահմանի և Ալեքսանդրօպօլի միջև անդրկովկասեան բարձրավանդակը։ Այս պատճառով էլ բնակիչները ստիպւած չեն բացառապէս խաշնարածութեամբ պարապել, նրանք լայն չափերով մշակում են հացահատիկներ, բամբակ, ծխախոտ, կնձիդ, կանեփ, կտաւատ, բանջարեղէններ և աւելի խորը ձորերում՝ խաղող, թուփ,

*) «Լաւ եղանակ Հայաստանում յունիսից մինչև սեպտեմբերն է։ Բուսականութիւնը այստեղ ուշ է աճում»։ Թ. Ռայնախ։

Պէտք է անելացնել, որ գարունը անձրևային է, իսկ աշունը՝ մեղմ, մայրամիջաց

բազմաթիւ պտղատու ծառեր, որոնք մեծ մասամբ Կասպից ծովի և Եփրատի միջև գտնւած գաւառներում են ծագում ստացել և ինչպէս ամեն բան, սրանք էլ պահպանել են իրանց բնական դրութիւնը փոխանակ հետեւելու մշակութեան այն պրօկրէսին, որ առաջ է եկել Եւրոպայում։ Սրա փոխարէն Զւիցերիան իմաստուն կերպով պահպանել կամ վերականգնել է իւր անտառները, որոնք իրան կանոնաւոր կերպով ջուր են մատակարարում։ Հայաստանում, ոռոսական, պարսկական և Միջագետքի սահմանագծերում իսկապէս ասած դեռ ուժեղ թէ թոյլ կերպով աճում են մայրի, կաղնի, կնձի, երբեմն ընկոյզենիներ, իսկ հեղեղատներում՝ ուռի և կախամաղի, սակայն՝ համարեա թէ ամբողջ կեդրօնը և լեռների շատ լանջեր, զառիվայրեր զուրկ են անտառներից, ծառերից։ Զիկանա-Դաղից ըսկած, ուր Տրապիզօնի ճանապարհը կտրում է Պոնտական երկրորդ Ալպերը, մինչև Արարատը և դրանից էլ այն կողմը ամբողջ շաբաթներով կարաւանը ճանապարհներ է կտրում, բայց՝ չի պատահում մի ծառի կամ նոյնիսկ մի թփի՝ չընայւած, ի հարկէ, քաղաքների հազւագիւտ պարտէզները։ Եթէ այստեղի դաշտերը ծածկւած չլինէին հնձով, իսկ լեռների քիչ ժայռոտ կողերը—սրանք փոշիով, մանրախիճերով և բուսահողով (հասած) ծածկւած են—չներկայացնէին

ոչխարներ սնուցանող մինուրը մարգագետին, —
այն ժամանակ մարդ կկարծէր թէ երկնքի կը-
րակով այրւած մի անապատում է գտնուում: Այս
մերկութիւնը, որի պատճառով երկիրը ամբող-
ջապէս դարձել է մռայլ ու խոժոռ, առաջ է ե-
կել բացառապէս բնակիչների անհեռատեսու-
թիւնից. նրանք անխնայ կոտորատում են մա-
տաղ ծառերը և նրանց արմատները հարիւրա-
ւոր սայլերով տանում են քաղաքներ ծախելու.
կառավարութիւնն էլ ոչ մի անկիւն չի պահպա-
նել այս աւերածութիւնից: Այսպիսով մի աղե-
տալի հարւած են հասցրել ջրերի ըէժիմին, կլի-
մայի մեղմութեան և հողի պտղաբերութեան:
Ժողովուրդը ստիպւած է կենդանիների թրիքով
տաքանալ, որը այլևս չի կարող ծառայել իբրև
հող պարարտացնող նիւթ: Փայտը այնքան թան-
գացնել է, որ հարուստները միայն կարող են
գործածել. այստեղ քարածուխը առատ է երևում,
սակայն՝ չեն կարող շահագործել, որովհետև ին-
տուստրիան այս երկրում նոյնքան է զարգա-
ցել որքան հասարակ վայրենիների մէջ:

Բոլոր աշխարհագրները (géograph e) դիտել
են, որ հնագոյն ժամանակներից սկսած չորա-
ցումը անընդհատ զարգացման մէջ է եղել այս
երկրում. և այդ անշուշտ երկրի յարատև ան-
տառազրկութեան պատճառով: Չների հալւելուց
առաջացած հեղեղներին յաջորդում են չորու-

թեան ամիսները երբ ջրերի համարեա թէ բո-
լոր հոսանքները չորանում են, այնպէս որ գար-
նան անհնարին է լինում ճանապարհորդել, իսկ
յունիսից մինչև հոկտեմբերը կարելի է ամբողջ
Փոքր-Ասիան, Միջագետքը, Աղւանստանից մին-
չև Հնդկաստան շրջագայել ու բոլոր ջրերը ոտ-
քով անցկենալ. ոչ մի տեղ ջուրը չի հասնի մին-
չև գօտիդ: Առնւագն մինչև Եփրատի և Տիգրի-
սի խորութիւնները այնպիսի հուններ և ժայռեր
են գտնուում, որոնք աւելորդ են դարձնում կա-
մուրջների գոյութիւնը: Այն ձորերը, հովիտ-
ները, որոնք փորւել են այս ջրերի գօրեղ հո-
սանքից, վկայում են, որ սկզբներում երկրի
ջրերը մեծ ծաւալ են ունեցել: Որ հնում այս
ջրերը շատ աւելի հարուստ ու կանոնաւոր են
եղել այդ մասին բաւական է իբրև վկայութիւն
յեշել Ասորեստանի և խալդական քաղաքա-
կրթութիւնները, որոնց հսկայական անունդ էին
մատակարարում ջրելով դաշտերը և քաղաքնե-
րի պէտքերին բաւարարութիւն տալով. *) միայն

*) Ե. Ռեկլին կարծում է, որ Եփրատի ափերին
գտնւած ծաղկած անթիւ քաղաքների ոչնչացումը և
Միջագետքի պրօկրէսիվ անբերութիւնը պէտք է
վերադրել Եփրատի ջրերի պակասելուն. նա նկատում
է, որ Եփրատի և Տիգրիսի միացեալ գետաբերանում ջու-
րը հնում իւր ծաւալով բոլոր գետերից աւելի շատ էր,
նոյնիսկ Նեղոսից, Ինդոսի և Դանուբի միջև: Սակայն՝
այժմ այդպէս չէ. չի կարելի ուրանալ և այն, որ այն

այս տեղից կարելի է ամենայն ճշտութեամբ եզրակացնել, որ հայկական լեռների անտառազրկութիւնն այս երկրից բոլոր գետերի չորացման ամենամեծ պատճառն է եղել: Մենք աւելի ուղղակի, ճշգրիտ ցուցմունքներ ունենք, որ հնագոյն ժամանակներից սկսած ձիան և անձրևի գալը պօկրէսիվ նւագման է ենթարկւել. և այդ անշուշտ միևնոյն վերոյիշեալ պատճառով: Ստրաբոն յիշում է, որ Նիքրատ—այս բառը նշանակում է իսկական գէտ—և Տիգրիս գետերից առաջինն աւելի էր ջուր բերում իր խառնարանը (արդի Շատ-էլ-Մրաբ) քան թէ վերջինը. այն ինչ այժմ հակառակն է. և այս ցոյց է տալիս, որ Հայաստանը, ուր սնւում է Նիքրատը, աւելի է չորացել քան թէ Միջագետքը: Միւս կողմից՝ Ստրաբոն մի ուրիշ ե-

հրաշագործ ջրանցքները, որոնցով ասորեստանցիներն ու քաղաքացիները (խալդեերը) բեղմնաւորեցին Միջագետքը, չը կարողացան կանոնաւորել գետերի հոսանքները. այս ջրանցքների—որոնք արդի դարում Հալապանեցին— ոչնչացման պէտք է վերագրել գետերի բնական տաշտերի անընդհատ տակն ու վրայ լինելը. Ռելիւն Տիգրիսի վրայ գտնւած Բասորանի և Նինվէի վերջնական կործանումը վերագրում է տաշտերի այս փոփոխութեանը. սակայն այս երևոյթն էլ ապացուցանում է մեր եզրակացութիւնը—ջրանցքները ահագին քանակութեամբ ջուր էին տալիս մշակութեան համար, իսկ այժմ ջրի քանակութիւնը նւազել է:

րևոյթ նկարագրելով մեզ դարձեալ միևնոյն եզրակացութեանն է բերում. հիւում Սորսէն (Սորգիանք, Դերսիմի հարաւային կողմում) կոչւող գաւառում այնպիսի ծայրահեղ չափերով ու յանկարծակի էր ձիւն գալիս, որ ճանապարհորդները մի երկար ձող էին տանում հետերնին, որպէսզի եթէ ձիւն հիւսնի տակ թողւելու լինեն կարողանան այդ ձողով իրենց գերեզմանից մի ծակ բաց անել օդ ստանալու և իրենց կեանքի փրկութեան համար անցորդներից գթութիւն, օգնութիւն հասցնելու: Չնայած հենց այժմ էլ ոտաւոր անխոհեմ ճանապարհորդը Հայաստանի ամենաբարձր անցքերում, ինչպէս Ալպեան լեռներում, կարող է բռնւել մահաբեր մրկից, բայց և այնպէս ոչ մի տեղ մարդ ստիպւած չէ այս աստիճան նախազգուշութիւն բանեցնել. սրանից ազատ կերպով կարելի է եզրակացնել, որ ձիւն քանակութիւնը զգալի չափերով նւազելէ, որովհետև անտառների գազաթներն այլևս չեն նպաստում այդ բանին: Թունդ ձմեռ ժամանակ պարսիկ և թուրք կաւովանապետները շարունակում են ամառայնման ճանապարհորդել մեծ ճանապարհների վրայով լեռնային կածանները բաց անելով. միայն Ձիկանայի մօտ գտնւած Վափուկի պարանոցում և Դէվէ—Բօյունում, Բայազիդից վերադառնալիս, երբեմն ուղտերը ընկճւում են. այն էլ ոչ

թէ փոթորկի ուժից, այլ՝ աւելի շուտ ցրախցերը ձիան մի բարակ սաւան պատում է երկրի երեսը՝ այն ժամանակ ամեն տեղ գիւղացիները առանց վախի երթեկեկում են գիւղերից բաղաձայն եղներով կամ ձեռքով քաշուող սահնակներով. միայն Բիթլիսումն է, որ իբրեւ բացառութիւն ձիւնը շատ խորն է լինում և այդ պատճառով էլ ոչ մի կենդանի չի կարող դուրս գալ, քայլել ձիան վրայ:

Մնացած միւս բոլոր կէտերում հին աշխարհագրների նկարագրութիւնները համապատասխանում են երկրի արդի վիճակին: Հայաստանը բնականաբար հարուստ է մնացել կենդանիներով, քարածուխի, նաւթի, արծաթի, պղնձի և երկաթի հանքերով, ջերմուկներով. իւր ժայռոտ լանջերը շինութեան համար ամեն տեսակ նիւթեր են պարունակում, որոնց թւում նաև մարմարին և պորփիր. դժբաղդաբար դարել են այս բոլոր հարստութիւնները շահագործելուց: Սա մի աւետեաց երկիր է, որ կարող է բոլոր օտարների ցանկութիւնները գրգռել, սակայն՝ ինդուստրիայի համար անպտուղ է մնացել բնակիչների անտարբերութեան պատճառով. Աղեքսանդրի, հռոմայեցոց, արաբների և նոյնիսկ տաճիկների թագաւորութեան նման մեծ պետութիւնները միայն կարողացան օգտուել հանքային այս հարստութիւններից. հայերը մի քիչ

հետեւելով մեծ պետութիւնների օրինակին քրիստոնեայդառնալուց սկսած մինչև միջին դարու կիսերը օգտւեցին հանքային այս հարստութիւններից և բազմաթիւ գեղեցիկ եկեղեցիներ շինեցին: Մետաղագործութիւնը միշտ էլ աչքից ընկած է եղել, միայն աշխարհակալ միապետներն ազահօրէն ձգտել են սպառել ոսկու և արծաթի հանքերը (ոսկու հանքերը իսկապէս դատարկ են, իսկ արծաթին այլևս զուտ արծաթ չեն տալիս): Կարող է պատահել, որ հների շահագործած այդ հրաշալի հանքերն աւելի կամ պակաս չափով առասպելական գոյներով են նկարագրւած, սակայն՝ պէտք է նկատել, որ անցաւսր աշխարհակալները միայն երեսն են սպառել, իսկ տակը մնում է, ուր անկասկած ոչ պակաս հարստութիւն կայ թագնւած և մատչելի է միայն արդի գիտութեան միջոցներին, որովհետև միայն նրանք կարող են հանքերի երակները գուշակել, մեքենաներով գետնուղիներ (galerie) բաց անել և զանազան գործիքներով զտել հանքը: Միւս կողմից՝ բազմաթիւ վայրերում ածուխը, նաւթը, երկաթը դուրս են եկել գետնի երեսը, բայց՝ ոչ ոք չի մտածում շահագործելու մասին, նամանաւանդ կառավարութիւնը, որն իրան է վերապահել սեփականատիրութիւնը և շահագործելու համար օտարներին յանձնում է միմիայն կորստաբեր, վնասեցնող պայմաններով:

Օդի մի ծայրայեղ դրութիւնից դէպի միւսն եղած փոփոխութիւնները, տատանումները և նոյն իսկ չորութիւնը բնորոշում են միմիայն Հայաստանի կեդրոնական մասը, որ երկրի մակերևոյթի կիսին հաւասար մի լեռնադաշտ է:

Այստեղ գետերն իրանց հոսանքի մեծ մասով անպէտք են երկրի ոռոգման համար, որովհետեւ նրանք գահավիժւում են ևսեղմւում այնպիսի ժայռոտ զանգւածների մէջ, որոնց բարձրութիւնը ուղղակի, վերից վար չափելով երբեմն հինգ հարիւր մեթր է, ինչպէս Եփրատի ափերն են երբ այդ գետը վար է իջնում Երզնկեանից. ճանապարհներն էլ շարունակ չեն կարող հետեւի գետերի եզերքներին. գետերի շորացած տաշտերն են, ինչպէս Ճարոխին և ուրիշ զանազան հեղեղներին, որոնք միայն ամառ ժամանակ բազմաթիւ գաւառներում ծառայում են իբրեւ ճանապարհներ: Այսպէս՝ Եփրատի վերին, արևմտեան ճիւղը՝ Կարա-Սուն Հայաստանում միայն երկու կամ երեք դաշտ է ոռոգում, իսկ նրա ներքին, արևմտեան ճիւղը՝ Մուրատ-Սուն աւելի օգուտներ էր տալիս, որովհետեւ աւելի երկար է. սակայն՝ ընդհանրապէս նա էլ միևնոյն բնոյթն ունի: Չնայած որ գետերը այսպէս կղզիացած են մշակելի հողերից, բայց՝ նրանք դարձեալ պատճառ չեն այս երկրի պտղաբերութեանը. Հայաստանում լեռներից անթիւ

առուներ են հոսում, որոնք սովորաբար մի քիւլօմեթր երկարութիւն ունին. սրանք հիւնալի ժարգագետիններ են բուսցնում հեղեղատներում. սրանք են, որ ջրաղացների անիւները դարձնելուց յետոյ պատրաստւած առուներով, ջրանցքներով գնում են դաշտերը ոռոգելու:

Ֆիզիքական և կլիմայական այս բեժիմը վարկենապէս փոխւում է, երբ մարդ կեդրոնական այս բարձրավանդակի աստիճաններից վար է իջնում: Հետեւելով այս բարձրավանդակի իջւածքին անցնում ենք Մուրադ-Սուի մանրախճերով ծածկւած երկար ճանապարհը սկսած Ալա-Դաղից, որտեղից-Արարատից ներքև-սկիզբն է առնում այդ գետը. այնուհետև արդէն Բալուից սկսած մինչև իւր խառնարանը Մուրատ-Սուն տարածւում է մի շարք բուսակարութեամբ փարթամ ձորերի մէջ, առանձնապէս Խարբեղի շրջականերում, ուր բուսականութիւնը որոշչափով տաք երկիրներին է նմանում: Միքիչ ներքև Տաւրոսը աղեղնաձև կտրւում է, որպէսզի ճանապարհն բաց անի այս գետին, որի ջուրն արդէն կրկնապատկւած է լինում այս երկու ճիւղերի միացումով: Այս պատճառով էլ Հայաստանի կլիմաներից որոշւում է բոլորովին առանձնայատուկ մի մաս, որովհետև դէպի Միջերկրական ծովն ուղղւած ջրերն ու բամբիւնները այս կէտից սկսած փոխւում են իրենց ընթացքը, դէ-

պի Աղէքսանդրէտի ծոցը և Կիպրոս կղզին բռնած Հանապարհի ամենամեծ մասը անցնելուց յետոյ, յանկարծ ժուռ են գալիս ու գնում, թափւում են Պարսից ծոց։ Այսպիսով տէմպերատուրայի, բուսական թագաւորութեան, դրանից հետևող աշխատանքի տեսակի և հետևաբար բնակչութիւնների բնոյթի համար զգալի չափով տարբերութիւն է առաջ գալիս Փոքր-Ասիայի այն երեք գօտիների միջև, որոնց մասնակցում է Հայաստանը։ Ծովի եզերքներում և այն հովիտներում, որոնք բաց են ծովային մեղմ քամու առաջ, ինչպէս Կուր գետինն է, պարզ կերպով միջերկրական կեանքի գծերն են հանդէս գալիս։ հայկական բարձրավանդակի վրայ, Պարի աղբսից մինչև Տաւրոսը այս կլիմայի և ցամաքայինի խառնուրդն է, վերջապէս մարդ իրան զգում է Միջագետքում, կեդրոնական Ասիայում, շատ հեռու ծովերից։ Արդ՝ այսպիսով դէպի աւելի ու աւելի կղզիացած վայրերն առաջանալով տեսնում ենք, որ բնակիչներն աւելի են արևելցիներ դառնում առանց ուսմանիզմի և հելլենիզմի խառնուրդի։ Այսպիսով հայաստանը կազմում է մի անցում երկու խիստ ծայրերի միջև։ Հայաստանը նախանձախնդիր լինելով հանդերձ իւր ինքնագոհ կղզիացման այնուամենայնիւ եւրոպական քաղաքակրթութիւնների համար իբրև ժամադրավայր է ծառայում, այնպէս

ինչպէս ընդունում է ծովի հովերը և կեդրոնական բարձրավանդակի փոթորիկները։ հայաստանն այսպիսով կարծէք թէ բնութիւնից բաժանող կամ պարզապէս հաշտեցնող դեր է ստանձնել։ Ի նկատի առնելով միմիայն քաղաքական ամենախոշոր դէպքերը, որոնց արձագանքները միայն նկարագրել են հին մակերևոյթային պատմիչները առանց խոր պատճառները որոնելու, Ժողովրդի ձայնը լսելու, տեսնում ենք, որ Հայաստանն եղել է այն ինչ որ հիմա «զսպանակ պետութիւն» ենք անւանում։ նա մեռցրել, ոչնչացրել է իւր դրացի մեծ հակառակորդների բաղխումները, որով ինքն էլ չի կարողացել զարգանալ իւր ընդունակութիւնների և ձգտումների համաձայն։ Սակայն՝ եթէ ուզում ենք որոնել և հասկանալ հայերի ոգին, նրանց ձգտումները կտեսնենք, որ նրանք միշտ էլ ծաւալի են եղել նիւթական շահի, մտաւոր, ու բարոյական այն լոյսին, որը կարող էին ձեռք բերել իրենց շրջապատից։

Հնում հայերն ընդունեցին արևելեան զանազան կուլտուրաների ոգին ու ձևերը, միաժամանակ դրա հետ աշխատեցին խառնել յունական արւեստի նոր ստեղծագործութիւնները. և այդ կատարեցին ոչ այնքան յաջողութեամբ որքան լաւ նախաձեռնութեամբ։ Մեր դարում կենտրոնական Ասիայում միայն հայերն ընդունեցին քրիս-

տոնէութիւնը, որը նրանց համար որոշ չափով յոյն—լատինական գաղափարների յաղորդիչը դարձաւ. դեռ այժմ էլ մենք տեսնում ենք, որ հայերն անընկճելի կերպով յարած են իրենց աւանգուծիւններին, ինչպէս այդ էական յատկանիշն է արեւելեան ժողովուրդների. հայոց եկեղեցու նորագոյն պատմութիւնը ցոյց է աւելիս, որ նրանք մտքի պրօկրէսին հակառակ են և բարբերի (moeurs) յեռեկից են գնում, իսկ այս բանի աւելորդ օրինակն Եւրոպայի քրիստոնէական դպրոցն է տւել: Ուրեմն՝ հայ ազգը կարելի է դասել նրանց թւում, որոնք սեփական քաղաքակրթութիւն չեն ստեղծել թէև, սակայն՝ ունեցել են խառնուրդ, փոխառած մի քաղաքակրթութիւն:

Հայաստանի ներսում նոյնիսկ՝ խոր հովիտներն ու բարձր բարձրավանդակները կլիմայական տարբեր բնոյթներ ունեն, որի պատճառով առաջ է գալիս առանձին տեսակի մշակութիւն և կեանքի առանձին եղանակ: Կարելի է երեք գլխաւոր գօտիներ որոշել—կետրոն*), հարաւ և հիւսիս-արեւելք:

*) Այս և հետեւեալ երկու բառերը մօտաւոր ճշտութեամբ են գործածւած. այսպէս՝ կետրոնական բարձրավանդակը տարածւում է դէպի հիւսիս ընդգրկելով Արաքսի բարձրագոյն հոսանքը, այնուհետև անցնում է Կարս գաւառից էլայն կողմը, ուր Երզրումի ցրտի նման խիստ ցրտեր են լինում: Այստեղ մենք միայն ընդհանուր ծանօթութիւններ ենք տալիս:

Կեդրոնը ներկայացնում է մի ժայռոտ մակերևոյթ, որը ընդհանրապէս նպաստաւոր չէ երկրագործութեան համար: Այս մասը նրստակեաց բնակչութիւն չէր ունենայ եթէ չլինէին նրա ընդհանրապէս նեղ անթիւ հովիտները և յաճախ չափազանց ընդարձակ դաշտերը, որոնք կանոնաւոր կերպով ոռոգւում են: Ահա սրանք են, որ կերակրում են չափազանց նօսր կերպով ցրւած գիւղերի և մի քանի ոչ—բազմամարդ բաղաքների բնակչութեան երեք չորրորդական մասը. այս պտղաբեր հողերը տալիս են ցորեն, որ գործ են ածում համարեա հաւասար չափով թէ իբրև հաց և թէ իբրև կերակուր, կենդանիների համար գարի և ձրմեռւայ համար՝ խոտ. քաղաքների կեդրոնների շրջականերում, ուր ապրում են ապրանքների տեղափոխութեամբ, կարելի է նաև բանջարեղէնի մշակութիւն անել: Ամբողջ մակերևոյթի համարեա թէ ութ տասերորդական մասը հրաբխային կլոր բլրակների, ժայռոտ լեռնասնարների, բոլորակ բլուրների, լեռների հանդիպագօտիների և մանրախիճային ու մոխրային լեռնասնարների մի անսահման, անորոշ շարք է. այս վերջին բարձրութիւնները չափազանց տարբեր են այն գագաթներից, որոնք առնւազն մակերևոյթի մի երրորդական մասն են զրաւում և բացարձակապէս անբերրի են.

այս բարձրութիւնների տեսքը նոյնպէս շատ տխուր է, նրանց ստորոտները կմախքի պէս լերկ են դարձել, ոչ ծառ կայ և ոչ նոյնիսկ մի մացառ. բայց՝ ընդհանրապէս վերցրած սրանք ոչ ժայռեր են ներկայացնում և ոչ էլ լաւաներ. ճանապարհորդը այս բարձրութիւնների մէջ հազազելւոյ կէտերում այնպիսի գեղազրական հատւածներ կգտնի, որոնք իրան հիացմունք կպատճառեն. նա կարող է հանգիստ գտնել այստեղի այդ հատւածների այրերի և ատամնաձև կտրւածքների հովանու տակ, թարմ ջրերի քիչ կանաչ ափերին:

Այս միակերպութիւնը, որ հեռւից դիտելիս դառնում է մի վեհաշուք տեսարան, երկրի հարստութեան գլխաւոր պատճառներից է. քիչ են խոշոր բարերը, իսկ մշակելի, փափուկ հողը՝ շատ. նա միակերպ տարածւած է փոքրիկ խճակոյտերի միջև և ինքնաբոլոր կերպով խոտ հասցնելու համար ամենալաւ հողն է. այդ խոտը նուրբ է ու չոր և ձմեռ ժամանակ ձիւնն բարակ շերտի տակ թուխս նստելով՝ ամենալաւ կերպով սնուցանում է տաւարներին, ոչխարներին. այսպիսով ամբողջ երկիրը զարնան վերջից սկսած մինչև աշնան միջերը ծածկւած է խոշոր դմակ ունեցող ոչխարների, սև այծերի և բաւականին լղար կովերի հօտերով: Տեղացիները հազազելւոյ դէպքերում են մի քիչ

միս գործածում. ոչխարները ահագին քանակութեամբ արտահանում են, իսկ կովերը տալիս են խիստ մեծ քանակութեամբ կաթ, որից պատրաստում են մածուն և չափազանց անհամ պանիր. մածունը հացի հետ միասին ժողովրդի էական սնունդն է: Միթէ սա յատկանիշ չէ դեռ բարբառոս մնացած ժողովրդների, որոնք չեն կարող նոյնիսկ իրենց բնական հարստութիւններից բաւարար չափերով օգտուել: Անշուշտ խելացի և ինտէնսիվ մշակութեան միջոցով կարելի էր այդ դաշտերից և հովիտներից եռապատիկ աւելի արդիւնք ստանալ. ողորմելի է այդ տեղի աղքատ հնձի տեսքը և այն արօրը, որով այս հունձն են պատրաստում. նա մի հասարակ երկար փայտ է ծայրին հագցրած երկաթեայ մի կարթ, ճիշտ նախնական ասորեստանցիների արօրի նման: Որքան որ խորը փորեն այս հողը այնքան աւելի է արդիւնք տալիս առանց ուրիշ ծախքերի և աշխատանքի: Անհրաժեշտ է, որ այս երկիրը նորից անտառներ ունենայ, որպէսզի ոռոգումը կանոնաւորւի և ժողովուրդը վառելիք ունենայ հողի տակ թաղւած քարածուխի հետ միասին. տաւարների աղբը այն ժամանակ կծառայի հողը պարարտացնելու միջոց: Այս մասին տաճիկ կառավարութիւնը մազի չափ անգամ հոգս չի անում: Այս շրջանի քաղաքները մեծացած գիւղեր են, որոնք, ինչպէս և այդտեղի գիւղերը

նմանութեամբ են խորանարդ ժայռերի կոյտերի, փոշիով ու մոխիրով ծածկւած, միապաղաղ կերպով գորշ և կարծեա թէ բորսաութիւնից կըրծւած. սրանք ունենում են իրենց հարթ տիրասները, ուր ամառ դեղին խոտ է բուսնում եւ թէ աթար չի դիզւած այդ տեղ կամ խոտի խրցեր չեն փռւած արեւի տակ չորանալու համար: Միայն մինարէները և հազւագիւտ ունեղ պարտէզների մէջ այս ու այն կողմ բուսած մի քանի կաղամախները տեղ-տեղ խանգարում են երբեմն փարթամ այս փոքրիկ քաղաքների միօրինակ մեղմադձութիւնը: Երկար օրեր ձիով ճանապարհորդող յոգնած դիտողի առաջ այսպիսի ընկճող, միօրինակ պատկեր է ներկայացնում արևելեան կողմում Բայազիդը, Մուշը, Բաղէշը, կեդրոնում և արևմուտքում՝ Բաբերդը (Էրզրումը*), Երզնկանը, Սըվազը: Միայն Բաղէշն է, որ լաւ կոփածոյ քարերից է շինւած: Հարաւային գոտում Մալաթիան իր արևմը-

*) Էրզրումը սկզբում Կարինի-որի անունով կոչւում է շրջակայ գաւառակը-մի փոքրիկ քաղաք էր. նա Թէոդոսիօպօլիս կոչւեց երբ Թէոդոս կայսրը այնտեղ մի բերդ շինեց, որը դեռ մինչև հիմայ էլ կայ. վերջապէս՝ նա Էրզրում անուն է ստանում Արգի մօտ գտնւած մի ամրոցի անունից, որին կոչում էին Արգ Ռումի: Էրզրումը կոնստանդնուպոլիսի ցածր թաղում 1,920 մեթր բարձրութիւն ունի: Երզնկանը հայերի առաջին նշանաւոր քաղաքն էր, որտեղ Անահիտի տաճարը կառուցւեց, այդ ժամանակ կոչւում էր Էրեզ. նա շինւած է եւ փրատի մօտ 1,366 մեթր բարձրութեան վրայ (Ռեկ. լիւ):

տեան դիրքի շնորհիւ մի փոքր եւրոպական քաղաքի է նմանում իր կղմինդրեայ կտուրներով և բազմաթիւ լուսամուտներով, սակայն՝ Քղին, Խարբերդը (հին Մամուրէթ-էլ-Ազիզ, շինւած աւելի քան 1,000 մեթր բարձրութեան վրայ), Տիգրանակերտը (սրա դաշտը Հայնիի լեռան բոլորովին մօտից չափելով հազիւ 900 մեթր բարձրութիւն ունի) և Սղերդը կեդրոնի քաղաքների տձև, թթւած կերպարանքն են ստանում: Բայց՝ մարդկանց ձեռքով շինւած այս քաղաքների տխրութիւնը նոյնպէս և Սղերդին, ուր շէնքերը նւազ չափով ասորեստանական ճարտարապետութեան աւանդական տիպն են վերարտադրում, փարատւում է բնութեան յորդառատ բեղմնաւորութեամբ: Լեռները տեղ-տեղ դեռ ծածկւած են ծառերով, որովհետև ձմեռը այս մասում այնքան էլ խիստ չէ. խոտերն այստեղ աւելի են բարձրանում շնորհիւ այն հանգամանքի, որ ձիւնը քիչ է և շուտ է հալւում, իսկ լեռնասանարները այլևս տափակ և քնկոտ կերպարանք չունին: Գալով հարաւային Եփրատի, վերին Տիգրիսի, Քղի-Սուի և Բօդան-Սուի հովիտներին՝ նրանք լաւ ոռոգւած և ծածկւած են քիչ հրաբխային բուսահողով. այստեղ արեւ փայլում է իր ամբողջ թափով, նոյնիսկ այրում է Տիգրանակերտի գաւառը, որն արդէն Միջագետքումն է գտնւում. այն ըն-

դարձակ տարածութիւնները, ուր տարածուած են Պարսից ծոցը թափւող երկու գետերի ջրերը, տաք քամիներ են ուղարկում դէպի այս կողմը։ Ալէքսանդրէտտի ծոցից այստեղ է հասնում Միջերկրականի խոնաւ շունչը, որը Տաւրոսի, Անտի Տաւրոսի և հայկական Տաւրոսի յղկած լանջերից անցկենալով, մաղւում, թարմանում է ու այս լեռներին թողնում ծծելու իր գոլորշիները։ Հայաստանի այս մասը նման է Սև ծովի և Միջերկրականի հրաշալի կողերին չհաշւած այն, որ երեք քառորդ մասով անտառներից զրկւել է կեդրոնական բարձրավանդակի կարիքներին բաւարարութիւն տալու պատճառով։ Նա Փոքր-Ասիայի պարտէզն է կազմում տալով հացահատիկներ, պտուղներ, բանջարեղէններ և բարեխառն կլիմաների ամենահարուստ ծաղիկները։ Եթէ օտարականն այս տեղի գինուց մի բանի բաժակ խմի իսկոյն կհասկանալ Նոյի յանկարծակի արբելը։ Եթէ փոքր չափով արւեստ գործադրւի կարելի կլինի աւելի պակաս ալիօհօլով և աւելի մաքուր գինի ստանալ։ Երբ եւրոպական երկրագործութիւնն (agronomie) ու պարտիզպանութիւնը (horticulture) կկրթեն այս հողը, կկատարելագործեն բուսական և կենդանական տեսակները, այն ժամանակ աշխարհի ոչ մի տեղ աւելի նուրբ բրինձ, աւելի համեղ դեղձ և սեխ, մսով ու բրդով աւելի հարուստ

ոչխարներ չի կարողանայ տալ։ Տիպերի ընտրութեան (selection) և մարդագետիւնների մշակութեան, ագնւացման միջոցով հեշտութեամբ կարելի է ոչխարի (ovine) և տաւարի (bovine) հրաշալի ցեղեր ստանալ։ Այստեղ մարդիկ այլ ևս չունեն այն կոշտ դիմագծերը, թախծալի կամ խորամանկ բնաւորութիւնները, որոնք բարձրավանդակի բնակիչների դէմքին տխրութիւն են դրօշմել։ Չհաշւած աւաղակ քրդերին, որոնք փճացնում, ապականում են այս փարթամ, ճոխ երկրամասը ոչ պակաս չափով որքան Հայաստանի արևելքը, ուր իրենք են բնակւած—տաճիկները, հայերն ու կղբաշները համարեա թէ բացառապէս կազմում են տեղական տարրը։ Արանց դէմքին արտացոլում է բնութեան ուրախութիւնը։ Արանց արտայայտութիւնն իրենց երկրի նման լիառատ և ուրախ կեանքի բաւականութիւնն է ցոյց տալիս, եթէ միայն բռնակալ իշխանութեան քմահաճոյքները չեն պղտորի այդ պարզութիւնը քրիստոնեաներին բնաջինջ անելու համար ստեղծած դաւադրութիւններով։ Եթէ ընթերցողը թոյլատրի մեզ մի նոր համեմատութիւն անել աւելի որոշ գաղափար կազմելու համար, մենք կհամեմատենք այս երկիրն ու իր բնակիչները Լուարի և Կարօնի հովիտների ու նրանց բնակիչների հետ, որոնք բաւականաչափ նման են չհաշւած վերջիներին

դիմագծերի գեղեցկութիւնն ու նախաձեռնութեան յանդգնութիւնը:

Երրորդ գօտին տարածւում է Վանայ լճի և Արարատի միջև, այնուհետև բարձրանալով դէպի հիւսիս՝ Արաքսի հովիտները և մեղմ գառիվայրերով դէպի Կուր գետն իջնող բարձրավանդակը իր լեռնային մասերով մասնակցում է առաջին գօտու կլիմային, իսկ իր լճերի և գետերի ափերով՝ երկրորդին: Այս գօտու կլիման միւս երկու գօտիների խիստ ծայրերի խառնուրդն է. այստեղ կան բաւականաչափ երկրորդական լճեր. Արարատի հարաւում Բալիք-Գեօլն (2,255 մեթր) է, որը ինչպէս իւր անունն է ցոյց տալիս, լիքն է ձկներով, իսկ հիւսիսում՝ Գէօգչէյը (1,933 մեթր), բացի այդ՝ կան ուրիշ շատ կարևոր ջրեր, որոնք կոպիտ ժայռերով են շրջապատւած. ահա մասամբ այս ներքին փոքրիկ ծովերին—որոնց ազդեցութիւնն աւելի ևս աճում է ոչ-հայկական, ամենաընդարձակ լճի՝ Ուրմիոյ լճի զրացիութեամբ—պէտք է վերագրել արևելքի և հիւսիս արևելքի բարեխառ կլիման: Հայերը բաւական մեծ թւով իրենց երկրից դուրս են եկել և տարածւել Պարսկաստանում, բայց՝ աւելի ուժեղ կերպով մղւել են դէպի Կովկաս, ուր երկու մեծ և գեղեցիկ քաղաքների՝ Թիֆլիսին և Բազուին տէր են դարձել: Գուցէ ուսական Ասիայում լինի ամբողջ հայ ազգաբնա-

կութեան կէսը շնորհիւ այն հանգամանքի, որ մի կողմից՝ անընդհատ ներգաղթը իւր հետ բերում է նորանոր բարեխառութիւններ, միւս կողմից՝ ոռոս կառավարութիւնը իւր խնամքը չի զլացել Կուր և Արաքս գետերի հովիտներում: Արարատն առանձին կամ իւր այն լեռնաշղթաներով, որով ձգւում է դէպի արևմուտք, կազմում է ջրերի բաշխման կեդրոնը. դէպի Կասպից ծովը, դէպի Վանայ լիճը գետեր է ուղարկում, որոնք ուղղակի իրանից են կախւած. Արարատի այս երկու ուղղութեամբ վերջացող թեքումները հնարաւորութիւն են ստեղծում, որ գոլորշիացման այս երկու աւազաններից թարմ ու խոնաւ քամիներ ստացւեն* Զհաշւած Վանը, Ալէքսանդրօպօլն ու Երևանը (սրա մօտ է գտնւում Էջմիածնի կաթողիկոսարանը) քիչ են փոքր ինչ կարևոր քաղաքներ, որոնց այս պետաբեր երկիրը կարող էր սնուցանել: Այս տեսակ քաղաքներ առաջ աւելի շատ էին:

*) Վանայ լճի հովիտը հրաբխային հրաշալի լեռներ ունի, որոնք կղզիացած են և ցրւած այս ու այն կողմը, բարձրավանդակի կեդրոնում. սրանք շղթայ չեն կազմում քամու հոսանքին դիմադրելու համար: Սրանցից զլիաւորներն են Թանդուրէկ, Սիփան-Դաղ և Նէմրուտ-Դաղ. վերջին երկուսը ընկած են լճի արևելահիւսիսային ափի վրայ և ունեն խիստ մեծ խառնարաններ, որոնք արդէն հանգել են. վերջին դարերում Թանդուրէկը դեռ գործում էր: Զնայած որ Հայաստանը եր-

Արաքսի վրայ գտնուում էր ամենահին մայրաքաղաքը՝ Արտաշատը. անդրկովկասեան բարձրավանդակի վրայ միջին դարում ծաղկում էր նոր մայրաքաղաքը՝ Անին. այս երկու քաղաքներինց էլ այժմ միայն ողբալի աւերակներ են մնացել, որոնք անցեալ փառքի վկաներն են: Այժմ արանդիտը փոխւած է, նախ՝ էրզրումի վրայով էր անցնում, երբ ամբողջապէս կարավաններով էր կատարւում, ապա՝ Թիֆլիսով անցաւ, երբ երկաթուղին այդ քաղաքը դարձրեց առաջնակարգ մի կեդրոն: «Այստեղ՝ Վանը, իսկ

կրագնդի plessement-ի վրայ է բարձրացրած՝ այնուամենայնիւ բազմաթիւ ժայթքումների է ենթարկւել. Արարատն ու Փալանթօքէնն իրենց ձեռով ցոյց են տալիս, որ հրաբխային են եղել. այն լեռնաշղթան, որ սրանց միացնում է, բաւականաչափ կոնքր ունի. Աղբի-Դաղը իբրեւ բացառութիւն մասամբ կրանդից է (լինչ) ինչպէս Զակրօշի և Քիւրդիստանի լեռներն են: Այս տեսակի երկրաբանական երևոյթների մի շարք է առջ եկել այստեղ. այսպէս՝ վերոյիշեալ երեք մեծ հրաբխային լեռները՝ Թանդուրէք, Օրփան և Նեմրուտը թերեւ ժայթքումի միևնոյն սխտեմին են պատկանում ինչպէս աւելի հարաւ Տիգրանակերտի հարաւ-արեւմտեան կողմում Կարաճանուաղը, որը նոյնպէս համեմատաբար նոր ժամանակի լավայով է ծածկւած. վերջին անգամ Նեմրուտ-Դաղը 1441-ին է ժայթքել, ինչպէս այդ վկայում է Վանեցի Վարդան գրիչը, որը աւանատես է եղել և այդ լեռն անւանում է Մամրուտ (Բիթլիսի և Ախլաթի միջև):

երկնքում՝ դրախտը՝ ասում է հայկական մի ասած.*) եւրոպացու համար այդ քաղաքը արժանի չէ այդ համբաւին, սակայն՝ հայաստանցին աւելի լաւը չունի: Այստեղ բուսականութիւնը ինքնաբուղիս, խիտ, զանազանակերպ է, բայց՝ չի կարող հասցնել հարաւի բոլոր պտուղները: Զմեռը կարճ և թեթեւ է, ամառը խեղդող շոգ չի անում ջնորհիւ իւր բարձրութեան (1,825 մետր լճի մակերևոյթից), որը բարեխառնում է արևի ճառագայթացումը: Նոյնն է և Արաքսի հովիտը: Առաջին դաշտը, որ այս գետը Աղբի-Դաղի հիւսիսային կողմում կտրում է, այսինքն՝ Ալտուն դաշտը 2,235 մետր բարձրութիւն ունի, իսկ իր միջին հովիտը, որն ընկնում է Արարատի նահանգում, մօտաւորապէս 1000 մետր է. այստեղ նոյնպէս՝ ձմեռն այնքան խիստ և եր-

*) Վանը որ խաղէական արձանագրութիւնների ցուցմունքով լճի ափերում տարածւած Բիսյնա գաւառն է, հնում տոսպ հայկական անուն էր կրում. յետոյ Մովսէս Խորենացին անւանում է Շամիրամակերտ (Շամիրամից շինւած). այս հռչակաւոր թագուհին, որի գոյութիւնը կամ առնուզն փառապանծ դործերը առասպելական են, իբր թէ ընտրել է լճի ափին առանձնացած հրաշալի ժայռը իր կախանաւոր այգիների համար: Հայերը այս տեսակ լէգէնտաներ շատ են շռայլում, այսպէս օրինակ՝ Դիարբէքի Տիգրանակերտ են անւանում, չնայած որ Տիգրանակերտը շատ ցած է շինւած եղել:

կարատե չէ, որքան լեռներն միւս երեսում, Ալաշկերտի դաշտում, որը 1,677 մեթր բարձրութիւն ունի. բացի այս՝ Արաքսի լայն անցքերի ուղղութիւնը, որ դէպի արեւելք գնալով յանգում է ընդարձակ, անմշակ դաշտերի, հնարաւորութիւն է տալիս լաւ քամիներ ստանալու. միւս կողմից՝ տաքութիւնը մեղմ ու բաւարար է, այնպէս որ կարող է հրաշալի հունձ հասցնել և շատ տեղերում նոյն իսկ խաղող ու պտղատու ծառեր: Ռուսական Հայաստանի մնացած մասերը, մինչև Գեօգչայ և Կարսի բարձրավանդակը, որ էրզրումի չափ ցուրտ է, շատ հարուստ են և տալիս են բարեխառն կլիմայի բոլոր բերքերը, նոյն իսկ տաք երկրի բերքերից, ինչպէս՝ բրինձ, բամբակ, թուփ, միասն թէ դիրքը բաւական ցած լինի և արևի դէմ ընկած: Այստեղի բնակչութիւնը ստիպւած է ծանր աշխատանք թափել, որը հարիւրապատիկ վարձատրում է. միւս կողմից՝ երկաթուղու մի քանի գծեր հնարաւորութիւն են ստեղծել որոշ տարածութեան վրայ հացահատիկներ արտահանել, ուստի բնակչութիւնը գործունեայ է դարձել, խաղաղասէր, աշխատանքի մէջ անվհատ, որով շատ կողմերով նմանում է Ֆրանսիայի Նորման գիւղացիներին կամ Բուրկինիօններին: Միջին դարում իսկական հայտնիքն էր, որը Վանայ լճի մօտերքում և Արաքսի հիւսիսային կողմում կրօնական և երբեմն քա-

ղաքական անթիւ յիշատակներ սփռեց, որոնք վկայ են Հափազանց առաջ գնացած մի քաղաքակրթութեան: Այս ցեղը մշակ է, ինչպէս որ հարաւայինը՝ այգեգործ. իսկ կեդրոնի ժողովուրդն աւելի մեծ Հափով պահպանել է նահապետական կեանքի բարքերը. այդ էլ շնորհիւ դեռ ևս գոյութիւն ունեցող կէս-թափառական, անհաստատ կեանքին, որին գարունքից մինչև ձմեռը ենթակայ է հովիւ ժողովուրդը:

Այս երեք մեծ, ընդհանուր գօտիներից դուրս կան բազմաթիւ կէտեր, որոնց բնութիւնը յատկապէս ժպտացել է և մեծ առաւելութիւններով բաժանել իրենց կոշտ, դաժան շրջապատից. այսպէս են հիւսիսային կողմում Գիւմիւշ-խանէի և Թորթումի հովիտները, որոնք ամբողջ կեդրոնին պտուղներ են մատակարարում. կեդրոնն էլ իւր կողմից ունի հրաշալի անկիւններ, ինչպէս Երնզկայի և Խնուսի շրջականերում: Այս բացառութիւններն առաջ են գալիս տեղի ցածութիւնից:

Հայաստանն այնպէս ինչպէս բնութիւնն է ստեղծել, առանց շահագործող արւեստների ու գիտութեան, ինքն իրեն բաւականութիւն տալիս է: Նա ստանում է միմիայն եւրոպական վատ արտադրութիւնը. իւր ոչխարների բուրդը միշտ էլ մատակարարել է հագուստեղէն՝ չնայած գործածքի անկատարելութեանը. իր հոնքերը

տւել են տարրական կարիքներին բաւարարութիւն տւող մետաղներ. միայն պղնձագործութիւնն է, որ միշտ էլ զարգացած է եղել. վերջապէս՝ ամեն տեսակի քարհանքները ծնեցրել են լաւ, մեծ որմնադիրներ, որոնք մի ժամանակ շատաւելի ճարպիկ էին: Հնագոյն ժամանակներից սկսած անշուշտ նա արտահանում է իւր քառասուն միլլիօն ոչխարները դէպի Դամասկոս և Կ. Պօլիս. նա ամբողջ կեդրոնական Փոքր-Ասիային տալիս է գինի. երբ եւրոպական ինդուստրիան կպատահոտի այս հողը այն ժամանակ մեծ գանձեր դուրս կը ժայթքեն:

Բարձրավանդակի ընդհանուր երեսը նպատաւոր է ինտէնսիվ մշակութեան համար, այդ պատճառով էլ այստեղ բնակչութիւնը իրար վրայ է կիտւած ինչպէս բնակիչների կեդրոնատեղիում: Նրա բոլոր լեռները կանոնաւոր կերպով, իրարից ոչ այնքան հեռու, շրջագծի վրայ սահմանաւորւում են փակ երկրամասեր (compartment), որոնք ունենում են մէկ կամ երկու պարանոցներ և ներկայացնում են սեղանի նման հօրիզոնական ընդարձակ տարածութիւններ:

Ինչպէս այս դաշտերը, որոնք բնորոշ են և անընդհատ տարածւած եփրատից ու Տիգրիսից դէպի Արաքսն ու Կուրի առաջին ճիւղերը, այնպէս էլ Ճորոխի, Բիթլիս-Սուրի, Քղիի ամերի նմանապէս փակ հովիտները առաջ բերին ֆէօդա-

լական ուժեղ, նախանձոտ իշխանութիւններ, որոնք շատ օգտակար էին, երբ դրանց գլխաւորները ենթարկւում էին թագաւորներին, բայց՝ յաճախ ազգային միութեան տեսակէտից խիստ վնասակար: Այս դաշտերից շատերը հնում լճեր են եղել և ապա չորացել. Պարսկաստանում էլ նոյն երևոյթն է առաջ եկել, բայց՝ այնտեղ լճերը չափազանց աղի են եղել և չորանալուց յետոյ տւել են ամուլ հողեր, այն ինչ հայաստանին աւելի անուշ ջրեր ունենալով տւել են ընտիր բուսահողով ծածկւած գետիններ:

III

Նորագոյն և հին պատերազմները, հեթանոսական հնութեան շրջանում քաղաքական բազմաթիւ գոտութիւնները, քրիստոնէական շրջանում յունական կայսրութեան քաղաքական և մանաւանդ կրօնական ազդեցութեան դէմ ցոյց տրւած ընդդիմութիւնը, հայաստանի հին և նոր

*) Այս դաշտերից ամենաբարձր էրզրումինն է (1,753 մետր), յետոյ Ալաշկերտին (1,677 մ.), Խնուսին (նոյն բարձրութիւն). Բասենին (1525 մ.), Մանազկերտին (նոյն բարձրութիւն), Բայբերդին (1,520 մ.) Վանալ լճին (1,718 մ.), որը քիչ պակաս է Էրզրումից իր բարձրութեամբ, և բնականաբար աւելի մեղմ օդ պէտքէ ունենայ: (Լինչ, «Արմենիա»):

բնակիչներին—առանց ցեղի խտրութեան—դեռ ևս նահապետական և անփոյթ ոգին, օտար պետութիւնների կեղեքումները, որոնք հնում իսկապէս ասւած ազատամիտ էին, բայց՝ այնուհետև մոլեռանդութիւնից դարձան կեղեքողներ, իսկ վախից՝ արիւնարբուներ, վերջապէս՝ հայերի էապէս խաղաղ բնաւորութիւնը, որոնք երբ տեսան թէ իրենց փառասիրութիւնն արդէն վնասներ է բերում հոռմայեցոց ժամանակ շուտով խաղաղեցին և քրիստոնէական դարում ընդհանրապէս ապստամբութիւնից գերադաս համարեցին հայրենիքից դուրս գալը,—էական պատճառներն են այն թմրութեանը, որի մէջ խոր կերպով թաղած է այս երկիրը։ Հայերին այս թրմութիւնից դուրս քաշելու համար բաւական է, որ մի բարձր քաղաքակրթութիւն դրդիչ դառնայ ապահովելով արդարութիւնն ու կարգը, օրինակ տալով աշխատանքի և համբերատար իմաստութեան։ Եւ իրօք՝ հայերը նմանելու հըրաշալի ընդունակութիւն ունեն։ Եթէ նրանք ամենայն ազատութեամբ անձնատուր լինէին իրենց սեփական ոգուն, կարող կլինէին ցոյց տալ արեւելեան միւս ցեղերին թէ ինչպէս կարելի է նմանել, հետեւել եւրոպական քաղաքակրթութեան առանց ամբողջապէս ուրիշի հետ ձուլելու, կորցնելու ազգութիւնը, որին նրանք ամենից աւելի են կպած։ Հայերը այս փորձն արել են

առաջւայ մեծ քաղաքակրթութիւններից կատարած իրենց բոլոր փոխառութիւններով, այժմ էլ շարունակում են անել եւրոպական քաղաքակրթութիւնից անընդհատ փոխառութիւններ կատարելով։

Այստեղ հնարաւորութիւն չկայ ուսումնասիրել այն բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնք կապահովէին հայերի կատարեալ դարգացումը, որին նրանք ձգտում են մեծ եռանդով. մենք այստեղ կանգ կառնենք այդ կարեւորագոյն պայմաններից մէկի վրայ միայն, որը կապ ունի մեր այս գլխում նկարագրած աշխարհագրութեան հետ և անհրաժեշտ է պատմութեան համար։ Դա արեւոտական կերպով շինւած ճանապարհներն են։ Հայաստանում բացառապէս ցամաքային են ճանապարհները, ոչ ծովերի և ոչ էլ գետերի վրայ չի կարելի նաւարկել. ծովերը շատ հեռու են, լճերը՝ շատ նեղ, իսկ գետերը՝ շատ խորդուբորդ ու տաք եղանակներին համարնա թէ ցամաքած։

Մեր թւականից առաջ XIV-րորդ դարում, այսինքն՝ առաջաւոր Ասիայի կեդրոնում առաջին անգամ հայերի երեւուց վեց հարիւր տարի առաջ, վաճառական և ռազմական մի մեծ ճանապարհի նախագիծ արդէն իրականացել էր մասամբ Ասորիքի, Լիւտիայի, Ասորեստանի բնակիչների և մասամբ «մարական պարանոցի»

և լեռնադաշտերի խառնիճադանճ ազգաբնակիչ-
ներն միջոցով, որոնք կարիք էին զգում հա-
ղորդակցութիւն ունենալ թէ Միջերկրականի և
ասիական Ովկիանոսի հեռաւոր ամերի և թէ հէնց
պարզապէս իրար հետ: Այս ճանապարհի ճիւղերը,
որոնք արեւմուտքում սկսւում էին եգէեան արշի-
պեղագոսից և հարաւում՝ միջին եփրատից, բնա-
կանաբար ամենից առաջ պէտք է յանգէին Սև
ծովին, Թերմոզոնի (այժմ Դէիրման-Դերէ-
փոքրիկ գետ, որի գետաբերանը Տրապիզոնի
արեւմտեան կողմումն է) հանքային հովիտներին և
նոյնպէս Իրիսի (յունական Լուկոսը, հայկական
Գայլը) հովիտներին: Այս գիծը անց էր կենում
հիտտիտների երկրով: Այս զանազան ճիւղերը
հետախտական թագաւորութեան մէջ յանգում
էին մի կէտի և Վերածւում միմեծ, անընդհատ
ճանապարհի, որի վրայով անց էր կենում թէ
զօրքը և թէ կարաւանը: Այս ճանապարհը Մէ-
օնի դաշտերից դուրս գալով արեւմուտքից ա-
րեւելք կտրում, բարձրանում էր հերմօսի հո-
վիտը, ապա՝ կեդրոնական բարձրավանդակի աս-
տիճանները մագլցում, որից յետոյ կամաց-կա-
մաց դէպի հիւսիս-արեւելք ուղղւելով անցնում
էր Ալիւսի հոռներով, երկու անգամ այս գետով
անց էր կենում, առաջին անգամ հոսանքի եր-
կու երրորդական մասում, իսկ երկրորդ անգամ՝
ակունքից քիչ հեռու. սրանից յետոյ յանկարծ

ծուռւմ էր Տաւրոսի վրայ և Մելիտէնում մի-
ացնում էր այն նեղ ուղիները, որոնք գնում
էին Տիգրիսի վերին աւազանում գտնւած Մծբին,
Սանկարա, հին Ասսուր քաղաքները. աւելի ցա-
ծը, լեռան այն կողմը և Կարկեմիսի պարիսպ-
ների (հնտտիտների մայրաքաղաքը) տակ միաց-
նում էր նաև դէպի Նեղոս և Պարսից ծոցի
ամերին գտնւած քաղաքները տանող ուղիները:
Այստեղ հասնելու համար այդ ճանապարհը օգ-
տւում էր նաև դէպի հարաւ-արեւելք ուղղւող
փոքրիկ ճանապարհներից. և վերջապէս՝ աւելի
ուշ ժամանակներում, երբ Դարէհն իր պետու-
թեան կեդրոնը դարձրեց Շօշ քաղաքը, նա
վերջանում էր այդտեղ:

Կան բնական ճանապարհներ, որոնք առաջ
են եկել Ֆիզիքական պայմաններից. և ժողո-
վուրդներն օգտւում էին դրանցից ձգողութեան
կեդրոնները նետւելու համար: Հայաստանում
այս տեսակ ճանապարհներ են առաջ գալիս, երբ
գետերը բւսական լայն հովիտներ են ունենում
և տաք եղանակին ջրերի տաշտերը չորանում են.
մեծ դաշտերը պարանոցների միջոցով հաղոր-
դակցութիւն պահպանելով նոյնպէս դառնում են
ճանապարհներ, և վերջապէս՝ լեռների անցքերը
ներկայացնում են այս տեսակ ճանապարհներ:
Զգողութիւնն առաջ էր եկել մի կողմից՝ երկրի
սեփական հարստութեան շնորհիւ, միւս կողմից՝

Արևելքի և Արևմուտքի միջև եղած տրանզիտի կարիքների պատճառով: Այս վերջին տեսակէտից Հայաստանն ամբողջ առաջաւոր Ասիայի ամենայնող անցքն է կազմում. Միջագետքը սկսած այն ժամանականից երբ արևեստական մշակութիւնները մեծ մասամբ ոչնչացան, դարձաւ դժւարանցների. նաեղերաւորւած է Ասորիքի անապատով, որը մեծ տրանզիտը անհնարին է դարձնում. նա գերեզման է եղել բազմաթիւ արշաւող բանակների*: Գալով Կովկասին նա միշտ էլ երկրորդական մի ճանապարհ է եղել. վերջին ժամանակներս միայն երկաթուղու շնորհիւ կարողացաւ տրանզիտի մի մեծ մաս խլել: Սակայն Հայաստանում դեռևս բաւական մեծ չափերով կարաւաններն են գործում, որոնք շատ դանդաղ և թանգ են: Կասկած չկայ, որ եթէ մի երկաթուղի փոխարինի սրանց տրան-

*) Այսպէս՝ երբ խալդերի և Ասորիքի զարգացումը կարիք ստեղծեց հարաւային կողմից մի երկրորդ ճանապարհ ևս ունենալ՝ այդ ճանապարհն անցաւ երկու գետերի միջով և չմտաւ անապատ. այդ պատճառով ճիւղեր արձակեց դէպի Տաւրոսի երկու ծայրերը, որպէսզի Հայաստանի երկարութեամբ կամ նրա միջով ուղղի Սև և Կասպից ծովերը: Այս ճանապարհը սուրհանդակի ուղի էր բացում դէպի հիւսիսային Ասորիքի ծովափը և մի ուրիշն էլ անշուշտ դէպի Բօսփորը: Այսպէս էր Բաբելոնի մեծ պողոտան. սրա և Տիգրիսի հաղորդակցութիւնը պէտքէ քիչ կարևորութիւն ունենար:

զիտի համարեա թէ ամբողջութիւնն ինքը կը ստանայ, որովհետև Պարսկաստանից Սև ծով հասնող հին, ամենակարճ ճանապարհն անցնում է Թաւրիզից, Բայազիդից, Էրզրումից, Բայբերդից և Տրապիզոնից. նոյնպէս էլ Պօլսի և Բաղդադի միջև եղած ճանապարհը համարեա թէ զուգահեռական ուղղութեամբ անց է կենում միշտ էլ միևնոյն տեղերով: Սվազի վրայով Խարբերդ (Մալաթիա), Տիգրանակերտ և Մօսուլ: Միմիայն Ջմիւռնիայից դէպի Բաղդադ շինուող երկաթուղին կարող է բարելաւել այս գիծը. նա կվերահաստատուի եթէ մի ուրիշ գիծ նոյն արագութեամբ և տրանզիտի նոյն արժէքով կմիացնի Սև ծովը Պարսից ծոցի հետ: Այսպէս Հայաստանը հրաշալի դիրք ունի հարստութեան բաժանման մի կեդրոն լինելու համար. Էրզրումն ու Սվազը դեռ ևս մթերանոցներ են, որտեղերից ապրանքներ են ուղարկում շրջակայ գաւառները. այս տեղերից նաև գլխաւոր ճանապարհն է ճիւղեր արձակում: Միւս կողմից՝ երկրի հարստութիւններն ամեն ժամանակ էլ գրգռել են և ասիական և եւրոպական պետութիւնները կողոպտիչ ախորժակը: Մեզալի հակառակ կողմըն էլ այն է, որ Հայաստանը աւար է եղել ամենագորեղ անտրպոնօրների համար: Սակայն՝ նա հրաշալի դիրք ունի ինքն իրան պաշտպանելու համար. բաւական է, որ գլխաւոր անց-

քերն *) ուժեղացնի. եթէ թշնամին նրան նեղ ձգի այն ժամանակ նա կարող է ընկճել թշնամուն դարանակալ մի դանդաղ կուռով մինչև որ ձմեռը վրայ կը հասնի և կթաղի թշնամուն: Այս պատճառով է, որ այսօր էլ էրզրումի մուտքը պաշտպանւած է թնդանօթներով, այն էլ այնքան ապահով, որ ռուսները Կովկասից գալով երկրորդ անգամ չկարողացան վերցնել: Այսպէս էլ հայերը՝ չնայած իրենց կրած բազմաթիւ հարւածներին այնուամենայնիւ կարողացան պաշտպանել մի այնպիսի կատաղի ուժով, որին վկայ են այս երկրում սփռւած բերդերի աւերակները, որոնք ընկած են օտար ու անցաւոր տիրապետողների շինած բերդերի աւերակների կողքին: Հայերը յաղթեցին թէ հռոմայեցիներէց, թէ բելգանդացիներէց, թէ արաբներից և թէ տաճիկներից—միշտ յաղթւած, որովհետեւ թւական քանակութեամբ քիչ էին և որ գլխաւորն է չափազանց բաժան-բաժան էին—սակայն՝ միշտ էլ այնպէս էին յոգնեցնում իրենց տիրապետողներին, որ սրանք մի նոր պատերազմ չափազանց ծանր համարելով բաւականանում

*) Հայաստանն շուրջն էլ յաճախ միևնոյն պայմաններն են. հռչակաւոր «Կիլիկեան Դրունքը», որից անհրաժեշտօրէն պէտք է անցնել Տաւրոսը. անց կենալու համար, կարելի է հեշտութեամբ կտրել և կանգնեցնել այն բանակները, որոնք Աղէքսանդրէտտի ծոցից զուրա գալով կուղենան հասնել Եփրատի կողքին Հայաստանում (Ռըկլիւ):

էին անւանական հնազանդութեամբ. այս պատճառով էլ հայերը կարողացան ապրիլ կէս-անկախ կեանքով մինչև որ Օսմանեան կառավարութեան զօրեղ կեդրոնացումն ամբողջապէս ոչնչացրեց այդ անկախութիւնը:

Անհնարին է ըմբռնել Հայաստանի բաղդը առանց որքան հնարաւոր է ճիշտ կերպով պատկերացնելու թէ Հայաստանի լեռներն իրենց կազմութեամբ ինչպիսի ուղիներ են բաց անում դէպի դրացիները: Մեր նկարագրած երկու մեծ ճանապարհներից մէկը, որը անցնում էր հարաւից հիւսիս, Եւրոպա էր տանում Քաղդէայի, Արաբիայի, Հնդկաստանի և կղզիների արտադրութիւնները. իսկ միւսը, որ անցում էր արեւելքից արեւմուտք, նոյն տեղն էր հասցնում կեդրոնական Ասիայի բերքերը. ինչպէս այսօր, այնպէս էլ առաջ Պարսկաստանից անթիւ կարաւաններ էին անցնում Իրանի բարձրավանդակի վրայ եղած «մարական պարանոցից», ձգւում Ալաբատի լճերի ուղղութեամբ և ապա ցրւում դէպի Կովկաս, դէպի Տրապիզոն կամ Զմիւռնիա, կամ վերջապէս՝ դէպի Ասորիք: Այս վերջին ճիւղի և առաջին ճանապարհի միութեան կէտը Միլիտէն էր: Այսպէս՝ ամեն կողմից, ամեն ուղղութեամբ ճանապարհներ ներկայացնող այս երկիրը՝ Հայաստանը ինչպէս իւր ձևով այնպէս էլ իւր համակերպոն դիրքով յատկացւած էր ուղղութիւն-

ների մի մատիմաթիքական սեղան լինելու մարդկային բոլոր գործունէութիւնները դէպի ինքը ձգելուց յետոյ: Այսպէս՝ այս առաջին ճիւղը զարգացաւ առևտրական գործերի և պատերազմական փառասիրութիւնների հետ միասին, այնպէս որ Հայաստանը շուտով ունեցաւ ճանապարհների մի կատարեալ ցանց, որը մինչև այժմ էլ մասամբ մնում է. միայն այն ժամանակից սկսած, երբ Սև ծովի վրայ նաւարկութիւնը ապահով և հեշտ դարձաւ, այսինքն՝ մօտ մի դար առաջ, երկարութեամբ գնացող երկրորդ մեծ ճանապարհը, Էրզրումի և Զմիւռնիայի միջև, դադարեց.* այժմ էլ Տրապիզոնի և Թաւրիզի միջև եղած ճանապարհի կէսն է մնացել.

Բայց այս կարճացումը ոչ մի վնաս չպատճառեց Հայաստանին. նա միայն կեդրոնական Ասիան աղքատացրեց: Պոնտոսի թագաւոր Միհրդատ Եւպատորի և հայոց Տիգրան Մեծի ժամանակ (առաջին դարում Ք. ա.) այս գաւառի երկու մեծ ճանապարհներից մէկը շինեց Պոնտո-

*) Հնում հազիւ երկու նաւահանգիստներ կային Պոնտոսում, Սինոպն ու Ամինոսը, որոնք Սև ծովի վրայ ներկայանում էին իբրև փոքր շահաստաններ. ընդ Տրապիզոնը և ոչ էլ Պարիատրէսի ծովեզրեայ նաւահանգիստները չկարողացան ուղղակի դէպի իրենց գրաւել վաճառականութիւնը: (Թ. Ռայնախ. Միթ. Եսպ. էջ. 233):

սի թագաւորից, միւսը՝ պարսիկներն էին թողել, որը նոյնպէս այս թագաւորը վերանորոգեց և գործածութեան մէջ պահեց: Առաջին ճանապարհը հիւսիսային կողմում էր և սկսում էր Արտաշատից, հետևում Արաքսի, Եփրատի և Գայլի հովիտներին: Երկրորդը, որ պարսկական թագաւորական հին ճանապարհն էր, անցնելով Տիգրանակերտի վրայով (հիւսիսային միջագետքում) կտրում էր Տիգրիսը, Եփրատը և Ալիւսը. սա Սարգից դէպի Շօշ տանող հռչակաւոր ճանապարհն էր, որը իսկապէս մի ճիւղ էր արձակում դէպի Ամինոս և Սինոպը (Հերոդոտ., 52): Սակայն՝ այս նաւահանգիստը, որը կղզիացել էր Փոքր-Ասիայի ամենահիւսիսային հրաւանդանի ծայրում և զուրկ էր Հայաստան տանող ճանապարհից, չէր կարող Հայաստանին վաճառատեղի շնորհել: «Կօմանայի շուկայում էր (Կապադովկիայում, Փոքր-Հայքի հիւսիսային կողմում, Անտի-Տաւրոսի արևելեան կողմը), որ Հայաստանի կարաւանները գալիս, թափում էին իրենց վաճառքի բեռները (Ստրապոն), որպէսզի այդտեղից գնային կամ դէպի Սինոպ կամ դէպի Եփրատ»: Մենք յետոյ կտեսնենք, որ այս ճանապարհի միջոցով Տիգրան Մեծը և Միհրդատը անդադար յարաբերութեան մէջ էին միմեանց հետ փոխադարձաբար օգնելու համար թէ՛ զբացիների և թէ՛ հռոմայեցիների դէմ: Հին պարսիկների

տիրապետութեան ժամանակ այդ ճանապարհը շատ լաւ էր պահպանուում: Սարգից Շօշ գնալու համար 90 օր էր հարկաւոր և 111 ձի փոխել (Հերոդոտ)․ յայտնի է, որ այդ ճանապարհն ամբողջ Փոքր-Ասիան կտրելուց յետոյ «մտնում էր Հայաստան Եփրատի վրայով», և շարունակ դրա վրայով արքայական սուրհանդակներն էին գնում զանազան հրամաններ տանելով․ այդ ճանապարհով էին գալիս նաև սատրապների գործատարները բերելով զանազան զեկուցումներ․ սրանք բոլորն էլ գործ էին ածում կայսրանական ձիեր և միշտ էլ գնում էին քառատրոփ կամ գետերից անցկացնող լաստերով: Միաժամանակ այս ճանապարհը ծառայում էր հասարակ ճանապարհորդների և ապրանքների տեղափոխութեան համար, իրը կատարւում էր ոչ միայն ջորիներով, այլ և ուղտերով: Այս ճանապարհի պարսկական վերջաւորութեան մէջ, Ելամում (այս թագաւորութեան մայրաքաղաքն էր Շօշը) էր կեդրոնանում Ասիայի ուտեստը, որի մեծ մասը տանում էին Եւրոպա: Կարելի է կարծել, որ այս խճուղին իսկապէս ժայռերի մէջ փորւած է եղել, սակայն՝ այժմ ոչ մի նշան չկայ դրան․ ժամանակի երեք քառորդ մասով նրա հետքը հետևում է բնական իջածքներին, որոնց խորդուբորդութիւններն անհնարին են դարձնում կռքի գործածութիւնը: Այս տեսա-

կէտից մենք ունենք այնպիսի վկայութիւններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ նախնական ժամանակներում աւելի բանուկ է եղել այդ ճանապարհը քան թէ այժմ: Մենք յաճախ տեսնում ենք, որ խալդերը, ինչպէս նաև հետտիտները, ասորեստանցիները, ասորիներն ու եգիպտացիները այս ճանապարհի վրայ գործ էին ածում պատերազմական թիթև ու դիմացկուն կռքեր: Այս ազգերն աւելի արժանիքներ ունեցան քան թէ ուրիշները, որովհետև ստիպւած էին ռազմական վարժութիւններ անել Ուրարտուի սոսկալի լեռների մէջ, որոնց յետոյ պէտք է հայերը տիրէին: Սրանք կռքի համար անցանելի դարցրին նաև գլխաւոր անցքերը և հարաւային գաւառը, ուր մեր օրերում կռքի և ոչ մի տեսակ չի կարող մուտք գործել․ սակայն՝ Ասորեստանի թագաւորներն այստեղի գաւառիկների վրայից ևս ցատկուկներ էին գործում իրենց կռքերով․ այժմ այդ տեսակ ուժեղ ցատկում, դարձածքներ անհնարին են:

Ուրեմն՝ մի կողմից վաճառական յարաբերութիւնները, միւս կողմից՝ երկու աշխարհի պետութիւնների քաղաքական մրցակցութիւնները պէտք է Հայաստանը ճակատագրօրէն դարձնէին պատերազմի իսկական դաշտ երբեմն քաղաքակրթութեան և մրցման խաղաղ կռիւների, երբեմն էլ հակառակորդների արիւնահեղ պատե-

ընդհանուր համար, որոնք յաղթողներին փառք էին տալիս, իսկ ժողովուրդներին՝ դժբաղդու-
թիւն: Զարմանալի չէ, որ բնութիւնից օժտւած
այս գաւառը լինելով անհրաժեշտ մի անցք յա-
ճախ աւար դառնար փառասէր իշխանութիւննե-
րի և պատերազմի դաշտ՝ դրանց և դրանց մը-
ցակիցների կատաղի բախումների համար. պա-
տերազմները Հայաստանի աւերման մշտական
պատճառներն են. պատերազմ այս ու այն կողմ
ցրւած զանազան հայ ցեղերի մէջ, ինչպէս
այդ անպայման կերպով տեղի է ունենում բո-
լոր լեռնական ժողովուրդների մէջ. աւելի ահ-
ռելի պատերազմներ ասորեստանցիների, մա-
րերի, յոյների, պարսիկների, արաբների,
թուրքերի դէմ. Դարեհի, Լուկուրկոսի, Պոմ-
պէոսի, Սոսրոյի, Բայազետի, Պասկելիչի անուն-
ներն այս երկրում տարծել են փառաւոր ու մա-
հաւիթ ցնցումներ, որոնք առաջ են գալիս յա-
ւիտենական այս մրցադաշտում հերոսների և
բռնակալների, խաչակիրների և կիսալուսինի
ասպետների, բեեռային արջի և անապատի առ-
իւծի բախումներից:

Մի ժողովուրդ, որ այսպէս ճգմում է փա-
ռասիրութեան, ֆանատիզմի և քաղաքականու-
թեան սոսկալի հարւածների տակ ինչպէս կա-
րողանար այնքան ոյժ և միութիւն, յարակցութիւն
պահպանել, որով ազատէր իւր անկախութիւն-

նը, քանի որ իւր զարգացման ամենաբեղմնաւոր
շրջանում անգամ հաւանօրէն վեց կամ եօթ
միլիօն հոգուց աւելի չի եղել*. միւս կողմից՝
հնագոյն ժամանակներից սկսած իւր աւանդու-
թիւնները սովորեցրել են նրան աւելի շուտ
խուսափել քան թէ ուրիշ խիզախ լեռնակների՝
ալբանների, զւիցերացիների, բերբերների նման
կռւել մինչև մահ կամ յաղթութիւն: Հայերը

* Անճնական տեղեկութիւնների հիման վրայ
կարող ենք բոլոր հայերի թիւը մօտաւորապէս հե-
տեւել կերպով որոշել.

Թրքական Ասիայում	993,600
Ռուսական Անդրկովկասում	1,128,970
Եւրոպական թուրքիայում	200,000
Ռումանիայում, Սերբիայում, Բուլղա	21,250
Պարսկաստանում	43,000
Եգիպտոսում	10,000
Ռուսաստանի կաթոլիկ հայերը	37,000
Միացեալ-պետութեան հայկ. նոր. գաղ	30,000
Հին ծագումով հայեր, որոնք ձուլւել են Իտա- լիայում, Տրանսիլվանիայում, Լեհաստանում, Հնդ- կաստանում, Ուկրաինում և ուրիշ տեղերում եղած ժո- ղովրդների հետ.	20,000
Եւրոպայի գլխաւոր քաղաքներում ցրւած հայեր	1,000

2,484,820

Հարիւրներ և հազարներ չպէտք է նկատի առ-
նել պաշտօնական վիճակագրութեան բացակայութեան
պատճառով: Ռուսաստանի և Բալկանեան գաւառների
տեղեկութիւնները միայն ճիշտ են. դրանք քաղւած են
1905-ի հայերէն «Լոյս» օրացոյցից:

միայն կրաւորական դիմագիր ոյժ ունեն. հիւսնալի է հայի այն յամառութիւնը, որով կարողացաւ իրեն որդեգրող երկրում հաստատուն մնալ համարեա թէ միշտ իբրեւ վասսալ կամ իր գահի վրայ օտար թագաւորներ բարձրացնելով, սակայն՝ գործնականապէս անկախ մնալով մինչև սելջուկների արշաւանքները: Սրա փոխարէն ռազմական լեզուով խօսելով՝ այս «Պատմութեան» ընթացքում յաճախ կտեսնենք, որ նա թուլանում է երկրներ չգրաւելու պատճառով. նրա բնաւորութեան էական գիծն է—շահի ցանկութիւն, անտեսական կռիւների անյազուկութիւն, որը բնորոշ է նաև շատ ուրիշ լեռնականների համար: Երբ հայը իմացել է, որ կարող է աւելի հարուստ գաւառների տիրապետել՝ առաջ է շարժւել, Թեսալիայից դէպի Կովկաս է եկել, սակայն՝ խուսափելով ընդհարումներից և օգտւելով դրացիների գաղթից կամ թուլութիւնից: Ասիական հնութեան մէջ սա թէրևս միակ ժողովուրդն է, որի պատմութիւնը դիւցազնական յիշատակարաններ չի պահպանել մինչև մեր թւականութեան մօտերքը: Մի անգամ ընդմիշտ հաստատուելով կեդրոնական բարձրավանդակի վրայ այնտեղ էլ հաստատուն կերպով ապրեց քանի կարողանում էր հեշտութեամբ լաւ ապրուստ գտնել շնորհիւ այն հանգամանքի, որ տիրապետողներն ազատութիւն էին շնորհում նրան. Իարէհից

սկսած մինչև Սելջուկները միմիայն մի գաղութ է հաստատել հայը, այն էլ ոչ հեռու, Կասպից ծովի հարաւ-արեւելեան կողմում, Հիւրկանիայում: Սակայն՝ երբ մօնղոլական բարբառութիւններն սկսեցին կեղեքել հայերին, նրանք փոխանակ դիմագրելու և իրենց գերիշխանութիւնն ապահովելու — որը հնարաւոր էր — սկսեցին փախուստի դիմել, մեծ շարքերով գաղթել, որով հրէաների հետ միասին աշխարհի ամենաթափառական, ցրած ազգը դարձան: XII դարուց սկսած Անի մայրաքաղաքը և շատ ուրիշ կարևոր քաղաքներ կատարելապէս դատարկեցին. այնուհետև բազմաթիւ գաղութներ կազմեցին աշխարհի այն բոլոր կողմերում, ուր կարելի է մի բան աշխատել: Այսօր էլ Հայաստանն անընդհատ դատարկւում է, երկար ժամանակից սկսած հայերի կէսը իւր տանը չէ, հայրենիքում մնացողները շատ քիչ մասն են կազմում. հայը կասկածոտ է, ընդհանրապէս վախկոտ, հազուադիւս դէպքերում միայն ընդունակ է համաձայնութեան գալու բոլորը միասին մի իներժիք գործ կատարելու համար: Նա ունի բոլոր պակասութիւններն ու առաւելութիւնները մի խաղաղ ժողովրդի, որն ուզում է նստակեաց լինել, միշտ էլ հանգստութեան մի վայր որոնել առանց կարողանալու այդ տեղում վերջնականապէս բնակւել: Նրանք նման չեն քրդե-

ըին, արաբներին կամ աֆղաններին, որոնց համար շարժական վրանը միակ օջախն է և անձայր անապատը միայն արժանի նախասնձի. հայերն ուղղում են հաստատուել հողի վրա մշակութեան միջոցով և մասամբ իրենց տալով հովւական կեանքին. նրանք ստեղծում են քաղաքներ, որպէսզի կարողանան պորժադրել իրենց վաճառական և ինդուստրիէլ ճարպկութիւնները: Նրանք շինեցին հարիւրաւոր բերդեր պաշտպանւելու և հազարաւոր քրիստոնէական մենաստաններ—հեթանոսական տաճարներից յետոյ—իրենց միստիքական բնաւորութեան բաւարարութիւն տալու համար: Եւ սակայն՝ սրանք յաւիտենական թափառականներ են, որոնք բաւերի և սափուացիների նման չեն հեռանում իրենց հայրենի բարձունքներից փող աշխատելուց յետոյ վերադառնալու նպատակով, այլ՝ միշտ էլ տեղափոխում են իրենց ընտանիքն ու ունեցւածքը օտար գաւառում հաստատուելու համար մինչև որ մի ն ր դէպք կթելադրի դարձեալ նոր տեղ որոնել:

Ընդհանրապէս վերցրած Հայաստանը մի շատ դաժան երկիր է բաւարարութիւն տալու համար մի ժողովրդի, որը ձգտում է բարիքի կամ առնւազն անկարող է ստեղծել ինդուստրիական անհրաժեշտ միջոցներ այդտեղ թագնւած աղբիւրներից օգտելու համար: Հայերը նախաձեռ-

նողներ չեն (initiateur): Նրանք օժտւած լինելով նմանելու, իւրացնելու հրաշալի ընդունակութեամբ իսկապէս ասած ոչինչ օրիգինալ բան չեն տւել. նոյնիսկ նրանց քրիստոնէական ճարտարապետութիւնը, որը այնքան հետաքրքիր է, ծագում է բիւզանդականից, իսկ վերջինս էլ պատւաստել է պարսկականի վրայ: Հայն երբէք չկարողացաւ ոչ հին յոյների և հռովմայեցիների և ոչ էլ նոր դարում արեւմտեան ազգերի նման ձեւփոխել բնութիւնը արեւստի ստեղծագործող յանդուգն աշխատութեամբ. իր հայրենիքը մնացել է իր ձեռքում այնպէս ինչպէս բնութիւնից ստացել էր. նա հաւաքել, ստացել է այն հարստութիւնները միայն, որոնք իրենք իրանց են ներկայացել կամ քիչ աշխատանք են պահանջել: Այսպէս՝ այս լեռնադաշտը և շրջակայ հարուստ հովիտները, ուր կարելի էր շատ խիտ մի ազգաբնակչութիւն ապրեցնել, մի բառակուսի քիւօմեթրի համար 6 բնակիչ ունի: Չնայած որ կլիման շատ առողջ է, սակայն՝ վարակիչ հիւանդութիւնների բոլոր տեսակները—որոնցից տիֆօիտ տաքութիւնը, սիֆիլիսը և բիւռոցքը տեղական են —անընդհատ ոչնչացնում են այդ բեղմնաւոր, շատ շուտ բազմացող ազգը. իսկ այդ՝ մի կողմից այն զրգւելի կեդոտութեան պատճառով, որի մէջ ապրում են գիւղացիները և միւս կողմից՝ այն ան-

հոգութեան համար, որով ձիւնի հալւելուց կազմ
ւած չափազանց մաքուր ջուրը փթած փայտերի
միջոցով են բերում քաղաքները: Դարեր շա-
րունակ այս բոլորը տեղի են ունենում, բայց՝
ոչ ոք չի մտածում դարման տանելու մասին:
Հիմքեր կան ենթադրելու, որ հնում առողջա-
պահութիւնը զարգացած չի եղել, սակայն՝ բար-
գաւաճումը աւելի էր ինչպէս նաև բնակիչների
խտութիւնը. այս անկման գլխաւոր պատ-
ճառն իսկապէս քաղաքական է*: Հայերն ինի-
ցիատիվ չունենալով կարիք էին զգում զօրեղ
կերպով կազմակերպող մի պետութեան դըրդ-
ման և բարեխնամ մի կառավարութեան պաշտ-
պանութեան: Առաջ պարսիկներից սկսած մին-
չև սելջուկները նա այդ ունէր: Այսօր ամեն
բան փոխւած է...

Սակայն՝ հայերն իրաւունք չունեն շարու-
նակ ամենից և ամեն բանից դժգոհել. ընդհան-
րապէս վերցրած թուրքերն այնպիսի արտօնու-
թիւններ են շնորհել հայերին, որ ոչ մի տի-
րապետող չի կարող պարծենալ աւելին տալու
մէջ: Հայերի համար հեշտ կլինէր նմանել Օս-
մանեան կայսրութեան մէջ եղած յոյների խե-
լօք համակերպութեան, այն յոյների, որոնք

*) Տես այս գրքի հեղինակներից մէկի. Նօէլի Նը-
կարագրութիւնը հայերի արդի կենցաղի. տպւած
«Պատոյտ աշխարհի շուրջ» թերթում:

անընդհատ ջանքեր թափելով կարողացան տէր
դառնալ տնտեսական և սօցիալական մթնոլորտ-
ներում:

Մենք չենք կարող երկար կանգ առնել ար-
դի հայերի բնաւորութեան վրայ, մեզ հարկա-
ւոր էր միայն մի քանի գծերով յիշել ամենա-
հին ժամանակներից սկսած նրանց ցոյց տւած
յարատեւութիւնը, դիմացկանութիւնը: Հայի բնա-
ւորութեան գծերից մէկը, որն ամենից աւելի
է աչքի ընկնում և եզակիօրէն պատիւ է բե-
րում այդ ազգին, ազգային աւանդութիւնների
մէջ յարատեւելու յամառութիւնն է հակառակ
անչափ խոչընդոտների: Յամառ, պնդազուլի,
համբերատար լեռնականը, որն անկարող է կոր-
ծանելու, պահել է իր բարքերը, իր լեզուն, իր
կրօնը, իր պատմական յիշողութիւնները. նա իր
անցեալի պաշտամունքն ունի, որը, իսկապէս ա-
սած, արգելում է նրան ներկան հասկանալու.
նա մնում է մեր աչքի առաջ իբրև աշխարհի
ամենահին ցեղերից մէկը. անշուշտ ժամանակի
ընթացքում նա շատ է խառնակւել, սակայն՝
նախնական տարրը մնացել է տիրապետող նրա
մէջ. նա ուրիշներին այնպէս է կուլ տւել, որ
դժւար է այդ բանի հետքը գտնել նրա լեզուի,
նրա ֆիզիօլոգիական կազմութեան կամ ինս-
տիտուցիաների մէջ:

Բ. ԳԼՈՒԽ

Հայ ազգի կազմակերպութիւնը.

I

Քանի զեռ հայ գաղթականութիւնը տատանում էր իսկական Փոքր-Ասիայում հայերը նոյնպէս փոխադրական կամ օտար ծագում ունեցող բազմաթիւ այլ տոհմերի (tribu) հետ չափազանց խառնակաւ մի տոհմ էին ներկայացնում: Նրանք առաջին անգամ առանձին, անջատ խումբ կազմեցին այն ժամանակ, երբ հաստատւեցին Ալիւս գետի արեւելեան կողմում, որի հովիտը բռնում է Սև ծովի և Կիպրոսի ծոցի միջև գտնւող պարանոցի մեծ մասը:

Արդեօք ո՞ր դարում հայերը գրաւեցին լեռնադաշտի արեւմտեան տերրամները, որոնք յետոյ դարձան նրանց առաջին հայրենիքը Փոքր-Հայք անունով և որոնք ընկած են Կապադոկիայի և Պոնտոսի միջև: Մենք հաստատ կարող ենք ասել, որ դա 1100 թւականից, մօտաւորապէս Թուկլատբալասարի մահաւան շրջանից առաջ չէր կարող լինել. Ասորեստանի այս աշխարհակալի տարեգրութիւնների մէջ ոչ մի հայ

անուն չի յիշուում, ոչ էլ այն արձանագրութիւնների մէջ, ուր յիշատակւած է նրա յաղթութիւնները, որոնք տարածւեցին Նախիի վրայ, Եփրատի և Ալիւսի միջև, կլանեցին նոյնիսկ Եփրատի և Տիգրիսի ակունքները և սահմանափակւեցին միայն Արարատի զանգւածով. ոչ մի հետք չկայ նաև իսկապէս ասած քիչ ծանօթ, բայց՝ աչքի ընկնող քաջագործութիւնների մէջ, որոնք կատարւել են սրա յաջորդների օրով, նինկէական Պասէ հարստութեան վերջում, X-րդ դարու կիսում:

Սակայն՝ այս հարստութեան թագաւորները թոյլ տւին, որ իրենց նախորդների անհանգոյն կայսրութիւնը լուծւի, քայքայւի. ասորեստանցոց նման մի փոքրիկ ժողովուրդ չէր կարող այսքան հեռաւորութեան վրայ պահպանել իւր տիրապետութիւնը. նա այդ բազմաթիւ, այլասեռ, հնազանդութեան ոչ այնքան տրամադիր ժողովրդներին իւր հետ հաշտեցնելուց, միացնելուց առաջ անհրաժեշտաբար պէտք էր կառավարելու գիտութիւնը սովորէր: Այսպէս՝ Ասուրիբբալի մահից մի քանի հարիւր տարի յետոյ, այսինքն՝ IX-րդ դարու կիսում, կիլիկեցիները՝ Ասորիքի հիտտիտների ազգականները, գրաւեցին Ասորեստանի թագաւորութեան արեւմտեան նահանգները. հիտտիտները սրանցից նեղւելով փակւեցին թէ՛ Ասորիքում և թէ՛ Եփրատի միջին գաւառում:

սրանք տիրեցին նաև ամբողջ Միջագետքին: Այս կերպ զբաղաւած լինելով հարաւային հարուստ դաշտերը՝ ձեռք ձգելով՝ հիւսիսային բարձրավանդակն իւր դաժան ձմեռներով նրանց չգրաւեց. նրանց համար այդ տեղի հովիտներն ու դաշտերը շատ նեղ թւացին, իսկ լեռնոտ արօտավայրերը՝ տաժանելի, ուստի ազատ թողեցին այդ երկիրը աւելի համեստ ազգերի առաջ. այս համեստ նորեկներն եղան խալդերը լեռնագագաթի արեւելեան կողմում, յետոյ արեւմտեան կողմում՝ հայերը, որոնք անշուշտ պատահեցին այդտեղի հին բնակիչների մի մասին:

Առաջին փաստաթուղթը, որով ապացուցւում է հայերի ներկայութիւնը Կապադովկիայի հարաւայն կողմում, Մալաթիայի մօտ է գտնւել. դա խալդերի մի արձանագրութիւն է, ուր յիշատակւում է հայի անունը Ուրարտուի թագաւոր Մենուազի օրով, 828-ից 784-ին:

Փաստաթղթեր չունենալու պատճառով չենք կարող գիտենալ թէ արդեօք այս խառն ժողովուրդը, որ գլխաւորապէս բաղկացած է փոփոքիացիների հետ ազգական հնդկա-եւրոպացիներից և այսուհետև կազմակերպւած է հայ անունով—իր նոր հայրենիքում առաջին քայլերից բաւական երկար ժամանակ մնաց և սերտ յարաբերութիւն ունեցաւ հիւտտիտների հետ, որպէսզի գոնէ մի քիչ կարողանար համաձուլւել

նրանց հետ: Այս պատճառով մենք ստիպւած ենք մերժել այն ենթադրութիւնը, որն այս երկու ժողովրդի լեզուն նոյնացնում է: Այս նոյն բանը չի կարելի ասել միւս ժողովրդների վերաբերմամբ, որոնք երկար ժամանակ հայերի հետ միասին բնակւեցին Փոքր-Հայքում. նոյնիսկ ամեն տեսակ դրական փաստերի բացակայութեան դէպքումն էլ պէտք է ենթադրել, որ այս երկարատև բնակակցութիւնը խառնակել է սրանց արիւնները, ինչպէս այդ միշտ էլ տեղի է ունենում ամուսնութեան, առևանգումների, ստրկացման և պատերազմների միջոցով:

Սկիւթացիներն իրենց Մատիէս թագաւորի օրով ազատեցին Սարտանապալին (626—606), որին մարերի առաջին հերոս Կիաքսարը պաշարել էր Նինիվէում. այս հանգամանքից օգտւելով սկիւթացիներն ասպատակեցին Բաբելոնը և այնուհետև քսանեութ տարի արևմտեան Ասիան ընկղմեցին սարսափների մէջ, ինչպէս Հերոդոտն է վկայում (500—428 Ք. ա.): Կամաց-կամաց նրանք վերջում խաղաղ ժողովուրդ դարձան. Ստրաբոնի ժամանակ (I. դար. Ք. ա.) այլևս չի խօսւում սրանց քաջագործութիւնների մասին. Ստրաբոն սրանց յիշատակում է Սաքս անունով ցրւած Հայաստանում, Կապադովկիայում և Պոնտոսում: Այսպէս՝ հաւանականօրէն բարի դրացիներ լինելով այս երկրների միւս ժողովուրդ-

ներին կարելի է կարծել, որ երկար ժամանակի ընթացքում կարողացան մասն ունենալ հայի ֆիզիոլոգիական կազմակերպութեան մէջ: Հայերը կարողացան կիմմերեցիներէից ևս մի քանի տարրեր փոխ առնել. սկիւթացիներն իրենց արշաւանքների սկզբից սկսած քշեցին կիմմերացիներին, որոնք «Լուտիայում և Տաւրոսի վրայ ունեցած պարտութիւններից յետոյ համարեա թէ կեղրոնացիին իրենց զարմի (clan) մեծ մասը կապադովկիայում, ինչպէս նաև Ալիւսի և Թերմոօփոնի գաւառներում»: *) Սակայն՝ որ կիմմերներն ու սկիւթացիները լաւագոյն կանտոններին տիրեցին. դա դրացի ժողովրդների համար մի մեծ բարիք չէր, այլ՝ թւում է, որ նոր բարբառոսութեան պատճառ դարձան և բաւական նպաստեցին նրանց քաղաքակրթութեան յետաճացութեան: Եւ իրօք՝ ինչպէս ուրիշ տեղերում այստեղ էլ ամեն ինչ տակնուվրայ արին: Ստրաբոն սրբանց դատապարտում է յատկապէս Հայաստանի համար:

Ուրիշ վայրերի տոհմեր ևս եկան խոչընդոտ յարուցանելու այսպէս կոչւած հելլենական տարրի զարգացման դէմ, որի սաղմերն էին կըրում Արմենի որդիները: Ինչպէս որ սկիւթա-

*) Մապերո. Հին պատմութիւն Արևելքի հին ազգերի. III, 474

ցիներն ամեն ինչ տակնուվրայ անելուց յետոյ անկարող եղան մի բան հիմնել՝ սրանք էլ լաւ համարեցին վերին Եփրատի և Ալիւսի աւազաններից քշել մօսկոններին և տաբալներին նրանց տեղը բնակելու նպատակով. վերջիններս գաղթեցին դէպի հիւսիս-արևելք, սակայն՝ երևում է, որ բոլորը չթողեցին իրենց հայրենի օջախը, որովհետև շուտով յոյները սրանց ճանաչում են Մօսք և Տիբարցի անուններով Սև ծովի եզերքների լեռնաշղթայի վրայ. միւս կողմից՝ սրանց յետևից հասնող հայերը պատահեցին որոշ մնացորդների: Եւ իսկապէս՝ սրանք ոչ միայն սկիւթացիներից են հալածւել, այլ և կիմմեր հրոսակների բեկորներից, փոխկրիական ժողովուրդներից, որոնց թւում նաև հայ տոհմը: Այսպէս՝ «վերին Ալիւսի աւազանն ու Միլիտոնը շուտով կոչեցին Արմենիա (Հայաստան)»: *)

Այսպէս՝ հէնց սկզբից սկսած բազմաթիւ այլասեռ ֆակտորներ աղաւաղել, այլափոխել են նախնական տիպը. չնայած որ չգիտենք թէ ինչ չափով է այս աղաւաղումը, սակայն ճիշտ է այն հանգամանքը, որ հայկական «ցեղի» անճիշտ անունը կրող ամենահին կմախքները ակնայայտի կերպով ներկայացնում են ցեղազրական բազմաթիւ տարրերի մի զուգորդութիւն, մի խառնուրդ. սակայն՝ ինչ բնոյթ ունի այն

*) Մապերո. վեր. յիշ. էջ 520—521.

արիւնը, որն այդքան խառնկւել է հայերի երակներում. երկար ժամանակ կարծում էին, որ մեծ մասամբ սեմիտական պէտք է լինի այդ արիւնը. իսկ այդ կարող էին տալ միայն հիտտիտները, որովհետեւ հայերը գալիս էին Մակեդոնայից, իսկ սկիւթացիներն ու կիմերները՝ Սև ծովի հիւսիսային ափերից: Արդ՝ չնայած որ մինչև հիմա յայտնի չէ հիտտիտների ծագումը, սակայն՝ ընդհանրապէս համաձայն են ընդունել, որ դրանք սեմիտներ չեն, այլ անծանօթ ցեղերի մի խառնուրդ:

Ուրիշ տեսակէտներով հիտտիտները կարող են մի գաղափար տալ մեզ նախնական հայերի կենցաղավարութեան ձևի մասին: Սօցիալապէս հիտտիտները հովիւներ էին. նոյնիսկ կարծում են, որ Եգիպտոսի «հովիւ թագաւորները» սրանք են տւել. այն ենթադրութիւնը, որ հիւքսօս հարստութեան հիտտիտական ծագում է վերագրում, մնում է միակ ճշմարտանման ենթադրութիւն այս օտարների կառավարութիւնը բացառելու համար եղած բոլոր ենթադրութիւնների մէջ:

Հիտտիտները տիրեցին Եգիպտոսին — այդ արդէն ցոյց է տալիս, որ դրանք այլևս բարբառոսներ չէին — զինւորական մի ցեղի յատուկ եռանդով. նրանք նախ՝ անգութ էին, բայց՝ յետոյ, երբ տէր դարձան, արդէն սկսեցին տեղացի

հարստութիւնների (dinastie) չափ խելօք և հաստատուն կերպով կառավարել: Այս ազգի մեծ մասը մնացել էր իւր օջախում. արկածախնդիր խմբերն էին յամենայն դէպս, որ կարող էին ուղարկւել Եգիպտոս, ինչպէս այդ սովորութիւն է բոլոր հովիւ ցեղերի մէջ: Եգիպտացիները չկարողացան ընկճել Ասորիքի և Փոքր-Ասիայի հիտտիտներին՝ չնայած որ դրանք նոր էին ազատւել խաղերի արշաւանքից. «և ինքը՝ Տութ-մօզիս Գ. նրանց սահմանները կոխելուց և շատ քաղաքներ ասպատակելուց յետոյ էլ լուրջ կերպով նրանց իւր հպատակների թւում չհաշւեց»^{*}:

Այսպէս էր եղել ուրեմն հայերի զրութիւնն այն ժամանակ, երբ Կապադովկիայում գտնուող հիտտիտական մնացորդների հետ սկսեցին բնակւել: Քաղաքական մի նմանութիւն մեզ թոյլատրում է ենթադրել, որ սրանք բաւականին սերտ յարաբերութիւն են ունեցել միմեանց հետ: Ինչպէս որ հիտտիտները միշտ իրենց թագաւորներին անւանում էին «Թագաւոր Մեծ Հատիի» այնպէս էլ հայերը «Մեծ Հայքի Թագաւոր» կոչումն էին տալիս իրենց թագաւորներին. այս կոչումը նրա համար չէ, որ թագաւորները կառավարում էին միմիայն Հատիի կամ Հայաստանի մեծ մասը. նրանք իշխում էին նաև

^{*}) Մապերօ. վեր. յիշ. հ. բ. էջ 351, 352. ըստ Ե. Ղը Ռուսէի,

Փոքր-Հայքի և Փոքր-Հատիի (ենթարկւած Ասորիքի իշխանութեան) վրայ. սա մի տիտղոս է, որ Արևելքի ոչ մի ուրիշ թագաւոր իրան չի վերագրել:

Փոքր-Ասիայի բոլոր բնակիչները, առանց ծագման խտրութեան, իրենց ապրուստն ստանում էին մասամբ մշակութիւնից, մասամբ անասնապահութիւնից, որովհետեւ ապրում էին մի երկրում, որը լաւ ոռոգւած էր, որտեղ առատատեղիներն ու դաշտերը հաւասարապէս առատ էին և որտեղ, արեւմտեան նահանգներում, փոխհիւսիսները երկրագործութեան բոլոր ճիւղերը չափազանց առաջ էին տարել: Նոյնիսկ նորագոյն շրջանում հայերը ֆիսկալ են կէսմշակ, կէսհովիւ ժողովուրդ: Որքան որ նրանք աւելի էին առաջ գնում դէպի Քիւրդիստանի լեռները այնքան անասնապահութիւնը աւելի պէտք է շեշտւած լինէր: Սրանք որոշ չափով պահել են «նահապետական» բարքեր, թափառելու ախորժակ, գերադասում են վրանային կեանքը. սրանք ունին նաև ուրիշ շատ գծեր, որոնք դիտողին ապացուցում են կէս-հովիւ ժողովրդի կենցաղի արմատացած սովորոյթի ճշտութիւնը: Գալով հիտտիաների սօցիալական կազմակերպութեան և ներքին քաղաքականութեան՝ թւում է, որ Ֆէօդալական պէտք է լինին: Սրանք թագաւորներ ունէին, որոնցից ամենագորեղը Սապա-

լուլուներ. այդ թագաւորներն ընդհանրապէս շատ թոյլ էին նահանգական տէրերին հնազանդութեան մէջ պահելու համար. սրանից էր առաջ գալիս կառավարչական անկարգութիւնները և անմիութիւն բանակների մէջ, որոնք սակայն քաջ էին և կառքերով լաւ զինւած: Կարելի է ընդունել, որ հայերն իրենց ազգակից փոխհիւսիսների պէս լաւ հեծեալներ էին և այս անվահան ու անզրահ զօրքերի մէջ աչքի էին ընկնում յարձակողական զէնքի յանդուգն գործածութեամբ, չնայած որ ոչ մի դօկումենտ ցոյց չի տալիս թէ սրանք զինուորական որոշ գործողութիւնների մասնակցել են այդ շրջանում. սակայն՝ հաւանական է, որ այս բոլոր ժողովրդների նման հայերն էլ ունեցել են իրենց արկածները, յամենայն դէպս չի կարելի չճանաչել հայկական տիպի դիմագծերն այնպէս ինչպէս դեռ այսօր էլ երբեմն երևում են «հիտտիական» — անշուշտ ընդհանուր կոչում է սա — գլուխների վրայ, որոնց պրօֆիլները շատ ցայտուն կերպով ցոյց են տալիս եգիպտական արձանները: Թէև մեզ ոչինչ չի թոյլատրում դրականապէս պնդել, որ հայերը սօցիալապէս միացած կամ քաղաքականապէս կապւած են եղել իրենց զբաղմունքի հետ, բայց՝ նրանք էլ պէտք է հնդկա-եւրոպական ցեղերի մեծամասնութեան համար ընդհանուր ֆէօդալա-

կան կազմակերպութիւնն ունենային կամ առնազն պէտք է ստորաբաժանաժ լինէին տոհմերի (tribus) հիմք ունենալով ընտանեկան ժառանգութիւնը, որից յետոյ հեշտութեամբ կղանային ֆէօդալներ երբ մի գլխաւոր կարողանար իբրեւ գերիշխան տիրել ուրիշ զարմերի (clan) վրայ: Մենք տեսնում ենք, որ հայերը իրենց պատմութեան ընթացքում այս տեսակ կազմակերպութեան մէջ են յարատեւել: Արդեօք սրանք ընդունե՞լ են հիտտիտների գրութիւնը, որը թւում է թէ կապ ունի խալդէական պատկերագրութեան և կիպրիական այբուբենի հետ և որի մէջ Պ. Ենզըն հայոց պատմութիւնն յիշեցնող շատ մանրամասնութիւններ է տեսնում: Բայց՝ մենք այդ բանը չգիտենք. հիտտիտները չէին կարող յիշատակարաններ թողնել այդ դարաշրջանում, երբ միմիայն բարձրագոյն կառավարութիւնները խեցիի, բրոնզի կամ հատաքարերի վրայ արձանագրել էին տալիս իրենց գլխաւոր գործերը և քաջաքաղործութիւնների յիշատակը:

Որ հայ անունը IX դարուց առաջ ոչ մի յիշատակարանում չի յիշուում, դա մի պարզ հետեւութիւն է, որը հիմնած է հէնց հայի բռնած այն դիրքի վրայ, որով նա համբերութեամբ և անշեղ կերպով հետեւում էր իւր դանդաղ վերելքին դէպի Արեւելք:

Եթէ այս ենթադրութիւնները ընդունեն այն ժամանակ հասկանալի կլինի թէ ինչպէս հայերը բնականօրէն ընկնում են մարերի իշխանութեան տակ հէնց որ վերջիններիս նորածին կայսրութիւնը տարածւեց դէպի Փոքր-Ասիա: Մարերը Լուտիայի Ալուատ թագաւորի հետ ընդհարւեցին Ալիւս գետին տիրապետելու համար. կիաքսարը յաղթեց այս թագաւորին Պտերիայում, Ալիւսի արեւելեան ճիւղի հովտում: 585 թուի դաշնադրութեամբ լուտիացիներն ու սրանց հետեւ կարողացող յոյները յետ մղւեցին գետի այն կողմը, իսկ հայերը, ինչպէս նաև գետի միւս կողմում եղած ժողովուրդները, դարձան մարերի վասալներ: Հայերը շարունակեցին տանել այդ լուծը մինչև Աթահակի ժամանակ, որից յետոյ մարերի ամբողջ ունեցւածքի հետ անցան պարսիկների ձեռքը, երբ Կիւրոսը գահընկեց անելով Աթահակին հաստատեց պարսիկների գերիշխանութիւնը:

Ահա թէ ինչու հայերն եղել և մնացել են արեւելեան ձգտումներով մի ժողովուրդ. հայոց պատմութեան ամբողջ ընթացքում տեսնում ենք որ նրանք յաճախ յետ են մղել—լինի դա ի մեծ վնաս իրենց—հռովմի կամ Բիւզանդիայի քաղաքական և կրօնական ազդեցութիւնները. նրանք ընդհանրապէս չեն հաւատացել հելլենական քաղաքակրթութեան, որը հայի դրացիներ-

ըր, ինչպէս Պոնտոսի թագաւորը, ագահութեամբ էին ընդունում. նրանք կատարելապէս տոգորւում էին պարսկական գաղափարներով ու բարքերով, աւելի ու աւելի էին տարածւում դէպի Կովկասն ու Իրանը. և նոյն իսկ քրիստոնեայ դառնալուց յետոյ էլ քրիստոնէական վարդապետութեան էական կէտի վերաբերմամբ* ոչ միայն եւրոպական մտքի էվոլուցիայից գերադաս էին համարում ասիական պարզ հաւատալիքների սովորոյթը, այլ նոյն իսկ աւելի հեշտութեամբ տանում են մահմեդական լուծը քան թէ օրթօդօքս միջամտութիւնները: Այսպէս է ահա հետեանքները պարսիկների տիրապետութեան, որը կայծակի արագութեամբ տարածեց ամբողջ Փոքր-Ասիայի, Միջագետքի և Կովկասեան պարանոցի վրայ: Ահա այսպէս է սկսւում իրանցիների երկարատև գերիշխանութիւնը. և այն ժողովուրդները, որոնք Ասիայում կարող

*) Հայաստանում ընդհանուր առմամբ քրիստոնէական փրիստոփութիւնն ու դաւանարանութիւնը համաձայն են Արեւմտքին շնորհիւ այն հանգամանքի, որ մի կողմից՝ IV և V դարերում հայոց եկեղեցին տարածանութիւն չունեցաւ ընդհանուր եկեղեցու հետ և միւս կողմից՝ յունական բոլոր եկեղեցական հայրերի գրածքները թարգմանեցին հայերէն ինչպէս նաև շատ յոյն փրիստոփաներ: Սակայն՝ մեզ թւում է, որ կոնստիտուցիօնել հակառակութիւն կայ հելլինօ-լատինական նախաձեռնող, նոյնիսկ քրիստոնէութիւնն անընդհատ բարեփոխող ոգու և հայկական աւանդապահ, ոգու մէջ, որը մեծ նեղութեամբ է քաշ տրւում առաջինից:

կրնէին հելլենիզմը տարածել, յետ մղեցին Ալուատի բեռորդու Կրեսոսի պարտութեամբ, որին յոյները օգնեցին, պաշտպանեցին: Լուտիացիները այս ժամանակից սկսած միմիայն վաճառական յարաբերութիւն կարողանում էին պահել Ալիւսի այս կողմում եղած իրենց ստրկակից ընկերների հետ:

Քսենոֆօնը բերում է Կիրոսի և Կիաքսարի մէջ եղած մի խօսակցութիւն, երբ վերջինս դեռ «թագաւորների թագաւոր» էր, իսկ Կիւրոսը՝ նրա պալատի մի օֆիցեր. թագաւորը կամենում էր Նինվէի վրայ արշաւել, սակայն՝ հայերը, որ հարկատու և դաշնակից էին մարերին, հրաժարւում էին մասնակցել: Կիւրոսը Տիգրանի — սա մի հայ թագաւորի որդի է, որի անունը չգիտենք* — հետ կապած բարեկամութեան վրայ հիմնւած՝ արաջարկում է իւր տիրոջ օգուել այդ բարեկամութիւնից և դաւաճանութեամբ հնազանդեցնել հայերին: Այս բանի համար Կիւրոսին հարկաւոր էր հեծելագօրք. նա այդ ստանում է և գալիս Հայաստան: Այս երկրի թագաւորը գլխի ընկնելով այդ ծրագրի մասին՝ պատրաստւում է դիմադրելու: Կիւրոսը, որ լեռ-

*) Այս արձանագրութիւնը մեկնութիւնը զանազան վարիանտների տեղի է տւել, ուստի մենք հետևել ենք պ, Բևտիին, որի երկրորդ պատմութիւնը ամբողջացնում և ուղղում է առաջինը:

ները ճանաչում էր, բռնում է կիրճերը և բանտարկում իւր բարեկամի հօրը: Տիգրանն այդ ժամանակ որսի էր գնացել և լսելով իւր հօր բանտարկութիւնը խնդրում է Կիւրոսին ազատել իւր բանտարկեալին խոստանալով փող և զօրք տալ, բացի այդ՝ ծառայելնրա հրամանների տակ: Այդպէս էլ եղաւ. և Կիւրոսը հայկական զինւորներով բազմապատկեց Նինվէի վրայ արշաւող զօրքի թիւը: Հայ թագաւորի որդի Տիգրանը հայկական հեծելազօրքի գլխաւորն էր: Այս արկածը ցոյց է տալիս թէ ինչ աստիճանի հայերն ենթարկւած էին պարսիկներին: Կիւրոսը վերջապէս յիշեցնում է հայ թագաւորին, որ նա Աթահակին պարտաւոր էր հարկ տալ, բերդեր չչինել և գերիշխանի զինւորական գործողութիւններին մասնակցել: Այս ժամանակից սկսած հայերը կապւած քնացին Կիւրոսի հետ. երբ Կիւրոսը Բաբելոնը գրաւեց իւր բանակի մէջ հեծելազօրքի մի ընդհանուր հրամանատար ունէր Իամբաս (yambas) անունով: Կիւրոսի և Տիգրանի բարեկամութիւնը քնաց անաղարտ մինչև առաջինի մահը:

Ո՛չ Կիւրոսի որդի Կամբուսի թագաւորութեան ժամանակ—որը Նգիպտոսին տիրելուց յետոյ զբաղւած էր հնազանդութեան մէջ պահելով այդ երկիրը—և ո՛չ էլ ըմբոստ Կոմատայի կարճատեւ արկածի ժամանակ, որը Կամբուսի

մահւան ժամանակ փորձեց ձեռք բերել իւր յաջորդութիւնը, իւր գահը,—այլևս չի խօսւում հայերի մասին: Սակայն՝ հայերն սկսեցին դեր խաղալ Դարէհի թագաւորութեան (521—485) հենց սկզբից, երբ այս միմիայն Կոմատային սպանելով, առանց ուէ իրաւունքի, պարսից գահը բարձրացաւ: Քանի որ Կոմատան կարողացել էր ժողովրդի համակրութիւնը վաստակել, ուստի Դարէհն ստիպւեցաւ մաս առ մաս նորից նւաճել, հաստատել իւր իշխանութիւնը: Երբ Դարէհն զբաղւած էր Բաբելոնը նւաճելով ապստամբութիւն ծագեց երկրի բոլոր կողմերից: Հայերի ապստամբութիւնը, ինչպէս և մարերին ամենավտանգաւորն էր, որովհետեւ չնայած որ Դարէհ քիչ զօրք ունէր խալդէական ուժի առաջ այնուամենայնիւ ստիպւած եղաւ երկու զօրամասեր ուղարկել «մէկը պարսից Վիտարնայի հետ դէպի Մարաստան, միւսը՝ հայ Դադարչիսի ղեկավարութեամբ դէպի Հայաստան»: սրանից երևում է, որ միմեանց օգնելու քիչ տրամադիր հայերը Դարէհի ժամանակ, Կիւրոսի բարեկամութեան շնորհիւ, պահպանել էին կարևոր պօստերը: Հայերը միայն կարող էին օգտագործել թագաւորների սիրալիրութիւնը եթէ յետագայում իրենց մեծ դժբաղդութիւններ պատճառող ինտրանսիթան ազգասիրութիւնը չմղէր անմիտ ապստամբութիւններ առաջ բերելու: Հայաստանի սատրա-

պը թերևս դեռ Հիտարնէսն էր, առաջինը՝ որ մենք ճանաչում ենք և որի մասին Ստրաբոնը ասում է, թէ 521-ին, Դարէհի թագաւորութեան հէնց առաջին տարին է նշանակել: Աս Դարէհի նիգակակիցն էր. յոյն պատմիչը սրան թագաւոր տիրողոս է տալիս. այս կոչումը յետոյ էլ հանդէս է գալիս. և դա այն պատճառով, որ կամ գերիշխանները ոչ մի անյարմարութիւն չէին գտնում դրանով շոյել իրենց կայսրութեան հետ միացած ժողովուրդների ազգային սնափառութիւնը, կամ սատրապութիւնը ժառանգական դառնալով աստիճանաբար անկախանում էր: Դադարչիսը հանդիպեց ապստամբներին սահմանից ոչ հեռու մի գիւղի կամ փոքրիկ քաղաքի մօտ (avahana) Չուգա անունով, որը սահմանից հեռու չէր: Սա տեղի է ունենում Թուրավահարա ամսի 8-ին (531, ապրիլ 19): Բեհիստունի արձանագրութիւնը, որից այս տէկստն է վերցրւած, մեզ թոյլ է տալիս ենթադրել, որ այս հանդիպումը նպաստաւոր էր հայերի համար: *) Սակայն՝ երկու շաբաթ յետոյ պարտութիւններ կրեցին Տիգրայի արևելեան ամրոցի մօտ, որը այժմ կոչւում է Տիլ և գտնւում է Տիգրիսի մօտ (այստեղից ճիւղաւորւում է Բիթլիսի ճանապարհը). սա միևնոյն ամսի 18-ին էր (29 ապրիլ):

*) Տ, Իւստի. Պատմութիւն հին պարսիկների. եր. 53

Թաիկրաչի 9-ին (մայիս 20) մի երրորդ հարւած տեղի ունեցաւ Հայաստանում գտնւած Ուշուամա զինւորական քաղաքի մօտերքում. Դարէհի հրամանատարն այստեղ հաստատեց իւր բանակը թագաւորական ճանապարհը կտրելու յայտնի նպատակով. այդ ճանապարհը Հայաստանից գալով անցնում էր այդտեղից: Յայտնի չէ թէ հայերն էին արդեօք չափազանց վախեցել և չէին դիմադրում թէ իրենց հակառակորդն էր չափազանց թուլացել այդ յաղթութիւններից. Իրողութիւնն այն է, որ Դարէհի թշնամական գործողութիւնները կարողացան վերսկսել միայն յաջորդ տարւայ սկզբին: Նա Դադարչիսին փոխարինեց Վահումիզայով, որը Անամաքա ամսի 15-ին (520, յունվար 18) հանդիպեց ապստամբներին ասորեստանեան մի գաւառում, որի անունն արձանագրութեան մէջ ոչնչացած է, բայց՝ շօշափան աւանդութիւնը պահել է Իզդիլա անունը: Այդ ժամանակ պարսիկները առաջ մղեցին մինչև Անտիկարա (Տիգրի, Քիւրդստանում), ուր տեղի ունեցաւ մի ճակատամարտ, որից յետոյ միևնոյն հրամանատարը նորից կարգի բերեց, վերահաստատեց իւր բանակը սպասելով Դարէհին, Թուրավահարայի 30-ին (1. յունիս, 520): Վահումիչային յանձնարարեց կտրել Ռօուանտիզ կիրճը, որն Ատրօպատէնից տանում էր դէպի Ասորեստան: Ուրիշ կռիւներ ևս տեղի ու-

նեցան Նինվէի հիւսիսային հողերի վրայ: Այս դէպքերը պատմւած են Դարէհի սեպագն առձանագրութիւնների մէջ: *) Դարէհը փորագրել է տալիս իւր պատկերը Բեկիստանա (Բեհիստուն) անցքի ժայռերի վրայ. այս անցքը կըտրուի, անցնում է Տիգրիսը Իրանի հետ միացնող գլխաւոր ճանապարհը. այստեղ Դարէհի մօտ են բերւած ապստամբութեան ինն գլխաւորները. սրանցից եօթերորդն մի հայ է. այս հայի հայրենակիցներն անւանւած են «արմինիա» ներսրանց է, որ մի դար յետոյ Հերոդոտն անւանում է Αρμενιοι (Արմէններ) **):

Մի տարօրինակ արկածից երևում է թէ որքան ճարպիկ են եղել հայերը ամեն մի առթից օգտւելով իրենց առաջին կարգերը ձգելու գործում: Բաբելոնն առնելուց և պարիսպները կործանելուց յետոյ Դարէհը կարծում էր, որ արդէն կարող է հեռանալ մարերին ընկճելու համար. բայց հէնց այդ ժամանակ, Կոմատայի օրինակին հետեւելով—որը իրան՝ Դարէհի ձեռքով սպանւած Կամբելուի եղբոր Սմերդիսի տեղն էր դրել—մի հայ, Արախա անունով, ներկայանում է խալդեերին իբրև Նաբունայդի որդի և իրան թագաւոր հրատարակում 519-թւի դեկտեմբեր ամսին. սա-

*) Շպիկըլ, Պարսկական սեպագրեր:

**) Հիւլլման. Հայ Բերականութիւն, էջ 402

կայն՝ վեց շաբաթից կամ մի ամսից յետոյ գահընկեց է լինում մար Ուինդաֆրայի ձեռքով: Այս Արախան էլ միւս թագապահանջների հետ շղթայւած է Բեհիստունի քանդակի մէջ, որը Դարէհն է փորագրել տւել:

Այսպիսի խստութեամբ ապստամբութիւնը ճնշելուց յետոյ՝ թւում է, որ հայերը կատարեալ անկախութեան բոլոր ցանկութիւնները մի կողմ դրին քանի դեռ Աքիմենիան թագաւորութիւնը հաստատուն էր. հայերին հնազանդութեան մէջ պահելու համար՝ յատկապէս հաւատարիմ մարդկանց էին ընտրում կառավարիչ: Քսենոֆոնի ասելով, 401-ին Արտաքսերքսէս Բ-ի դէմ Կիւրոս Երիտասարդի մղած պատերազմի պատմութեան մէջ Ռերիբազը հանդէս է գալիս իբր արևմտեան Հայաստանի հիւպարք (այսինքն՝ ոչ թէ մի հասարակ սատրապ) և Արտաքսերքսէսի փեսայ Օրօնտասը՝ իբրև արևելեան Հայաստանի փոխարքայ: Աքիմենիտեանների իշխանութեան ժամանակ ժառանգաբար այս վերջին ընտանիքին էր յատկացւած այդ պաշտօնը:

Յայտնի չէ թէ արդեօք միմիայն պարսկական մի պատերազմում՝ յոյների դէմ Քսիրքսէսի կատարած արշաւանքում միայն հայերն առանձին զօրաբանակ են կազմել, որ Դարէհի փեսայ պարսիկ Արտոխմէս զօրավարի հրա-

մանատարութեան տակն էր: հայերի անունն այլ ևս յաճախ չի յիշուում նրա համար, որ այս շրջանում միայն զինւորական մեծ քաջագործութիւններն էին արժանի յիշատակութեան, այն էլ իշխանական անունները փարառանելու համար միայն. միւս կողմից՝ Դարէհի այդ աստիճան ճնշւած, սեղմւած կառավարութեան մէջ մի փոքրիկ, անկուտուրա, սեփական առաջնորդներ չունեցող, փայլուն կեդրոններից հեռու ընկած իր լեռներում ապրող ժողովրդի դերը շատ համեստ պէտք է լինէր, իսկ քաղաքականապէս՝ կարելի է ասել ոչինչ, չնայած որ միւսների նման երբեմն հայն էլ տալիս էր յանդուգն արկածախնդիրներ, որոնք պատրաստ էին առիթը բաց չթողնել փառք վաստակելու համար: Ընդհանրապէս սրանք էլ միևնույն վիճակն ունէին ինչ որ բոլորը: Թէ՛ Դարէհի հաւաքած բանակների մէջ—սրանք նման էին խառնիճադանճ հօտի. սրանք արշաւեցին Սկիւթիայի ու Թրակիայի վրայ 514 թւին և յաղթութիւն տարան— թէ՛ 494—493-ին Փոքր-Ասիայի յունական զաւորութիւններն ընկճող Դարէհի վաշտերի մէջ, և վերջապէս՝ յոյներից Մաքաթօնի պարտութեան վրէժը լուծելու համար հսկայական զինւորագրութեան մէջ, որը՝ 487—486-ին Եգիպտոսի ապստամբութեան պատճառով դադարեց, հաւանօ-

րէն հայերը կամայ թէ ակամայ ունէին իրենց բաժին ընկած զօրքը, որը պիտի կուէր իր հին եղբայրների՝ եւրոպացիների դէմ, որոնց հետ ցեղակից էր, բայց՝ բոլորովին մոռացել այդ մասին: Յայտնի չէ թէ սրանք ինչ չափով են մասնակցել այս ձեռնարկութիւններին. գուցէ այդ մասնակցութիւնը մեծ էր երբ Քսերքսէսը 800,000 մարդկանցով արշաւեց Աթէնքի վրայ և Հելլադան աւերելուց յետոյ՝ Սալամինի մօտ նաւատորմիդին հասած մեծ աղէտի պատճառով ամօթահար յետ քաշւեց. ենթադրելով, որ այս դէպքից յետոյ հայ զօրքը միացրեց երեք շարք թիավարներ ունեցող 300 նաւերից բաղկացած նաւատորմին (escadre) և 60,000-անոց բանակին, որ Քսերքսէսը յանձնեց Մարտոնիուսին, չգիտենք թէ Պլատէի մօտ ունեցած պարտութիւնից յետոյ—որտեղ սպանւում է Մարտոնիուսը—տուն վերադարձող 40,000-ից որքան հայեր կարողացան վեոադանալ հայրենի օջախը: Կայսրութեան կեդրոնական նահանգները, որոնց թւում նաև Հայաստանը, յոգնեցին այս հեռաւոր արկածներից, որոնք վերջում վերածւում էին յետադարձ կռիւների և խառնիճադանճ ընդհարումների. այս պատճառով էլ հրաժարւեցին մասնակցել Միջերկրականին զրացի սատրապների յարձակումներին, որոնցով դեռ շարունակում էին (476—465) ուժասպառ անել Աթէնքի

դրդմամբ Դելուս լիգայի ջանքերով միացած յու-
նական գաղութները:

Յայտնի է թէ հայերն ինչպիսի զէնքեր էին
կրում Քսերքսէսի բանակում: Փոքր-Ասիայի հա-
մարեա թէ բոլոր ժողովուրդներն նման և յատ-
կապէս փռիւզիացիների, որոնք հայերի կողքին
կանգնած էին կռուում, հայերն ունէին պղնձեայ
հիւսւած սաղաւարտ, մի նեղ վահան, մի կարճ
նիզակ, մի տէգ և մի երկար ու բարակ դաշոյն
(dague). նրանց ոտները պաշտպանւած էին եր-
կարափող կոշիկներով. հայերի հրամանատարն
էր Արտաքսերքսէս:

Արտաքսերքսէս Ա. (465—424) իւր թագա-
ւորութեան սկզբին միայն զբաղւեց Նեփտուսի
նոր ասպստամբութիւնն ընկճելով. սրանից յետոյ
թագաւորութիւնը խաղաղ անցաւ և հայերը
հանդէս չեն գալիս: Պետութեան ապագան ա-
պահովելու համար այս չափազանց թոյլ միա-
պետի մահով թագաւորութիւնն անիշխանութեան
մատնւեց: Սրա հարազատ որդին Քսերքսէս Բ.
քառասուն և հինգ օրից յետոյ սպանւեց իւր
հարազատ եղբայրներից մէկի ձեռքով. այս եղ-
բայրասպանը սպանւում է իւր եղբայրներից մէ-
կի՝ Օխսի ձեռքով:

Օխսը կարողանում է գրաւել պարսիկ ազ-
նականութեան, շատ սատրապետների և յատ-
կապէս Հայաստանի սատրապ ներքինի Արտաք-

սերքսէսի սէրը ու թագաւոր դառնալ Դարէհ Բ.
անունով (424—404). այս Արտաքսերքսէսը թա-
գաւորի ամենամեծ մինիստրներից մէկը դարձաւ:

Հելլենական աշխարհի դէմ Դարէհ Բ. ի ա-
րած ձեռնարկութիւնները և գահը ժառանգելու
համար ըստ սովորութեան եղած դաւերը զրգը-
ռեցին, առաջ բերին Տաս Հազարի արշաւանքը.
այս արշաւանքի շէֆ Քսենոֆոնը իւր «Անաբա-
զիս» գրւածքում նկարագրում է թէ այս Տաս-Հա-
զարը իւր նահանջի ժամանակ հր երկիրներից
անցկացաւ հիւսիսային բարձրավանդակները
մագլցելուց յետոյ, ինչպէս այդ ցոյց է տալիս
գրքի «անաբազիս» վերնագիրը: Յոյնի և Պար-
սկի այս դաշնակցութիւնը բացատրւում է ժա-
մանակի հանգամանքներով: Իօնական ծովեզե-
րեայ քաղաքները մէկը միւսի յետևից ընկան
Սարդայի սատրապ Տիսաֆերնէսի հարւածներից,
և այդտեղ Աթէնացիների ձեռքին մնացին միայն
երկու նաւահանգիստ՝ Հալիկարնաս, Նօտիօնը և
երեք կղզիներ: Աթէնացիները վրէժխնդրութեան
առիթ էին որոնում, նամանաւանդ որ Դարէհի
կրտսեր որդի Կիւրոսը (Նրիտասարդ), իւր անա-
գրոյն և զօրեղ մօր՝ Պարիսատիսի միջոցով Փո-
քր-Ասիայում մի իսկական թագաւորութիւն
ձեռք ձգելով, իւր Արտակէս եղբօրը գերազանց-
նելու համար դաշնակցել էր Հակեղեմոնացի-
ների հետ, որի շնորհիւ Սպարտան Աթէն-

քի դէմ ունեցած երկարատև հակառակութիւնից յետոյ էկոս-Պօտամօսում յաղթութիւն էր տարել (405)։ Կիւրոսը չյաջողեց գրաւել Արտակէսի տեղը—վերջինս իւր հօր մահից յետոյ Արտաքսերքսէս Բ. անունն էր կրում (404—358)—ուստի Սարտայում 13,000 հելլեններ հաւաքեց, չհաշւած 100,000 բնիկներին (401), և դրանց գլուխն անցնելով գնաց Կիւնաքսա—Բաբելոնի մօտ—ուր և սպանեց։ Ահա այս ժամանակ է, որ Տաս Հազար յոյները ազատելով վերագոռնում են Ասորեստանի և Հայաստանի վրայով Սեծովն անցնելու։ Սրանց ճշգրիտ ուղեգիծը (itinéraire) մեծ վիճաբանութեան առարկայ է դարձել։ սակայն՝ կարելի է ասել ստոյգ է, որ նրանք անցել են Եփրատի ակունքների մօտով և յաճախ պատահել հայերին։ Քսենոֆոնը հայերի մասին խօսում է իբրև նստակեաց մի ժողովրդի և բաւականին մանրամասն նկարագրում է նրանց բնակարանները և բարքերը։

Այս Տաս Հազարը Միջագետքից դուրս գալով հասնում է արևելեան Տաւրոսի ստորոտի մօտ գտնւած վերին Տիգրիսի հովտին։ Նրանք գետի ձախ ափին էին երբ իմացան, որ լեւան վրայ Քիւրդերն են (Kurde, Garduque) ապրում, իսկ այն կողմը հայերի երկրին կպատահեն։ Սրանց առաջ Հայաստանը նկարագրում են իբրև մի ընդարձակ և բարդաւաճ երկիր, որտեղից իրենց

ընտրած ուղութեամբ կարող են առանց գժւարութեան ճանապարհորդել։ Քիւրդերի այս սահմանի վրայ—այդ ժամանակ քիւրդերն անկախ էին Արտաքսերքսէս Բ.ից— սրանք անցնում են Վանայ լճի հարաւային զառիվայրերից իջնող Կենտրիտէս (այժմ Բօզան-Սու)* գետը, անշուշտ ոչ հեռու սրա և Տիգրիսի միացման կէտից։ Տաս Հազարին իմաց են տալիս, որ այդ գետի հիւսիսային կողմում գտնւում են պարսից հպատակ և սատրապ Օրօնդով կառավարող հայերը։ Սակայն՝ Տաս Հազարն ստիպւեց ուժով ճանապարհ բաց անել, որովհետև հայերից, մարտերից և խալիքերից բաղկացած մի բանակ դիմադրում էր Օրօնտասի և հրամանատար Արտուկասի առաջնորդութեամբ։ Տաւրոսի հարաւային իջւածքի զառիվայրին հասնելով արդէն Հայաս-

*) «Անաբազիս», IV, 3, I—Յաճախ Կենտրիտէսը կամ Բօզան-Սուն նկատում են իբրև Տիգրիսի «արեւելեան եղջիւրը»։—Այն լեռները, որոնք սրան բաժանում են Վանայ լճից, դեռևս հայկական Տաւրոսն են կազմում և ոչ թէ Նիֆատէս ինչպէս շատ աշխարագրներն են կարծել։ այս վերջինը ոչ թէ Վանայ լճի հարաւումն է, այլ՝ հիւսիսում, ուր դեռ այսօր էլ կայ մի լեռ, որին հայերն անւանում են Նիֆատ։ Թող իսկական Տաւրոսը բաժանւի հայկական Տաւրոսից Բիթլիս-Սուի հովտով, դարձեալ այս բարձունքի միևնոյն գիծը չի կազմել։ Վերջապէս՝ այս Բիթլիս-Սուն, որին Քսենոֆոն անւանում է Տելիբաս, Կենտրիտէսի մի ճիւղն է և ոչ թէ Տիգրիսի եղջիւրը ինչպէս երբեմն նշանակում են։

տանումն էին գտնուում. նրանք մագլցում են մի բարձրավանդակ, որը մեղմ գառիվայրերով իջնում է մինչև Տիգրիսը: Այստեղ այլ ևս գիւղեր չկային քիւրդերի դէմ հայերի մղած պատերազմի պատճառով: Քսենոֆոնը նկարագրում է մի աւան, որը յոյները գտնում են. հինգ փարսախ (37 քել. ^{1/2}) ճանապարհ անցնելուց յետոյ յայտնի չէ թէ որ կէտում բանակ դրին: Այս աւանը մի կարևոր կեդրոն էր, սատրապները բնակութեան համար կար մի դղեակ, իսկ գլխաւոր տները զարդարւած էին աշտարակներով: Այստեղից երկու իջևան անելով անցնում են տաս փարսախ և բարձրանում դէպի Տիգրիսի ափունքները: Այստեղ մի կողմից թշնամին ընդդիմացաւ լեռն անցնելուն, միւս կողմից՝ հաւաքած տեղեկութիւններից երևաց, որ այդ լեռն արդէն ճանապարհ չունի Տիգրանակերտը Խարբերդին միացնող անցքից այն կողմը, ուստի լեռնաշղթայի երկարութեամբ վերադարձան և այդպիսով գտան բարձրավանդակն անցնելու և Սև ծովին հասնելու համար ամենահեշտ ճանապարհը: Այդ ճանապարհը սկսւում է Տելեբօսա (Իիթլիս-Սու, կամ Մուշ գետակ) գետի հովտից: Այդտեղ հասնելու համար պէտք եղաւ երեք օր գնալով անցկենալ 15 փարսախ (112 քել., 5): Տաս Հազարի առաջնորդը պատմում է, որ այդ գետը այնքան էլ կարևոր չէր, բայց՝ շատ հաճելի էր և ափերը

ծածկւած էին բազմաթիւ գիւղերով. — այն տարածութիւնը, որի միջով այս գետն է հոսում, կազմում է «Արեւելեան Հայաստանը»: Նա Տարօնի նահանգ անունն էր կրում. և այս անունը հայոց պատմութեան ամբողջ ընթացքում միշտ էլ պահել է Մշի գաւառի համար: Այդտեղի սատրապը պարսից թագաւորի բարեկամ Տերիբազն էր. թագաւորը այս սատրապին միայն թոյլ էր տալիս, որ իրան օգնի ձի հեծնելիս: Տերիբազը, որ բացի իւր սեփական զօրքից իւր իշխանութեան տակն ունէր նաև վարձկան խալիբներին և տալիքներին, «հեծելազօրքով գալիս է յոյների առաջ, մի թարգման է ուղարկում նրանց գլխաւորի մօտ յայտնելու, որ ինքը ցանկանում է նրանց հետ խօսել»: յոյները վճռում են բանակցել ու դուրս են գալիս սրա դէմ, մօտենում ձայն լսելի դառնալու չափ ու հարցնում, թէ ինչ է ցանկանում Տերիբազը. սա առաջարկում է դաշն կապել, որի ուժով ինքը պարտաւորւի ոչ մի արգելք չյարուցանել, իսկ յոյները՝ չայրել բնակութեան տեղերը և բացի պաշարից ուրիշ ոչինչ չվերցնել: Յոյներն ընդունում են այս առաջարկութիւնը և դաշն են կապում: Այն ժամանակ Տերիբազի ընկերակցութեամբ, որը իւր զօրքերով տաս ասպարէզ (stade) հեռաւորութեամբ հեռուում էր յոյներին, երեք օրւայ ընթացքում (զօրքի գնացքով) տասնուհինգ փարսախ անց-

նում են դաշտի միջով, հասնում թագաւորական դղեակներին, որոնց շուրջը կռտակաձէին պաշարեղէնով լիքը բնակարանները: Գիշերը երբ քնած էին, սաստիկ ձիւն եկաւ. առաւօտեան վճռեցին, որ գինւորները իրենց առաջնորդների, իրենց գլխավորների հետ ցրեն գիւղեր, որովհետեւ այլ ևս ոչ մի թշնամի չէին տեսնում և առպտ ձիւն պատճառով իրենց ապահով էին համարում: Այստեղ նրանք ապրուստի համար հարկաւոր եղած ամեն ինչ գտան—մորթելու համար կենդանիներ, հացահատիկներ, հին անուշահոտ գինի, չամիչ, բանջարի ամեն տեսակ բոնւածքներ: Զանազան կասկածելի նըշանների պատճառով ստիպւեցին զօրքը կեդրոնացնել. սակայն՝ այն գիշերը, որ այսպէս անցկացրին ահագին քանակութեամբ ձիւն եկաւ այնպէս որ գէնքերն ու քնած մարդիկ թաղւեցին ձիւն տակ. լծկան կենդանիներն անգամ այնպէս էին խրել, կաշկանդւել, որ շատ մեծ դժւարութեամբ հազիւ կարողանում էին ձիւն միջից դուրս դալ: Աւելի վեր, բարձրանալով մինչև ջրերի բաժանման գիծը—անշուշտ այն լեռնաշղթայով, որ Կարինը բաժանում է Խնուսից և վերջանում Բինգէօլ-Դադով—ամբողջ երկիրը ծածկւած էր մի բազկաչափ ձնով: Այստեղ հազիւ կարողանում էին փայտ ճարել ամբողջ բանակը տաքացնելու համար, որը ցրուից

մեծ կորուստներ էր ունեցել. ապա՝ հետեւալ օրերում շատ գինւորներ քաղցից ընկան կամ ճանապարհին կորսւեցին, որովհետեւ ձիւնը դրանց կուրացրել էր կամ բթամատերը տարել. ոտնամաններն ու խրացքները խրւում էին կաշու մէջ և ոտքից գուրս գալիս, քանդւում: Յետ մնացած գինւորները եթէ մինչև գիշեր վրայ հասնելը չէին կարողանում մի գիւղի հասնել՝ այն ժամանակ քնում էին ձիւն տակ. սրանցից շատերը այնտեղ էլ թաղւած մընում էին զրկւելով պաշարից, որովհետեւ թշնամին յարձակումներ էր գործում և յետ մնացած կենդանիներին յետ դարձնում, խլում: Մի օր միքանիսն ուղեւորւեցին մի տեղ, որը սե էր երևում, հաւանօրէն ջերմուկը ձիւնը հալեցնելու պատճառով. առաջնորդը թախանձում էր, որ չգնան զգուշացնելով, որ թշնամին կարող է վրա հասնել և բոլորին սպանել, սակայն՝ նրանք այլևս չէին կարողանում գիմանալ ցրտի հասցրած տանջանքներին:

Նրանք անցան մի գետ, որը հաւանօրէն Եփրատի մի ճիւղն էր և կրում էր Պարսիս կամ Փաղիս անունը: Այս բանը սակայն առանց դժւարութիւնների չանցաւ. Բասենի ժողովրդները Տարօնի դաշտեցոց նման օտարից չէին վախնում, նրանք միանալով Տայքի և Խալուքների (հաւանօրէն խալդեր) խմբերի հետ Տաս Հագա-

րի յետևից ընկան, յարձակումներ գործեցին, բայց՝ յաջողութիւն չունեցան:

Այնուհետեւ հասնում են Խնուսի դաշտին անց կենալով Արսանիազը (Արեւելեան Եփրատ, այժմ Մուրադ—Սու.) իր ակունքի մօտ: Այստեղ Քսենոֆոնը տեղեկանում է, որ դեռ Հայաստանում է և հիւսիսում կգանի խալդերին: Աշխարհագրները այս կէտից սկսած հռչակաւոր նահանջի ուղեգրիժը զանազան ուղղութեամբ են տանում դէպի Սև ծովը: Երկու կէտեր սակայն դուրս են կասկածից. հայաստանը թողնելուց յետոյ Տաս հազարն անցնում է վերջին հետեւեալ ժողովուրդների միջով—նախ՝ տայքեցիները (Տաօք. Տաուխ), խալուքները, սկիւթացիները, մաքրօնները (Մաքրեր) և ապա՝ կօլխիտները. այս վերջինները գտնւում էին Տրապիզոնի մօտերը, հետեւեալ Պէյրման-Դէրէյի գետաբերանի մօտ: Սակայն՝ այս ժողովուրդներն ի՞նչ ուղղութեամբ էին յաջորդում միմիանց. արդեօք հարաւից դէպի հիւսիս-արեւմուտք՝ հետեւելով էրզրումից Տրապիզոն տանող բնական ճանապարհին, թէ նախ՝ հարաւից դէպի հիւսիս-արեւելք ապա՝ արեւելից դէպի արեւմուտք-հիւսիս-արեւմուտք՝ բարձրանալով Ճորոխի և այնուհետև Դէրմէն-Դէրէի հովտով: Մեզ համար անկասկած է, որ յոյներն այս վերջին ճանապարհն են ընտրել չնայած որ դա ամենից երկարն ու ա-

մենագիտարն էր: Եւ իրօք՝ հայերն այժմ էլ Տալք են անւանում մի գաւառ, որը էրզրումի հիւսիս-հիւսիս-արեւելեան կողմում ոռոգւում է Ճորոխի մի ճիւղից՝ Թորթում-Սուից, որը գրտնւում է այժմեան ոռոսական Օլթիի և տաճկական Իսպիր գաղայի միջև: Բացի այս՝ յայտնի է, որ մակրօնները բնակւում էին Պարիատրէսի վրայ այն տեղում, ուր այժմ լազերն են գտնւում: Վերջապէս՝ Քսենոֆոնի բնագրում երկար օրեր են թւած, որի համար անհրաժեշտ է առնւազն կրկնակի ճանապարհներ թափել քան թէ հարկաւոր է հիւսիս արեւմուտքից Տրապիզոն հասնելու համար: Գալով խալուքների և կօլխիտների ներկայութեան՝ դա որևէ ցուցմունքներ չի կարող տալ, որովհետև այդ ժողովուրդի հայրենիքը Տրապիզոնի շրջակայքը չէր. այդտեղ նրանք միայն գաղութներ կարող են ուղարկած լինել: Ուրեմն՝ երևում է, որ այն ժամանակ Հայաստանը հասնում էր մինչև Պոնտական երկրորդ Ալպերը. այս լեռնաշղթան այժմ կոչւում է Դումլի-Դաղ և Գեաւուր-Դաղ. նա հիւսիսային կողմից փակւում է էրզրումի դաշտը: Սրանից զատ՝ այս գնացքն այդ դարու հայոց քաղաքական և սօցիալական դրութեան մասին հետաքրքիր ցուցմունքներ է տալիս: Չնայած որ հայերը պարսիկների վասալներն էին, այնուամենայնիւ կատարելապէս տէր էին իրանց երկ-

րում, որտեղից դուրս արին իրանցից առաջ ե-
ղած բնակիչներին, այսինքն՝ խալդերին, որոնք
մասամբ ապաստան գտան Սև ծովի եզերքի
լեռնաշղթայի վրայ. հայերն երբեք յետ չմղե-
ցին ոչ սկիւթացիներից, որոնք խալդերի նման
միևնոյն աքսորին էին դատապարտուել, ոչ քիւր-
դերից, որոնք ընդ միշտ տեղաւորւած մնացին
Վանայ լճի հարաւային կողմում գտնւած իրենց
լեռներում, ոչ էլ մարտերից, որոնք ապ-
րում էին այս լճի և Ուրմիոյ լճի միջև:

Այս ընդհանուր ակնարկից յետոյ՝ նոյնպէս
հետաքրքիր կլինի մէջ բերել Քսենոֆոնի պատ-
մութիւնից մի քանի մանրամասնութիւններ, ո-
րոնք հայի տնտեսական դրութեան պատկերը
կներկայացնեն. այդ պատկերից կտեսնենք, որ
որոշ տեսակէտներով Հայաստանն այդ ժամա-
նակ աւելի բարգաւաճ դրութեան էր հասել քան
թէ այժմ: Սակայն՝ ոչ մի հիմք չկայ կարծելու, որ
հայերն իրանց մասնաւոր կեանքով աւելի ա-
ռաջ գնացած են եղել քան թէ այն ժողովուրդ-
ները, որոնք նոյնպէս հեռու են ընկած թէ ին-
նական կամ պոստական ավերից և թէ իրանա-
կան մեծ կեդրոններից: Յոյները փախցրին Տե-
րիբազին, որը նրանց խափում էր. նրա մարդ-
կանցից միայն մի քանիսին սպանելով խլեցին
մօտ քսանի չափ ձիեր և մի աւար, որը ցոյց է
տալիս օտարապնդի առասպելական մեղկու-

թիւնը, շռայլութիւնը. այդ աւարը Տերիբազի
վրան էր, որի մէջ կային արծաթեայ բաժակներ,
արծաթեայ ոտներով մահճակալներ և մի քանի
մարդիկ, որոնք մատուաւներ և հացթուխներ
էին կոչում իրանց: Պատմաբանը մի քիչ հեռու
յիշում է, թէ ինչ գտան եփրատի մօտ շինւած
զիւղերում, երբ յոյները անապատ բարձրավան-
դակների ձիւնի սպառնացած մեծ աղէտից ա-
զատուելով հասան այդտեղ. այն գիւղում, ուր ին-
քը՝ Քսենոֆոնը պատահմամբ բանակ դրեց, տե-
սաւ բոլոր բնակիչներին իրենց առաջնորդի,
գլխաւորի հետ. «այդ գիւղից պակասում էր միայն
տասնութօթմարուկներ (poulains), որոնց մի կողմ
էին դրել թագաւորին տուրք տալու համար. բա-
ցակայ էր նաև առաջնորդի աղջիկը, որն ինն օր
առաջ ամուսնացել էր. ամուսինը գնացել էր
նապաստակ որսալու. այդ կինը մօտակայ ոչ մի
տեղում չգտնուեց: Հողի տակ թաղւած բնակա-
րաններն երկու մուտք ունէին, այդ մուտքերից
մէկը մարդկանց համար էր, որը նման էր ջրը-
հորի բացւածքի. հողի երեսին հաւաքար մասը
շատ նեղ էր, իսկ ցածը՝ շատ լայն, ուր իջնում էին
աստիճաններով. երկրորդ մուտքը կենդանիների
համար էր և շինւած էր զառիվայր» *): Այսօր
էլ Հայաստանում ամեն տեղ չափազանց ցած

*) Անաբազիս. IV, 5:

դռներ կան և դեռ պատահում են այս ողորմելի նկուղներից, որոնք փորւած են լեռների լանջերի մէջ, կամ գտնւում են նոյնիսկ քաղաքների աղքատ թաղերում: Սակայն՝ երկար ժամանակից ի վեր արդէն գիւղական համարեա բոլոր բնակարանները դարձել են գետնի վրայ շինւած տներ: Սրան հակառակ միայն հարուստները կարողանում են մի բարձր տեղ ունենալ շինւած տաւարների վերև կամ մի առանձին սենեակում. ձմեռը, համարեա բոլոր գիւղերում, ամբողջ ընտանիքը, տասնութինգից քսան հոգի, միասին է քնում մի նեղ, կովերի բարձրութեամբ շինւած մի սարահարթի վրայ. սրանք վառելիքի պակասութեան պատճառով միշտ էլ այսպէս ստիպւած են եղել տաւարներին կից ապրել. «սակայն՝ աւելացնում է Քսենոֆոնը, այդ միևնոյն տան մէջ են գրտնւում այծերը, ոչխարները, կովերը, թռչունները իրենց ձագերով ու փոքրիկներով. բոլորը կերակրւում են վարի ախոռից, ուր պահւում է սնունդը: Այստեղ նոյնպէս կարելի է գտնել գարեջուր, լցւած հողէ ամանների մէջ, ցորեն, գարի և չամիչ: Այս անկերպարան ամանների մէջ դարին հաւասարւում էր բերանին, դրանց մէջ ընկղմւած էին եղեգնայ ծակ խողովակներ. խմելու համար բերանը դնում էին խողովակի վրայ և վեր քաշելով ծծում: Այս խմիչքն առանց ջուր խառնելու շատ թունդ էր, բայց՝ վար-

ժւածների համար խիստ հաճելի»: Քսենոֆոնն այս գիւղի շէֆին իւր մօտ ճաշի է հրաւիրում և նրան սիրելի դառնում տպահովեցնելով, որ իւր որդիներին չի վերցնի ծառայութեան համար: Այս երախտագէտ մարդը ցոյց է տալիս թէ ուր էին թագցրել գինին: Այս պատմութիւնից կարելի է եզրակացնել, որ բանակը գտնւում էր ոչ հեռու թորթումի հովտից, որը հիւսիսային կողմում միակն էր իբրև խաղող հասցնող վայր. այժմ այլևս գինի չեն շինում այդտեղ: Գալով դարեջրին, այժմ ոչ մի տեղ չի գտնւում, թւում է որ XVIII-րդ դարուց ի վեր—երբ Նիեբուրը այս կողմերում գտնում է մի տեղ, ուր դեռ նոյն ձևով խմում էին այդ խմիչքը—կատարելապէս ոչնչացել է: Նոյնպիսի մի օրինակ է խոզի ոչնչանալը մահմեդականների բռնութիւնների պատճառով. Քսենոֆոնն այս կենդանուն յիշում է հայերի պաշարեղէնները թրւելիս:

Հայերը պարսկերէն պիտէին, որը սակայն նրանց լեզուն չէր: Եւ իրօք՝ Քսենոֆոնը պարսկերէն թարգմանող մի մարդու միջոցով հարցնում է վերոյիշեալ շէֆից, գլխաւորից. «Ի՞նչ է այս երկրի անունը». սրան պատասխանում են. «Հայաստան»:—«Ի՞նչո՞ւ համար—շարունակում է հարցնել—վերցրել են այս ձիերը»:—«Դա տուրք է թագաւորի համար»: Սրանից յետոյ Քսենո-

Ֆոնն իմանում է, որ մօտակայ գաւառը խա-
լուքներինն էր: Մեր օրերում հայերն երբէք
չեն համարձակուում ասել, որ իրանք Հայաստա-
նում են, որովհետեւ այդպիսիներին նկատում
են իբրեւ յեղափոխականներ. բայց և այնպէս դա
էլ ճիշտ չէ, որովհետեւ ամեն տեղ բնակչութեան
մեծամասնութիւնը մահմեդականներ են: Այստեղ
քրիստոնեաները լաւ խօսում են տաճկերէն, սա-
կայն՝ իրենց այդ լեզուով խօսող դրացիների հետ
ամենօրեայ յարաբերութեան համար, այնինչ հին
ժամանակներում պարսկերէնը սովորում էին ամե-
նաբարձր քաղաքակրթութեան ցանկութեան հա-
մար. այս նահանգներում պարսիկները շատ հաղ-
ւազիւտ էին: Մի խօսքով՝ քաղաքակրթութիւնը
աւելի շուտ յետ է գնացել:

Դարէհի իշխանութեան ժամանակ քաղաքա-
կրթութիւնը բաւականին առաջ գնացած պէտք
է լինէր: Պարսից կայսրութեան միւս նահանգ-
ների նման Հայաստանն էլ կառավարւում էր
սատրապներով, որոնց այս թագաւորն ստեղծեց
մի հրաշալի քաղաքական նորութիւն մտցնելով:
Դարէհը չշարունակեց Տիկլատբալասար Բ-ի ա-
սորեստանեան սիստեմը, որը համարեա թէ բա-
ցարձակ իշխանութիւն էր տալիս իւր պաշտօ-
նեաներին և դրանց, իսկապէս ասած, դարձնում
էր փոխարքաներ, որոնք ենթարկւում էին տի-
րոջ տւած ուղղութիւններին. ընդհակառակն՝ նա

հասկացաւ, որ այդքան տարբեր-տարբեր ժողո-
վրդները հեշտութեամբ հնազանդ չեն մնայ եթէ
որոշ ազատութիւն չեն վայելի. միւս կողմից՝
դրանց հնազանդ պահելու համար հարկաւոր համա-
րեց նշանակած առաջնորդներին միշտ հսկողու-
թեան տակ պահել: Այս պատճառով էլ հոգս տարաւ,
որ իւրաքանչիւրը պահապանի իւր սեփական
հարստութիւնը (dynastie), իւր լեզուն, իւր գը-
րութիւնը, իւր բարքերը, իւր կրօնը, իւր մաս-
նաւոր օրէնսդրութիւնը, իւր առաջնորդների ա-
նունով փող կտրելու իրաւունքը: Դեռ աւելին՝
յոյնների խռովութիւնները վերացնելու համար
նրանցից պահանջում էր բոլոր նախնական հար-
կերը (charge antérieure), այն ինչ Տաւրոսի և
Կիարօսի լեռների վրայ ապրող բարբառոսների
մեծամասնութեան ազատեց դրական հարկից
(chagee positive), բացի որոշ տուրքից (tribut):
Այսպիսով սրանց ազգային փառասիրութեան
բաւարարութիւն տալով պահանջեց հնազանդու-
թիւն, խաղաղութիւն, կարգ ու կանոն, իրենց
երկրի միջով անց կացող սուրհանդակների և կարա-
ւանների համար յարգանք, ապահովութիւն: Այս-
պէս՝ ազգային կազմակերպութիւնները պահապ-
նելով պահանջում էր հնազանդութիւն, յարգանք
ընդհանուր օրէնքների: Ահա այսպէս էր Հայաստա-
նում ինչպէս նաև միւս տեղերում: 519 և 515
թւականների միջև Հայաստանը վերածւած էր

սատրապութեան. սակայն՝ քանի որ հայերի ապստամբութիւնը ցոյց էր տւել, որ նրանք օգտուում են իրենց ինքնավարութիւնից կատարելապէս ազատագրւելու համար, ուստի՝ ընդհանրապէս սատրապ էին ընտրուում ոչ թէ հայ իշխաններից մէկին, այլ՝ թագաւորին անձնէր պարսիկներից: Ինչպէս միւս նահանգներում, այնպէս էլ այստեղ սատրապի կողքին կային թագաւորական ուրիշ երկու պատւիրակներ— քարտուղարը և հրամանատարը: Դարէհն անձամբ ինքն էր ընտրում իւր սատրապներին, «ազգի բոլոր դասերից, հարուստից և աղքատից, օտարներից և պարսիկներից (Հերոդոտ, I, 153 և IX, 107, յիշատակութիւն երկու օտարների, մէկը լուտիացի, միւսը՝ յոյն)». սակայն՝ կարևոր սատրապութիւնները յանձնում էր արքայի մտնիւնների ընտանիքի հետ ամուսնութեամբ կամ արիւնով կապւած անձնաւորութիւններին միայն: Կարելի է կարծել, որ խաղաղութեան ժամանակ Դարէհը Հայաստանի համար միւսնոյն կարգ ու կանոնը հաստատեց ինչ որ յոյներին էր. «նա պահանջեց, որ սատրապութիւնների մէջ ամեն տեղ իշխանութիւնը յանձնւի ազնւական պատճառատարներին և ընտրովի կամ ժառանգական տիրաններին, որոնք անձնական շահից դրդւած հաւատարի կմնային թագաւորին». սակայն՝ քանի որ հայերը բոլորից աւելի էին աչքի ընկնում

իրենց ըմբոստ ոգով, ուստի՝ ինչպէս տեսանք, յաճախ սատրապ էին նշանակւում սրանց վրայ պալատին սիրելի պարսիկ իշխաններից կամ ներքինիներից: Թագաւորը սրանց նշանակւում կամ յետ էր կանչում իւր ցանկութեան համաձայն: «Սատրապներն ունէին քաղաքական կատարելի իշխանութիւն, մի արքունիք, թիկնապահ զօրք, պալատներ, պատէզներ, ահագին տարածութեամբ որսատեղեր... սրանք էին բաժանում տուրքը իրանց ցանկութեան համաձայն (Հերոդոտ, VI, 42, յիշատակում է մի օրինակ Սարգիսի համար)». նրանք էին հսկում արդարադատութեան վրայ և կեանքի ու մահւան իրաւունք ունէին: Հայաստանն այս հիմունքով կառավարողների ոչ անունը գիտենք և ոչ էլ ծագումը: Սակայն՝ այս մանրամասնութիւններից աւելի հետաքրքիր է ընդհանուր դրութիւնը, որից հաստատ կարելի է եզրակացնել, որ այս ժամանակից սկսած հանգստութիւնը, ապահովութիւնը, արդարութիւնը թագաւորում էր. գործառնութիւնը (transaction), մշակութիւնը, տարրական ինդուստրիան, քաղաքակրթութեան բոլոր գլխաւոր գործօններն ազատօրէն կարող էին զարգանալ այդտեղ. *) սատրապների հետ միասին թագաւորա-

*) Սատրապները «ոչնչացնում էին աւազակութիւնները, ծովահենութիւնները, քաղաքների մէջ եղած մըր-

կան քարտուղարը—որը «առերես գիւտնատան պէտքերի համար էր ուղարկուում, սակայն՝ իսկապէս սատրապի վարմունքի վրայ հակելու և մինիստրներին տեղեկագրելու պաշտօնն ունէր»¹ լրացնում էր քաղաքական ադմինիստրացիայի մեխանիզմը՝ իւր վերահսկողութեամբ գաւառի ազգային ձգտումներից և շէֆերի փառասիրութիւններից բարձր պահելով ընդհանուր շահերը: Վերջապէս՝ կարնաւ մի ընդհանուր հրամանատար, որը թագաւորի հայեացքների համաձայն առաջնորդում էր պարսիկ զինւորներին, տեղական միլիցիային և օտար, վարձկան զօրքին: Շատ յաճախ այս հրամանատարները սատրապի և քարտուղարի թրշնամիներն էին լինում: «Աւելի մեծ նախազգուշութեան համար թագաւորն ամեն տարի պաշտօնաւորներ էր ուղարկում, որոնց անւանում էր իր աչքեր կամ աղանջներ: Սրանք յանկարծ

ցաւցութիւնները, տեղական պատերազմները. այն խընդիրները, որ առաջ գէնքով էին լուծում այժմ դատարաններում էին վճռում և պէտք եղած դէպքում կատարի ուժով այդ վճռին էին ենթարկում երկու կողմերին էլ: Սատրապները պահում էին ճանապարհները և հսկում էին, որ գիշեր-ցերեկ ապահովութիւն լինի. նրանք պաշտպանում էին ինդուստրիան, երկրագործութիւնը, և իրենց կրօնի սկզբունքների համաձայն՝ պատիւ էին համարում անմշակ դաշտերը մշակել տալ և մերկ տեղերում անտառներ տնկել»: (Մասպերօ. հ. III. երես 692): Ահա առաւելութիւններ, որ այժմ չկան:

երևում էին, երբ ամենևին չէին սպասում, քննում քաղաքական կամ ֆինանսական դրութիւնը, ադմինիստրացիայի գեղծումների առաջն առնում, յանդիմանում կամ պաշտօնից հեռացնում պաշտօնատարներին. սրանք իրանց հետ բերում էին մի գունտ զօրք, որի ուժով իրագործում էին իրենց վճիռները... Բաւական էր մի վատ հաղորդագրութիւն, մի թեթեւանկանոնութիւն, նոյնիսկ մի հասարակ կասկած, որ սատրապը պաշտօնանկ լինէր: Երբեմն սատրապներն պաշտօնից զրկւում, յաճախ մահաւան էին դատապարտում առանց դատարանի» (Մասպերօ): Զհաշւած այս վերահսկիչները, այս քննիչները—սրանք այժմ էլ նոյնքան անհրաժեշտ կարող են լինել, որքան առաջ—այժմ Օսմանեան տիրապետութեան տակ Հայաստանը կառավարւում է նման մի սիստեմով և հաւանական է, որ միւս տիրապետողները՝ հոռմէացիները, բիւզանդացիները, արաբները այս միևնոյն տրագիցիան պահպանում էին հայերի վերաբերմամբ: Նոյնիսկ կարելի է ասել, որ եթէ Հայաստանը ազատւում էր այդ տրագիցիայից, կամ եթէ նրա անկախութեան ցաւը վերակենդանանալիս ձախողաբար նրան ազատում էին, դա նրա կորստեան պատճառներից մէկն էր լինում. մենք յաճախ տեսնում ենք իսկական հայ սատրապներ—սրանց երկրի թագաւորներն էին ընտրում տէրերի և

իշխանների միջից, կամ աւելի շուտ սրանք իրենց ուժով և պատուով ստիպում էին թագաւորներին, որ իրանց ընտրեն—որոնք ի չարն էին գործադրում, շահագործում էին իրանց կամայական իշխանութիւնը և միմիանց դէմ մըրցակցելու պատճառով երկիրը մատնում էին անիշխանութեան, կամ հայրենիքին դաւաճանելով անցնում էին թշնամու կողմը։ Չնայած որ Դարէհի այս սխտեմի գլխաւոր նպատակը տուրքեր հաւաքելն էր, և սատրապներն ամենից առաջ այս պաշտօնի համար էին, սակայն՝ կարելի է ենթադրել, որ այն կանոնաւորութիւնը, որով սրանք գործում էին, և հաստատւած կարգ ու կանոններից առաջացած առաւելութիւնները հնարաւորութիւն տւեցին հայերին արդիւնաւէտ կերպով աշխատել իրենց նիւթական բարգաւաճման համար։—Թուում է, որ դեռ առայժմ խօսք չի կարող լինել գիտական, գրական կամ գեղարւեստական կուլտուրայի մասին։ Մի ուրիշ մասնաւոր առաւելութիւն ևս, որից կայսրութեան բոլոր կողմերի նման հայերն էլ կարող էին օգտւած լինել, դա տեղական փող ունենալու ներմուծութիւնն էր։ Ոսկի կամ արծաթ դարէհական դրամը երբէք հարիւր երրորդականից աւելի խառնուրդ չի ունեցել։ սակայն՝ դրա գործածութիւնը ստիպողական չլինելով միմիայն միջերկրականեան նահանգներումն էր քննարկւում։

կեդրոնի նահանգները շարունակում էին կշռել ծոյլերը (lingots) և սեփական դրամ կտրել (Ներոդոտ, III, 96). և այս ցոյց է տալիս, որ այդ նահանգները հաւասարապէս չէին գնահատում առաջադիմութիւնը։ Տուրքի բաւական մի խոշոր մաս կազմում էր պարբերական բնական տուրքից, որը յատկացրած էր արքունիքը կերակրելուն և զինւորական պէտքերին։ Հայերը հարկ էին տալիս 30,000 մտրուկներ։ սրանից զատ՝ սատրապներն ապրում էին բացառապէս իրենց նահանգի ծախքով։ Իսկ դրանց և իրենց սվիտայի պերճ, շռայլ կեանքը պակաս ծանր հարկ չէր դառնում։ Արտաքսերքսէս Բ-ի ժամանակ (406—358) Հայաստանը կազմում էր կայսրութեան տասերեքերորդ սատրապութիւնը։ հայր մինչև Սև ծով եղող դրացիների հետ միասին 400 տաղանտ փողով տուրք էր վճարում։ Սա մի գումար էր, որ տատանւում էր Բաբելոնի վրայ դրած 1,000 տաղանտ տուրքի և Արախօսի նահանգի 170 տաղանտի մէջ (արդի Աֆղանիստանի նահանգը)։ Տաս չազարի նահանջի ժամանակ Քսենոֆոնն իրերն այս դրութեան մէջ է գտնում։

Կարճ ասած՝ երևում է, որ պարսից տիրապետութեան ժամանակ հայերը բաւական ազատ մի ընթիմով են կառավարւել։ Հնդկա-եւրոպական ծագում ունեցող մեծ ազգերի մեծա-

մասնութեան նման պարսիկներն էլ ունէին մի սահմանադրութիւն, որը խիստ կերպով որոշում էր իրենց ազատութիւնը, ճշգրտօրէն սահմանում ժողովրդի և իշխանի փոխադարձ իրաւունքները*։ Մի բնական անալօգիայով սրանից կարելի է եզրակացնել, որ միևնոյն սկզբունքները գործադրում էին նաև վասալ ազգերի վերաբերմամբ։ Հայերն այս իշխանութեան տակ միւս բոլոր ազգերից աւելի մեծ յարմարութիւններ ունեցան իրենց սեփական ոգով ապրելու. նրանք նոյնիսկ ի վնաս իրենց դրացիների կամաց-կամաց սկսեցին մեծանալ և պատրաստուել մեր դարուց առաջ և դարում յանկարծ և վաղանցուկ կերպով տիրել արևմտեան Ասիայի մի մեծ մասին։

«Սելեկեանների իշխանութիւնն երբէք չըկարողացաւ հաստատուն կերպով հիմնուել այս լեռնոտ նահանգում, ուր պարսկականութիւնը (persisme) աւելի խոր արմատներ էր ձգել քան թէ կապադովկիայում**»։ Այս դատողութիւնը, գնահատութիւնը մեզ կասկածել է տալիս, որ Փոքր-Հայքի—սա շատ հեռու էր և կարող էր մասամբ խլել տիրոջ ճանգերից—և աւելի անմիջապէս պալատի հետ կապւած արեւելեան Մեծ-Հայքի ընթերցմեր կարող են տարբեր եղած լինել։

*) Թ. Իւստի. Հին. պարսիկ. պատմ. էջ. 36.

**) Թ. Ռայնախ. Միթրադ. Եւպատ. էջ 101.

Սակայն՝ այս վերջինն է կատարել պատմական այն մեծ դերը, որը մենք պէտք է ուրազը ծենք։ Այս բանի պատճառը պէտք է ուրիշ տեղ որոնել. արեւելքում հայերը թւով գերակշռող դարձան, տիրապետող իրանց երկրում, այն ինչ Եփրատի և Ալիւսի միջև շարունակ խառնած մրնացին բազմաթիւ ուրիշ ժողովրդների մնացորդների հետ, որոնց մասամբ հալածեցին, քշեցին. այդ ժողովրդները հետեւեւներն են՝ Գատաօնները, որոնք բնակւում էին Եփրատի երկու ճիւղերի միջև Ասիլիդէնում (այս նահանգի այժմեան կեդրոնը Երզնկան է), Զօֆէնի (այս նահանգը հայերէն կոչւում է Մոփք, սրա կեդրոնը Սարբերդն է), Օդօմանտիդի, Անգիտէնի (Տիգրիսի ակունքների մօտ, Ամիդայի և Դիարբէքի շրջակայքում), Արգամէնի փոփոխական, զանազան ժողովրդները, ասորեստանցիները, որոնք արեւելեան Եփրատի ակունքների հովիտներում գաղութներ էին հաստատել (Տարօնիտիտ, Տարօնի երկիրը, այժմ Մշի գաւառը), խալուքները (սրանց Սրատբոն նոյնացնում է խալդերի հետ) և մօսունէաները (յետոյ կոչեցին Մօշի, Մօսին, երբ խալուքների նման գաղթեցին Սև ծովի եզերքները), որոնք գտնւում էին արեւմտեան Եփրատի մօտ (կարենիտիդ, հայերին Նաւրին, այն նահանգը, ուր յետագայում հիմնեց Թէօօսիօպօլիսը, հայերէն Կարնոյ քաղաք, արդի

էրզրումը, — Դէրզգեն, Բէրջանը, Ասիլիսէնի հիւսիս — արեւմտեան կողմում), Իբերները, որոնք բնակւում էին Պարիադրէսի հանդիպագօտինների վրայ և Կուրի վերին հովտում (Սօրդէն, որը չպէտք է շփոթել մեր տեսած միւս Սօրդէնի հետ, արդի Դերսիմում. Գօգարէն, Թիֆլիսի և Ալէքսանդրօպօլի միջև, այժմ Կազախ և Բօրչալու):

Երկրի արեւելեան կողմում, որին հայերը տիրում են, այսինքն՝ Եփրատի ակունքների վրայ և Վանայ լճի աւազանում, գուցէ նոյնպէս փոփոխական ժողովրդների պատահեցին հայեր, որոնք մեծ մասամբ խալդ անունն էին կրում և բաւական միատարր ազգագրական մի այնպիսի կրուպա էին կազմում, որը ընդունակ էր յետագայում ամբողջ Ուրարտուին տիրապետելու: Այս թագաւորութիւնն իւր անունն ստանում է Արարատ նահանգից, որը ընկած էր այժմ միւսնոյն անունը կրող, բայց՝ հնում Մասի կոչւած հսկայ լեռան ստորոտում: (Չպէտք է հրէաների նման շփոթել այս Մասին կամ Մասիօսը Միջագետքի Մասիօսի հետ): Սակայն՝ այս թագաւորութիւնը տարածւում էր նաև դէպի հիւսիս՝ Արաքսի հովիտը, դէպի հարաւ՝ Վանայ լճից այն կողմը մինչև Ուրմիոյ լիճը. խալդ բառի յունական թարգմանութիւնը լինում է Χαλδαί. Այս գաւառներում բնակւող գլխաւոր ժողովրդներին յոյն գրողները միաժամանակ անւանում են

Αλαροδοί: Եւ քանի որ յոյները չեն ճանաչել երկու այդպիսի փոքր ինչ ծանօթ, տարբեր ժողովուրդներ, ուստի դրանից եզրակացրել են, որ այդ երկու անունները մի ազգի են վերաբերում: Այժմ այս կարծիքը ընդհանրապէս ընդունւում է, չնայած որ որոշ պատմաբաններ*) ձեռնպահ են մնում նկատելով, որ չկան բաւականաչափ ճշգրիտ փաստեր ուրարտացիներին, խալդերին և ալարօցիներին նոյնացնելու համար: Այստեղ դժւարութիւն են առաջ բերում միայն վերջին երկու անունները. ուրարտացի կոչումը երբեք չի կարող ազգագրական նշանակութիւն ունենալ. նա նշանակում է Ուրարտուի բնակիչ, որն և լինի այդ բնակիչը: Արդ՝ ստոյգ է երևում և այն, որ այս տեղի ժողովրդներից գլխաւորը յոյների կոչումով ալարօցիներ է, իսկ իրենք իրենց անւանել են խալդեր: Հայերը քաղաքականապէս բռնելով այս ժողովրդների տեղը խաղաղ ապրելու համար համաձայնութեան եկան այն մեծ մասի հետ, որին հեռուն չէին քշել, ուստի շատ ճիշտ է, որ ֆիզիօլոգիական այս նոր տարրն ևս կաւելանար շատ ուրիշների վրայ հայի վերջնական տիպը կազմելու համար: Սակայն սխալ է խալդերին համարել իբրև «Պրօտօ-Արմէններ»: Այժմ

*) Հիւբշման. Արարատ նահանգի մասին.

մենք գիտենք, որ սրանց մէջ ծագման ոչ մի արիւնակցութիւն չկայ, որովհետեւ խալդերը հնդկա-ևրոպացիներ չեն եղել: Ձուլումը յետոյ է առաջ եկել և վերջին ժամանակի տարրը իւր անունը տւել է միւսներին, այսպէս ինչպէս որ ֆրանկներն աւելի կամ պակաս չափով խառնւել են Կելտերի և Լիկուրների հետ, որոնց հետ ոչ մի ազգակցութիւն չունէին և ստիպամբ վերջիններիս տւել են իրենց անունը: Աւելի շուտ կարելի է ընդունել խալդերին նախահայեր տիտղոս տալը՝ եթէ դրանով ուղղում են ասել, որ հայերից նախ, առաջ են եղել այդտեղ, հող են պատրաստել հայերի համար և նրանց իբրեւ ժառանգութիւն թողել են իրենց սեփական քաղաքակրթութիւնը: Եւ իրօք՝ հայկական քաղաքակրթութեան համար էական գործօն է դառնում խալդական քաղաքակրթութիւնը:

Քանի որ մենք հասել ենք այն դարին, երբ հայերն անցան Ուրարտու, ուստի՝ անհրաժեշտ ենք գտնւում ամփոփել այստեղ խալդերի պատմութիւնը: Հայերի այս գաղթականութեան համար մի թւական որոշել չենք կարող, որովհետեւ նա զէնքով, յանկարծ ներս չի խուժել, այլ՝ արդիւնք է մի դանդաղ ներմուծման, ինչպէս աւանդաբար կատարել է այդ մշակ և հովիւ ժողովուրդը, որին տակաւին չենք տեսել և դեռ երկար ժամանակ չենք տեսնի զինւորական մի գոր-

ծողութիւն ձեռնարկելիս. մենք միայն այն գիտենք, որ այս երևոյթը կատարւում է Հերոդոտի «Պատմութիւնը» Քսենոֆոնի «Անաբազիսից» բաժանող վաթսուն թէ ութսուն տարիների միջև: Առաջինը եզէեան ծովից մինչև Իրանի բարձրավանդակ հասնող Ասիայի բնակիչները թւելիս արեւմտեան կողմումն է տեղաւորւում մարերին և ալարօդներին, որոնք ուրեմն՝ դեռ առանձին մի ազգութիւն էին կազմում, չնայած այն հանգամանքին, որ Ասորեստանի հետ ունեցած պատերազմները սպառել, կազմալուծել էին դրանց ինչպէս շուտով կտեսնենք: Չի կարելի ենթադրել, որ հայերը սրանց հետ խառնւած էին, որովհետեւ Հերոդոտը հայերին տեղաւորում է կիլիկեցիների արեւելեան և մատիէնների արեւմտեան կողմում. նա աւելացնում է, որ առաջին երկուսի մէջ սահման էր կազմում Եփրատ գետը. և Հայաստանը կտրելու համար հարկաւոր էր 15 օթեան: Ուրարտացիները երբէք այդքան հեռու չեն անցել դէպի Արեւմուտք: Ամէն բան փոխւած է երբ Քսենոֆոնը իր Տաս Հազարն առաջնորդում է Վանայ լճի աւազանով: Մենք տեսանք, որ Քսենոֆոնը անցկենալով այն երկրից, ուր առաջ խալդերն էին բնակւում, ամէն տեղ էլ նրան առում էին, որ ինքը Հայաստանումն է գտնում. և նա այլևս չի յիշատակում Հերոդոտի Αλαρδοίσι Ուրեմն՝ հայերի

Ուրարտուին տիրապետելը վերջանում է խաղաղ կերպով, պարսից* տիրապետութեան ժամանակ. և այդ լինում է հետևանք նախ՝ դէպի արևելք և ապա՝ դէպի հիւսիս եղած մի մղումի։

Ոչ մի հիմք չկայ ենթադրելու, որ հայերը խաղերին բռնի ուժով են դուրս քշել. սակայն՝ հայերը ստիպեցին պատերազմից սպառնալով այդ ժողովրդին նահանջել այնպէս՝ ինչպէս շատ ուրիշ մշակ ժողովուրդներ վռնդել են պատերազմասէր այն ցեղերին, որոնք նախ քան հողին կաշելը, նստակեաց կեանքին վարժելը կորցնում էին իրենց կորովը։ Յամենայն դէպս նորեկներն ընթացել են իրենց նախորդների հետքով։ Եւ իրօք՝ խաղերը նախ՝ գտնւում էին Վանայ լճի հարաւային կողմում, յետոյ՝ բարձրացան այդ լճի աւազանի հիւսիսային կողմը դէպի Արարատ։ Այստեղ նոյնպէս հայերը գալիս են սրանց տեղը բռնելու և Վանայ լճի, Արաքսի ու Եփրատի միջև Մեծ-Հայքը կազմելու։ Վերջապէս՝ աւելի ուշ հայերը նոյնպէս բռնում են խաղերի տեղը ամբողջ Արաքսի հովտում մինչև Կուր գետը։ Սակայն՝ անհրաժեշտօրէն ամեն տեղ էլ հին բնակիչներից որոշ չափով քնացած կլինէին, որոնց նորերը կձուլէին իրենց հետ։ Միւս կողմից՝ Դարէհի ժամանակ Մեծ-Հայքը

*) Հիւրշման. Հայ Գեր. էջ. 402.

կազմում էր տասերեքերորդ սատրապութիւնը, որը սակայն՝ չէր անցնում վերին Տիգրիսի և Եփրատի աւազաններից— Տաւրոսի և ստորին Արմանիասի (արևելեան Եփրատ) միջև. այն ինչ ուրարտացիները միացած մատիէններին ու սասպիրներին (Ճորոխի հովտում, Իսպիրի հովտի բնակիչները) կազմում էին տասնութերորդ սատրապութիւնը միևնոյն դարում, միևնոյն ժամանակ։ * Այս միևնոյն սատրապութիւնը, «ուր ըստ հերոդոտի ալարոցիներն էին բնակւում, Քսենոֆոնն (Անաբազիս. IV, 4) անւանում է արևելեան Հայաստան»։ Սակայն՝ այն երկիրը, որ պարսկերէն Արմինա անունն էր կրում (Շօշի բառբառով հարմինիայ), Բաբելոնի լեզուով կոչւում էր Ուրաստու (Ուրարտու ձևից կազմած)։ Քաղաքանապէս գոնէ՝ ալարոցիների տերրիտորիան միացել է Հայաստանի տերրիտորիայի հետ, իբրև մեծ հայկական թագաւորութեան, միմիայն յոյների ժամանակ, Ք. ա. 189-ին մօտերք, հայոց Արտաշէս (Արտաքսիաս) թագաւորի ձեռքով (Ստրաբոն, 551). սրանից յետոյ արդէն ալարոցիների ազգայնութիւնն ամբողջապէս ոչնչանում է*։ Սակայն՝ դրանց հետքերը գտնւում էին Տրապիզոնի գաւառներում խաղիներ

*) Բելք և Լըման, Հետազօտութիւններ խաղերի Պատմութեան.

*) Մեյէ. Հնութեան պատմութիւն. 1. էջ 297.

անւան տակ մինչև XV դար Ք. յ. և Վանայ լճի աւազանում խալդէներ անունով, ուր դեռ մինչև հիմա էլ մի խումբ քրիստոնեաներ այդ անունով են ապրում*:

II.

Թւում է, որ խալդերի մէջ քաղաքակրթութիւնը նոյնքան փայլուն էր, որքան ասորեստանցիների ժամանակ Առաջաւոր Ասիայի մէջնից առաջադէմ ազգերի մէջ. բայց՝ որովհետև ասորեստանցիները թէև դժւարութեամբ, սակայն՝ այնուամենայնիւ կարողացան ընկճել խալդ թագաւորներին, որոնց գլխաւորները Արդիստիսներ և Մինուաղներ էին. միւս կողմից՝ գուցէ մարերը կամ յամենայն դէպս պարսիկները հեշտութեամբ հպատակեցրին, իսկ հայերն էլ առանց ընդդիմութեան հեռու մղեցին սրանց, — ուստի խալդ հարստութիւնը, «որը գերակշռութեան համար մրցել էր ասորեստանցիների հետ, նսեմանում է և ժողովուրդը — որին երբէք չէր կարողացել կառարելապէս խորթ թափանցել այս հարստութիւնը — արագ քայլերով դիմում է դէպի իւրբնական կոպտութիւնը, վայրենութիւնը: Սակայն՝ մի քանի բան պէտք է մնար սրանց անցեալ փառքից, որի յիշատակը քանդակած է Վանի հրաշալի ժայռի

*) Մասպերո, վեր. յիշ. հ. Գ. էջ 520.

վրայ: Թէ ինչ դրութեան մէջ էր այս ժողովուրդը պատմութեան մէջ առաջին անգամ հանդէս գալիս, այդ մասին եղած տեղեկութիւնները լաւ կերպով կարող կլինենք ամփոփել եթէ պ. Մասպերոյ քաղենք. սրանից զատ՝ դարձեալ այդ գիտնական հեղինակից պէտք է վերցնենք այս ժողովրդի համառօտ պատմութիւնը մինչև այն ժամանակ, երբ հայերը տէր դառնալով սրանց երկրին սկսում են ազգագրորէն ձուլւել սրանց հետ և քաղաքական յիշատակարաններում հայ անունով փոխարինել խալդ անունը:

Մենք անհրաժեշտ ենք համարում դեռ մի քանի նախնական դիտողութիւններ անել: Դեռ ապացուցւած չէ, որ այս ժողովուրդն իրան խալդ անուն է տւել. պ. Բելլը կարծում է, որ այդ անունը կարդացել է Վանի խալդական անձանագրութիւնների մէջ (տես Zeitschr. für Ethnol. Բերլին, 1899, էջ 116): Պ. Սէյսն ընդհակառակը հաւատացնում է, որ այդ աղբիւրների մէջ երբէք չի պատահել այդ տեսակ անւան, և որ ասորեստանցիների Պալդիա (Χαλδία) անունը նշանակում է Պալդիս աստուած: Այս անունից ամենայն իրաւունքով կարելի է Պալդիսի որդիներին, այսինքն՝ այս աստուծուն պաշտող ժողովրդին անւանել խալդեր, ինչպէս Ասսուրի

աստծուն երկրպագողներին կոչել են Աստուրիներ (Ասորեստանցիներ*):

Դեռ սրանից աւելին՝ Ուրարտու անունը, որ տալիս են այս ժողովրդի գրաւած երկրին, աւելի յարմար չէ քան Բիայինա. որովհետեւ խալ դերն աւելի շուտ Վանայ նահանգումն են բնակւել քան թէ Արարատի. սրանք Վան են եկել իրենց կառավարութեան աթոռը հաստատելու համար՝ ինչպէս աւելի յետագայում միևնոյն բանը հայերն են անում: Վան Բուանա ձևի միջնորդութեամբ Բիաինայից առաջացած մի ձև է:

« IX-րդ դարու կիսում Ուրարտուն բաժանւած էր շատ մասերի »:

Կարծում են, որ Ուրարտուն գտնւում էր Արարատի և Արաքսի կողքերի վրայ, ... Ուրարտու միակ անունն է, որ ասորեստանցիներին ծանօթ է Վանի թագաւորութեան համար. ասորաբնական (assyriologique) ուսումնասիրութիւնների հենց սկզբին իմացան այդ բանը, ինչպէս նաև եփրայեցիների Արարատի և Հերոդոտի ալարոդցիների հետ նրա ունեցած նոյնութիւնը*...: Մաննաիցիներին սկզբում նոյնացնում

*) Հ. Ֆ. Բ. Լինչ. Արմէնիա. II հատ. 56 և 57 եր.

**) Այս արտայայտութիւնը չպէտքէ այնպէս հասկանալ, որ խալդերը հայերի նախնիքներն են եղել, այլ՝ նրանք առաջուց բնակւած են եղել այն երկրում,

էին Վանի ժողովրդի հետ. սակայն՝ Սէյսն առաջին անգամ իմացաւ, որ դրանց տեղը պէտքէ Ուրմիոյ լճի մօտերքը լինի: Դրանք Երեմիա մարգարէի Միսնիներն են. ըստ մի աւանդութեան համաշխարհային ջրհեղեղից յետոյ սրանց երկրում՝ Միսուսումն է տապանը կանգ առել... Հաւանօրէն այստեղ ազգաբնակութիւնը չափազանց խառնակւած պէտք է լինէր. որովհետեւ այստեղի լեռները միշտ էլ ապահով ապստարան են եղել բոլոր տարագիրներին համար. և առաջաւոր Ասիան տակն ու վրայ անող գաղթականութիւններից իւրաքանչիւրը այստեղ ընդհարւել է դրացի ժողովրդների բեկորների հետ: Այստեղի ժողովրդների գլխաւոր տարրը՝ դալդիականը իւր արիւնով պատկանում է Տաւրոսի երկարութեամբ դէպի Սև ծովի և Միջերկրականի եզերքները տարածող տոհմերի՝ խալուքների, մուսխունների, տաբալների, խաթինների (կամ հիտտիտ) մեծ ընտանիքին: Այստեղացիներին խալդանուն տալը պ. Լըմանն է ցոյց տուել. և մինչև

ուր յետոյ հայերն են գալիս, բնակութիւն հաստատում: Մենք տեսանք, որ ինքը Մասպեթոն ընդունում է, որ հայերը գալիս են Փոլսից:— Հետևեալ տողը, որ համեմատութիւն է դնում խալդերի և Գահնոֆոնի ժամանակայ հայերի մէջ, ամենաշատը կարող է այն միտքը ծագացնել, որ արդէն ձուլւելու սկիզբն է դրւել:

հիմա էլ միայն ննդէն է առարկութիւններ արել
այս նոյնացման դէմ: Այս տոհմի լեզուից մեզ
հասած մի փոքր մասը ազգակից է Արդասպի կամ
Միտանի (հիւսիսային Միջագետքում) բնակիչ-
ների խօսած բարբառներից այն փոքր մասին,
որին մենք ծանօթ ենք. և կրօնից նոյնպէս ո-
րոշ նմանութիւններ կարելի է գտնել հիտտի-
տական հին պաշտօնականների հետ (ննդէն): Բայց
և այնպէս յիշատակարանները, յուշարձանները
այս նախնական հայերի մէջ* ցոյց են տալիս
արդէ հայերին բնորոշող գծերից շատերը: Այս-
տեղից երևում է, որ դրանք բարձր հասակ են
ունեցել, ուժեղ, ծանր, դիմացկուն են եղել,
կուրի և աշխատանքի մէջ դաժան, խիստ, իրենց
անկախութեան համար հպարտ. ահա թէ Գե-
նոֆոնն ինչ է ասում իւր ժամանակւայ խալ-
դերի մասին — *Ελέγοντο δέ οἱ Χαλδαῖοι ἐλεύθεροί τε καὶ*
ἄλκιμοι εἶναι. և նա նկարագրում է (Կիւրոպետի)
սրանց ռազմական բարքերը. Սրանց մի մասն ապ-
րում էր խաշնարածութեամբ, տարւայ լաւ ե-
ղանակներին թափառում էր իւր հօտերի հետ,
նայած եղանակներին անցնում էր հովտից անտառ-
ներ, լեռներ խոտ ճարելու համար, ապա՝ ձմեռ-
ւան ցրտերից ստիպւած սողոսկում էր կէս

*) Մենք տեսնք, որ Ստրաբոնը խալդերին և
խալուքներին ազգակից չէ դարձնում, այլ դրանց նոյ-
նացնում է:

ստորերկրայ այն բնակարանները, ուր այժմ էլ
սրանց յաջորդներն են բնակւում (Ե. Ռեկլիւ.
Աշխարհ, հ. IX. էջ, 355): Երբ հողը յարմար էր
լինում նրանք հազազիւս ճարակութեամբ մը-
շակում էին և առատ հունձ կորզում: Նրանք
հնարք էին գտնում առուներ փորելու, սիստե-
մով տիրապետելու ակունքներին և ջրելու ի-
րենց արտերն ու պարտէզները (Բելի և Լըման):
Հայկական աւանդութիւնը համաձայն կլասիքա-
կան աւանդութեան հետ այս ջրանցքների շի-
նութիւնը վերագրում է Շամիրամին: Նրանք
միաբանում էին պատեր քաշելով պահպանել
բոսսահողը, որը միշտ պատրաստ էր փուլ գա-
լու իրենց խիստ զառիվայրերի վրայ: Ինդուս-
տրիան որանց մէջ քիչ էր զարգացած, գուցէ
բացի մետաղագործութիւնից. արդեօք սրանք բա-
րեկամ չեն պոնտական խալուքներին, որոնց
հանքերն ու դարբնոցներն երկաթ էին մատակա-
րարում յունական աշխարհին: Սրանց թողած
աւերակների միջից հաւաքել են փոքրիկ ար-
ձաններ, խմելու ամաններ, նուիրական վահան-
ներ, որոնցից ոմանք քանդակւած, փորագ-
ւած են, ոմանք repousse-ովին շինւած. սրանց
վրայ կան կենդանիների, անձնաւորութիւն-
ների համակերպող գօտիներ, Ասորեստանի
ճաշակով, սակայն՝ հիանալի, գեղեցիկ ոճով և դուշի
աշողակութեամբ, ճարտարամտութեամբ: Սրանք

քնակուում էին այնպիսի փոքրիկ գիւղաքաղաքներում, որոնք մեծ մասամբ ամրացւած էին կամ շինւած հեշտութեամբ պաշտպանող բարձրութիւնների վրայ, ինչպէս օրինակ Վանի և Տօպրաղ-Կալէի բուրգատները։ Սրանց քաղաքները փոքր էին, նոյն իսկ թագաւորական քաղաքները և չէին կարող համեմատուել Ասորեստանի կամ Արամէի քաղաքների հետ։ Այդ քաղաքները սովորաբար փոքրիշատէ ճշտութեամբ գծւած երկար քառակուսու ձև էին ներկայացնում։ Պարիսպները շինւած էին մեծ քարերից, որոնք կոշտ կերպով քառակուսի էին կտրուած և դրւած կանոնաւոր շարւածքով, առանց շաղաղի կամ ունէ կապի։ պարիսպների գլուխները ժանիքաւորւած էին, կողերը որոշ տարածութեան վրայ ունենում էին քառակուսի աշտարակներ, իսկ ստորոտների ամենավտանգաւոր մասերը ծածկւած էին առանձին շերտով։ դռան հասցնող ճանապարհը նեղ և վտանգաւոր էր լինում, (Բել-Լըման)։ Մասնաւոր տները բաւականին պարզ շինւածքներ էին, նման քարից կամ աղիւսից շինւած ուղղանկիւնի տուփերի։ արտաքինը մերկ էր, ունէին ցած դռներ, որոնց վրայ երբեմն լինում էր բաց գալերիաներ յենւած կարճ սիւնների վրայ։ մի տերրաս պսակում է բոլորը, կամ յաճախ երկու զառիվայր ունեցող կառուրը, որը տերրասից աւելի յարմար էր ձմռան ձիւնե-

րին և անձրևներին դիմադրելու համար։ Իշխանական տները մասնաւոր բնակարաններից տարբերում էին իրենց մասերի տարածութեամբ և շարւածքի աւելի մանրակրկիտ խնամատարութեամբ, հոգացողութեամբ։ երբեմն սրանք ունենում էին սիւնազարդ մի ճակատ (Ֆասադ), բանդակւած մետաղեայ վահաններով կամ դիւքերով զարդարւած։ սրահների ներսի պատերը զարդարւած էին քարէ սալերով, որոնք ծածկւած էին արձանագրութիւններով։ այս արձանագրութիւններից որոշ չէ թէ արդեօք թագաւորներն իրենց նւիրաբերութիւնների և տարած յաղթութիւնների պատմութեանը կցում էին քանդած միջնաբերդերի և մղած ճակատամարտերին կարագրութիւնն ևս։ Տան շարժական իրերը նմանում էին նինվէականին առանց սակայն նրա ճոխութեանը, և գուցէ ամենից թանգազին կտորները բերւում էին Ասորեստանից կամ արամէական վաճառատներից։ Տաճարները թւում է, որ շատ քիչ էին տարբերւում պալատներից, առնւազն արտաքինը դիտելիս։ Որմնադրութիւնն աւելի կանոնաւոր էր և շարակարգութիւնն աւելի խելօք։ գաւթում լիքն էին անագապղնձից, թուճից շինած գինու ամաններ, արձաններ, այս շէնքը ամբողջացնելու համար, պէտք է յիշել նաև սեղանները, ընծայաբերութեան, զոհի քարերը՝ կենդանական կամ մարդկային կուռքերը, կրա-

կարաններ, որոնք նման էին եփրատեան սրբարաններին. սակայն՝ չգիտենք սրանց պաշտամունքների ընաւորութիւնը և մանրամասնութիւնները: Մի բարձրագոյն էակ, Պաղի անունով, կարելի է ենթադրել երկնքի աստուած, պաշտպանում էր ամբողջ ազգը և նրան տալիս իւր անունը, այնպէս ինչպէս Ասսուրը՝ ասորեստանցիներին, Կասսուն՝ Կոսսէցիներին, Պատուն՝ խաաիներին. այս աստուածը ներկայ էր լինում երբ օդի աստուած Տէիսբասը և արևի աստուած Արդինիսը կառավարում էին Տիեզերքը. այս գերիշխան երրորդութեան շուրջը պտտում են երկրորդական աստուածներ խմբեր. միայն մի արձանագրութիւն դրանցից 46 հատ է հաշւում, որոնցից շատերը միմիայն մի որոշ վայրում էին պաշտում: Թւում է որ այս պանթէօնն ունէր նաև տեղական աստուածուհիներ. մինչև հիմա միայն մի հատ են գտել, որի անունը Սարբա է և հաւանօրէն Նինվէի կամ Արբէլների Իշտարի մի փոփոփակն է (variante) յետագայ ժամանակներում ասորեստանցիներից փոխ առնւած (Սէյս, Վանիսեպ. արձանագ.):

Ասորեստանի Ասուրնագիրաբալ թագաւորն առաջինն էր, որ 379-ից մինչև 870-թւականը կարողացաւ Ուրարտուին ձեռք տալ, նրանից մի մասը խլել. նրանից առաջ նինվէական կայսրութիւնը

*) Մասպերօ. Արև. հին. ազգ. պատմ. հատ. III. էջ. 54—613

չէր անց կենում արևելեան Տաւրոսն ու Զագրօշը: «Նա գրաւեց այն պարանոցները, որոնք տանում էին դէպի Արսանիասի (արևելեան եփրատ, բարձրավանդակի կեդրոնում) Կիրրուրիի (արդի Սասունի լեռները, Վանայ լճի արևմուտքում) և Կիլզանի (այժմ Բիթլիս-Սուկոչլու գետի հովիտը) եզերքները»: Ուրարտուի թագաւորութիւնը «նրան հաւատարմութիւն և հարկատուութիւն էր երգւել»: Նա ասորեստանցի մարդիկ էր ուղարկում Կիրրուրիում և դրացի երկրներում բնակւելու դրանց լրտեսելու համար: Սրանցից տուրք էր վերցնում զինի, կենդանին եր և պղինձ (Ասսուրնագիրաբալի տարեգրութիւնները. հաւաք. I, 1. 56, 67. հաւաք. II, 1, 15): Ինչպէս իւր բոլոր ստացւածքներում այնպէս էլ այստեղ, «շինում է խնամքով ամբարացրւած թագաւորական քաղաքներ... որոնք պաշտօնաւորների համար ամբարներ էին, ուր պէտք է հաւաքէին տուրք ստացած պաշարեղէնները». այսպէս էր Դամդամուսա քաղաքը, շինւած Տիգրիսի արևմտեան եղջիւրի ակունքներից ներքև. նոյնպէս և Նաիրումն էր շինել: Նաիր անորոշ անունով էին անւանում ամբողջ բարձրավանդակը*: Ասսուրնագիրաբալի որդին Սաղմանասար Գ. չբաւականանալով այդքանով աւելի առաջ

*) Մասպերօ. վեր յիշ. հատ. III. էջ 42 և 49

գնաց դէպի Ուրարտուի խորքերը և ինչպէս երեւում է առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու:

Երևում է, որ այս երկիրը, ուր այսպէս զանազան ժողովուրդներ էին բնակւած, և որոնցից գլխաւորները և տիրապետողները խալդերն էին, միշտ էլ միեւնոյն Ուրարտու անուն չի կրել: Երբ ասորեստանցիները այստեղին տիրեցին Նաիր անունով ճանաչեցին. և այս երկրի առաջին թագաւորներից մէկը, Արամէ անունով, իրան անւանում էր թագաւոր Նաիրի: Սա ուժեղ կերպով կենդրոնացած մի պետութիւն չէր, այլ՝ անթիւ փոքրիկ թագաւորութիւնների մի կազմութիւն, որի երկպառակութիւնները նպաստեցին, որ նինվէական կայսրութիւնը վերջնականապէս յաղթութիւն տանի, տիրապետի: Սակայն՝ IX-րդ դարում Ուրարտուի թագաւորութիւնը կարողացաւ իւր գերիշխանութիւնը հաստատել իր բոլոր դրացիների վրայ, որոնք գտնւում էին Նաիրի արեւմտեան կիսում. այսպիսով Ուրարտուն իւր գիրկն է առնում Արարատ գաւառը, Բիաինա կանտոնը և Արսանիասի կամ արեւելեան Եփրատի (Մուրատ-Սու) ամբողջ աւազանը: Կարծում են, որ Խալդերի գրաւած մայրաքաղաքներից մէկը՝ Արգաղունը, որը թագնւած էր մի խիտ անտառի ետեւ, պէտք է այս գետի ափունքների մօտ շինւած լինի: Ասսուրբանիպալը նոյնքան էր

վախենում Ուրարտուի թագաւորութիւնից որքան Դամասկոսից (Բելկ. «Մաննային թագաւորութիւնը».— Մաննացիները իշխում էին Նաիրի արեւելեան կիսի վրայ). թւում է, որ Ասսուրբանիպալի իշխանութեան սկզբում Լուտիպրիի որդի Սարգուրին կառավարում էր Ուրարտուի ժողովուրդներին. այս միեւնոյն թագաւորի իշխանութեան ժամանակ Սարգուրին իրան իբրեւ յաջորդունեցաւ մեր յիշած Արամէին, որը ամբողջ Նաիրի թագաւոր տիրոջն էր կրում: Սա մինչան է, որ երկրի ուժերը կենդրոնացել են. և այդ ուժը խորտակելու համար Ասորեստանի միապետը իւր իշխանութեան 18-րդ տարում ըստիպեցաւ կռիւ մղել Արամէի դէմ, սակայն՝ առանց համարձակւելու Ուրարտուի խորքերը մտնել: Նա անցկացաւ Եփրատը, այրեց Կուբուն, յետոյ՝ իջաւ Դամդամուզա (գուցէ շինւած էր արդի Տիգրանակերտ և Խարբերդ քաղաքների միջև): Չնայած որ նա անողորմ կերպով սարսափ էր տարածում, սակայն՝ այնուամենայնիւ չկարողացաւ ընկճել Ամիտին (Դիարբէքիր): Նա մտածեց զոհէ թուլացնել Միջագետքի այս սահմանագիծը, դրա համար էլ պատերազմի դաշտից 6,000 զերիններ վերցրեց, որոնց իբրեւ մշակ գաղթականներ բնակցրեց Նինվէի մօտ: Ահա սրանք են այն քաջագործութիւնները, որոնցով Ասսուրբանիպալը պարծե-

նում է իւր տարեգրութիւնների (Annales) մէջ: Սակայն՝ այդտեղ պարծենալու բան չկար, որովհետեւ իւր մեկնումից յետոյ ապստամբութիւնն աճեց՝ հաւանօրէն Արամէի ղեկավարութեամբ. ենթադրում են, որ այս Արամէն է եղել Սաղմանասար II ից Կորտինների (Կարդուբ, Քիւրդ) և Եփրատի Արամէների արտօնութիւնները, թեթեւութիւնները խլողը (Լըման. Sehar. Kischschati): Սաղմանասարը կարողացաւ սրան պատժել. նախ՝ ամայացրեց նրա արևելեան գաւառները և ապա՝ Սուկունիայի գաւառները. նա հասաւ Վանայ լճին և իւր պատկերը մի ժայռի վրայ փորագրել տւեց: Քիչ ժամանակից յետոյ՝ երևում է, որ Սաղմանասարը մի ճակատ ևս մղում է մի ուրիշ Արամէի դէմ, որին չպէտք է շփոթել Ուրարտուի Արամէի հետ. վերջինս հիւսիսային Սոտրիքի վրայ էր իշխում: Այս միևնոյն անունը գտնւելով արամէական ժողովրդի երկու ծայրերում հասկանալի է դարձնում այն ազդեցութիւնը, որը յետագայում արամէական քաղաքակրթութիւնը պէտք է գործէր, միևս կողմից՝ հասկանալի է դարձնում թէ ինչպէս Դարէհի պետութեան մէջ պարսկական սեպագէտ արձանագրութեան հետ միասին արմէական զրութիւն ևս պաշտօնական դարձաւ:

Կարելի է ընդունել, որ հիւսիսային կողմում եղած արամէները շփման մէջ էին հայերի հետ,

երբ վերջիններս յաջորդեցին հիտտիտներին: Յամենայն դէպս Սաղմանասար Բ. իրօք չկարողացաւ հպատակեցնել հայերին, որոնք դեռ ևս Արամէի երկրում չէին *): Տիգրիսի ափունքների կողմերում գտնւած Իախտի բնակիչների պատժելուց յետոյ՝ 845-ին իւր պատկերը փորագրել տւեց Նաիրում գտնւած այն ժայռի վրայ, որտեղից ժայթքում է Տիգրիսի ակը. սրանից յետոյ գրաւեց Ուրարտուն և աւերեց մինչև Եփրատի ափունքները, ուր, ինչպէս տեսանք, արամէներն էին բնակւում: Այսպէս էր վերջին պատերազմը, որին Սաղմանասար Գ անձամբ էր առաջնորդում: Սակայն՝ Ուրարտուն ոչ միայն չընկճեց, այլ և այնպիսի կորովով շարունակեց ապստամբութիւնը, որ մեծապէս ցնցեց գերիշխան մեծ կայսրութիւնը: Ուրարտուն զիմադրում էր մի արժանաւոր թագաւորի, Սարգուրի Բ-ի առաջնորդութեամբ, որին Վանայ արձանագրութիւնների մէջ Սէդուրի անունն է տրւած (Սէյս. Վանայ. սեպ. արձանագ. Բելկ և Լըմանը ցոյց են տւել, որ այս Սէդուրին Լուտիպրիի որդի Սարգուրին չէ, որին մենք յի-

*) XIX-րդ դարու վերջին Պ. Մասպերուն կարող էր տառանւել այս խնդրի առթիւ: Այժմ այլևս ոչ ոք չի համաձայնի նրա հետ թէ Ուրարտուի Արամէ թագաւորը հայ է եղել: Հայերը դեռ այս երկրի հիւսիսում չէին հաստատուել:

շել ենք, այլ՝ մի ուրիշ Սարգուրի է, հաւանօրէն Արամէի որդին): Զնայած որ Սարգուրին Սաղմանասարի Դիանասուր կոչւած «տարտան»-ից յարձակում կրեց, սակայն՝ յաջողեց յետ մղել նրան և արգելել յաջորդ տարին վերադառնալ՝ սրա դէմ դուրս բերելով պատինիներին, չհաշւելով դեռ Մասիօսի (Միջագետքում) և Բիտ-Ջամանի (Ամիտի գաւառ) ժողովրդներին, որոնք հենց սկզբից էին միացել իր հետ: Սակայն՝ 830-ին Դիանասուրը մոխիր է դարձնում Զապարիան և Մուզազիրի (Ուրմիոյ և Վանայ լճերի միջև) միւս 56 քաղաքները. ապա՝ քանդում, աւերում է բուն Ուրարտուն: Այնուամենայնիւ միշտ էլ ապստամբութիւնը վերածնւում էր. նա խեղդեց միայն Սաղմանասար Գ-ի մահից երկու տարի յետոյ. այդ մահը տեղի ունեցաւ 824-ին: Ապստամբական խմորումը դեռ ևս շարունակեց մինչև Սաղմանասար Բ-ի որդի Շամշիրամման Դ, որը ստիպւեցաւ պատերազմ մղել ոչ միայն կայսրութեան ժողովրդների դէմ, այլ՝ նաև արմէնական *) և արամէական սահմանների (marche) ժողովրդների» դէմ, առանց սակայն յաջողելու ամբողջ երկիրը նորից ձեռք ձգել:

*) Այստեղ նոյնպէս «Արմէնական սահմանագիծը» անճիշտ կերպով դրւած է Ուրարտուի սահմանների փոխարէն:

Որպէսզի այս ապստամբութեանը վերջ տայ 820-ին, իւր «ըաբսաքէ» Մուտարրիզասուրի ձեռքով 300 քաղաք կործանել տւեց Ուրարտուում: Վանայ արձանագրութիւնները պարունակում են նաև Շամշիրամմա Դ-ի որդի Ռամմանիրարի Գ-ի Ուրարտուում *) տարած յաղթութիւնների պատմութիւնը. այս յաղթութիւններով Ռամմանիրարի մահից առաջ, 811-ին, Ասորեստանի գերիշխանութիւնը հաստատւեց այնտեղ: Դեռ սա էլ մի գերիշխանութիւն էր, որի դէմ յաղթւածը չէր դադարում բողոքելուց: Ասորեստանը յարմար համարեց 808-ին և 807-ին երկու արշաւանքներ կատարել և նորից գերիներ և աւարներ վերցնել այս երկրից. Ասորեստանը պարծենում է այս յաղթութիւններով, իսկ սրա դիմաց խալդերն իրենց ժայռերի վրայ, իբրև յուշարձան, փորագրել են տալիս դէպի վեր բարձրացող իրենց միշտ աւելի ու աւելի փառաւոր

*) Այստեղ նոյնպէս պէտք է նկատել, որ Պ. Մասպերօն սխալում է ասելով, որ այս շրջանի դէպքերին վերաբերող զխաւոր դօկումէնտները մեզ հասել են Ասորիքից և «Հայաստանից»: Պէտք է ասել «Ուրարտուից»: Խնդիրը Վանայ գաւառի արձանագրութիւնների մասին է: Այստեղ դեռևս հայեր չէին հաստատւել: Գոնէ մինչև հիմայ ոչ մի հետք չի գտնւել հայերի ներկայութեան: Այս արձանագրութիւնները թարգմանել է Սէյսը. «Վանայ սեպածև արձանագրութիւնները»:

գնացքի խրոնիկը. կարծում են, որ կարելի է նոյնացնել Ուսպինային, որին Շամշիրամման Դ. յիշել է Նաիրի յաղթած թագաւորների շարքում, Սարգուրիս Բ-ի որդի Իսպուխնիսի հետ. սա թշնամու նախանձը ամենից աւելի գրգռող նահանգին՝ Բիանիային դիմադրութեան համար օգնելու նպատակով՝ իւր իշխանութեան աթոռը հաստատեց այդտեղ՝ Տուսպանան (հայերէն Տոսպ՝ Վան) դարձնելով իւր սիրելի աթոռանիստը (Բելկ և Լըման. Chald. Forech.)։ Յատկապէս սրա որդին Մինուասը, որը հէնց իւր հօր կենդանութեան ժամանակ գահակից էր, Ուրարտուի զօրութիւնը իւր գագաթնակէտին հասցրեց, այնպէս որ դրանով մեծ հոգս պատճառեց ասորեստանցոց, որոնք վճռեցին միանգամ ընդ միշտ իրենց հաշիւը մաքրել։ Բազմաթիւ յաղթական մենակոթողներ (stele), որոնք ունին խաղաղական և երբեմն էլ դեռ ևս ասորեստանեան սեպածե արձանագրութիւններ, պատմում են սրա յաղթանակները, որոնցից ամենահռչակաւորներն են՝ Կիլիշինի (Ձակրոշ լեռների մէջ) և Բօուանտէդանցքին (Նինվէի հիւսւ-արեւելք)՝ չհաշւած դեռ Վանայ ժայռի վրայ փորագրւածները։ Նա աւերեց և հպատակեցրեց Ուրմիոյ լճի, Քիւրդստանի, վերին Ձաւի (ըստ Բօուանտիդի մենագրւների. թագմ. Սէյսի) գաւառները։

Զնայած Ռամմանիրարի Գ-ի մղած երեք

պատերազմներին, 802-ին, 792-ին և 785-ին, այնուամենայնիւ ուրարտացիներն միշտ էլ շարունակում էին առաջանալ. նրանք գրաւեցին ստորին Ձաւը, Խուբուշիսիան (Ձակրոշի մէջ, Նինվէի և Ուրմիոյ լճի միջև), այնուհետև Արսանիասի ամբողջ հովիտը. նրանք նոյնիսկ տուրք վերցրին Մելիտէնից (Պալուի արձանագրութիւնից)։ Յայտնի չէ թէ ինչ է արել Մինուասը արեւելքում, սակայն՝ իւր տիրապետութեան հետքերը թողել է հիւսիսում և արեւմուտքում Արմաւիրի (Արարատի հիւսիս-արև.) և Էրզրումի յուշարձանների վրայ։ Այս վերջին քաղաքը հին ժամանակներում գոյութիւն չունէր, սակայն՝ նրա պողաբեր գաւառը միշտ էլ լիքն էր զիւղերով. Մինուասը այստեղ մի պալատ է շինել։ Վերջապէս՝ նա հպատակեցնում է Էտիսուսը (Արարատի հիւսիսային սահանքը) և Մաննաին (Ուրմիոյ լճի արեւմտքում)։ այս տեղերում շինում է քաղաքներ, դղեակներ և գաղութներ հաստատում։ Սրա թագաւորութիւնը տարածութեամբ հաւասար էր Ասորեստանին, իսկ բնակչութեամբ պէտք է նրանից գերազանցէր։ Նա նմանեց իւր մեծ հակառակորդին վերցնելով նրանից արեւստները, նրա ճոխութիւնը և ադմինիստրացիան. միւս կողմից՝ այդ հակառակորդի առաջ բերգերի մի շղթայ քաշեց, որը համարեա թէ անընկճելի էր։ Յատկապէս Վանը

իւր ոյժն այս թագաւորին է պարտական, որը կարողացաւ լճի եզերքում կղզիացած հրաշալի ժայռից օգտուել: Ռամմաննիրարիից քիչ առաջ մեռնում է սա. սրա մահւան թւականը 784-ն է համարում: Սրա Արղիստիս որդին իւր արժանիքների պատճառով յաջորդ է դառնում և իւր նշանաւոր գործերը փորագրել տալիս Վանայ ժայռի վրայ («Սէյս»): Արղիստիսի արձանագրութիւնները Վանայ ժայռի վրայ): Այստեղ պատմած է իւր իշխանութեան առաջին տարիներում մղած տասնուչորս պատերազմները. ամենից առաջ պատերազմում է Արաքսի հիւսիսում գտնւած լեռների ժողովրդների դէմ այս կողմից իւր հօր ջանքերը պսակելու համար. ապա՝ աւիրում ապստամբ Եդիաուսը, ինչպէս նաև Ուրմին (հաւանօրէն Արաքսի ձախ ափին և ոչ թէ Ուրմիոյ լճի մօտ. ըստ Սէյսի. Վանայ սեպագիր արձանագրութիւնները. հատ. XIV. էջ 611). այս արշաւանքներից գլխաւորները կրում են 784-ից 782 թւականը և վերջանում Ասորեստանի դէմ մի կատաղի պատերազմով: 782-ին Սաղմանազար Դ. յաջորդել էր Ռամմաննիրարիին. սա Բաբելոնի արամէներին համարեա թէ ընկճելուց յետոյ անհրաժեշտ գտաւ ճարպիկ կերպով կազմակերպւած մի արշաւանքով սկիզբ դնել Ուրարտուի դէմ պատերազմելուն: Սրա և Արղիստիսի մէջ եղած կռիւր երկարեց

782-ից մինչև 778 թւականը: «Արղիստիսն իսկապէս յաջողեց. և իր առաջադիմութիւնը թէև միշտ դանդաղ էր, սակայն՝ երբէք կանգ չէր առնում»: Նա սկսեց Ասորեստանին վասալ հիտարտական իշխանութիւնները ապահովել մինչև Միլետէն (Արղի Մալաթիա գաւառը), յետոյ՝ 780-ին Բիթլիս գետի աւազանում պատերազմ մղեց, այնպէս որ 779-ին նա շնորհակալութիւն յայտնեց իւր աստուծոյն, որոնք Ասսուրի քաղաքները և բնակիչներին իր ձեռքն էր մատնել (Սէյս. ibid. էջ 582—685). սա յետոյ Ուրմիոյ աւազանի նահանգները ասպատակելով 778-ին Սուրիզիդասում կատարելապէս յաղթեց ասորեստանցիներին, այնպէս որ սրանք մի տարով ստիպւեցան յետ քաշուել: Երբ սրանք 776-ին նորից եկան փորձելու իրանց ուժը՝ նորից յաղթւեցին և Արղիստիսը քչեց սրանց դէպի Ամասուսը (հիւսիսային Ասորիքում), որպէսզի ասորեստանցիների բացակայութիւնից օգտուելով իրան ենթարկի Ուրմիոյ լճի հարաւային և արեւելեան կողմերում սեղմւած բոլոր պետութիւնները. վերջապէս՝ Նամրիում, 774-ին, յետ մղեց Սաղմանազար Դ-ի վերջին յարձակումը: (Սէյս, նոյն. էջ 602—609): Արղիստիսը սրանից քիչ աշխատանք չունէր իւր թագաւորութեան ժողովրդներին ընկճելու համար: 771-ին Մանուի ոյժը կոտրելուց յետոյ՝ իւր ամբողջ զօրութիւնը

կեղրոնացրեց Եդիառուսի դէմ, որը Արաքսի հիւսիսում ապստամբ ժողովրդների գլուխն էր անցել: Սրանց ճանաչել տւեց իրենց պարտականութիւնները աւարի առնելով Իշթիկուլուսը (Արդի Ալեքսանդրոպօլի գաւառը) և դրացի նահանգները (Սէյս. նոյն. էջ 616—631)*):

Ուրարտուի այս հերոսների քաջագործութիւնների համառօտ պատմութիւնը մեզ հետաքրքիր երևաց նրա համար, որ այդտեղ մենք տեսնում ենք հայերի տիրապետութեան հեռավոր մի պատրաստութիւն: Հայերը, որոնք երբէք պատերազմի չէին բռնւել, չպէտք է կարողանային ընկճել այդ հազարաւոր փոքրիկ իշխաններին, եթէ դրանք մինչև հայերին հանդիպելը անկախ ֆեոդալներ: Նահանգի միութիւնը կատարեալ դարձաւ ոչ թէ խալդ թագաւորների շընորհիւ, որոնցից այսուհետև շատ քչերը կհամեմատւեն իրենց նախնիքների հետ, այլ՝ ասորեստանցիների, որոնք Տիկլատալազար Գ.ի ժամանակ նոր կորով էին ստացել: 734-ին և 733-ին Ասորիքին ու Պաղեստինին տիրելուց յետոյ՝ այս գօրեղ միապետը մտածեց ապահովել իւր յետևի կողմերը, դրա համար էլ նախ՝ Մարաստանը հնազանդեցրեց և ապա՝ արդէն իրան ձեռնահաս համարեց արշաւել Ուրարտուի

նեցաւ. տաս տարուց յետոյ Եփրատի և Միջերկրականի միջև տարածւած բոլոր արամէներն ու հիտտիտները հնազանդուում էին Սարգուրի Գ.ին՝ չնայած որ Տիկլատալազար Գ. դրանց վրայ նայում էր իբրև Ուրարտուի գաղնակիցներ:

Ասորեստանցիներն անհանգիստ լինելով այս դրացիութիւնից և աւելի հեշտ համարելով Ասորիքում կուել քան թէ Ուրարտուի լեռներում, ուստի՝ գալիս են Որոնդէս գետի աւազան Սարգուրիսի վրայ յարձակւելու և աշխատելու այդպիսով Սարգուրիսի գաղնակիցներին ևս ընկճել: Անսպասելի էր այս յանկարծակի հարւածը, Արպատ մայրաքաղաքն անուեց, ապա՝ Սարգուրիսը պարտութիւն կրեց մի ճակատի անեղ իրարացման ժամանակ, որը տեղի ունեցաւ Եփրատից ոչ հեռու, Կիստանի և Ուալպիի միջև գտնւած Կումմուխի կեղրոնում: Մատակ ձի նստած—ծիծաղելի, անարգական էր այսպիսի ձի նստելը—փախչում է Սարգուրիսը պատերազմական կռուքը և բանակը թշնամու ձեռքը թողնելով: Այստեղ Սարգուրիս կորցնում է 73,000 մարդ, գերի ընկած կամ սպանւած, չհաշւելով դեռ ծառաներին և բանակի կարգ ու սարքը: Տիկլատալազարը տեղն ու տեղը այրեց յարթւած թագաւորի կահ կարասիքը, բացի անկողնուց, որը նւիրեց Իշթար աստուծուհուն: Սա-

*) Մասպիքո. վեր. յիշ. հատ. III. էջ 99 110.

վրայ, որը համարեա թէ Ասորեստանի չափ զօրեղ էր դարձել: Եւ իրօք՝ այս երկրի թագաւորը, Սարգուրի Գ, իւր իշխանութիւնը տարածել էր մինչև հիւսիսային Ասորիքը. սակայն՝ նա սխալեց երբ Մինուազների և Արդիստիսի յաղթած երկիրների կազմակերպութեան վրայ հոգս չտարաւ, չնայած որ երբ դեռ ինքը ժառանգ իշխան էր Եգիպտոսի և Մաննայի կառավարիչ տիտղոսով՝ մասնակցում էր այդ յաղթութիւններին՝ իւր բնակավայր Լունուսիսից (արդի Արմաւիրը) ընկճելով Արաքսի և Կուրի միջև հաստատւած բարբարոսներին: 760-ին թագաւոր դառնալով՝ Արաքսի և Ուրմիոյ լճի միջև հաստատւած ժողովրդներից հարուստ աւար և մեծ թւով զօրք վերցրեց: Նա խոհեմութիւն համարեց չյարձակել Ասորեստանի սահմանի վրայ, այլ՝ աւելի առաջ գնալ դէպի արեւմուտք և Մելիտէնի վրայ յարձակել, որի շատ քաղաքներ և յատկապէս Միլետ (Մալաթիա) մայրաքաղաքը գրաւեց 758-ին: Հաւանօրէն յետագայ 766-ի կամ 755-ի մօտերքն իջաւ Ասորիք: Այստեղ իրան դաշնակից դարձրեց Բիտ-Ակուսի թագաւորին, որի մայրաքաղաք Արպատը Ասորեստանի դէմ դաշնակիցներ էր որոնում: Ասորեստանցիների գլխաւորը՝ Ասսուրնիրարին 754-ին ջանաց իւր գերիշխանական իրաւունքները ճանաչեցնել, սակայն՝ յաջողութիւն չու-

կայն՝ այս թագաւորն էլ համարեա թէ նոյնքան վնասւեց այս մեծ հարւածից, որքան Սարգուրիսը: Ասորիքի բնակիչները հաւատարիմ մնացին այս վերջինին և քաշուելով իրենց լեռները վրէժխնդրութեան էին պատրաստուում: Ակուսի յաղթւած թագաւոր Մատիլուն վրէժխնդրութեան յուսով դեռ երեք տարի էլ դիմադրեց ասսուրեստանցիներին, սակայն՝ օգնութիւն չստանալով 740-ին ստիպւեց անձնատուր լինել, որից յետոյ գահընկեց եղաւ: Սարգուրիսի այս անգործութիւնն իրա համար կորստաբեր եղաւ: Ուրարտուի դաշնակիցները կորցրին իրենց վստահութիւնը դէպի Սարգուրիսը. Ասորեստանցիները նախ՝ 739-ին խլեցին Նաիրի մի մասը և այստեղ մի բերդ շինելով՝ 736-ին գրաւում են Նալ կանտօնը Նաիրի մուտքը պահպանելու համար...: Տիկղատալաասարը պատրաստ էր ամենաբարձր մասն ևս գրաւելու փորձն անել. 735-ին գալիս, պաշարում է Սարգուրիսին իւր Տոսպանա (նշանակում է Վանայ բերդ) մայրաքաղաքում: Այսօրւայ նման այդ քաղաքը կրկնակի էր և որովհետեւ հայերը պէտք է դրան պատահեն այնպէս ինչպէս որ կար, ուստի օգտակար ենք համարում բառացի մէջ բերել բնագրի նկարագրութիւնը: «Դոսպանան իսկապէս երկու միմիանց հետ միացած քաղաքներից է բաղկացած. սրանցից մէկը տարած-

ւում է դաշտի մէջ Ալախի ափին և լճի ուղ-
ղութեամբ. նա շրջապատւած է պտղաբեր պար-
տէզներով և վիլլաներով, ամառը ժողովուրդը գնում
է այստեղ ուրախ կեանք անցկացնելու: Այս քա-
ղաքն իւր թիկունքով յենւում է փոքրիկ խե-
ցիներէից առաջացած կրային մի զանգւածի վրայ,
որը կղզիացած է և սպիտակ ու կարմիր գոյն
ունի. այս զանգւածի պատերը ճեղքւածներ ու-
նին, փորւած ծակեր կամ ուղիղ մինչև ամբողջ
բարձրութիւնը հասցնող այրեր: Այն բար-
ձրավանդակը, որով այս քաղաքը վերջանում է,
իւր ամենաբարձր կէտում հարիւր մեթր բար-
ձրութիւն ունի. նա երեք հարկ առաջացնող գլ-
խաւոր տերրամաներից է բաղկացած, որոնցից
իւրաքանչիւրը կատարելապէս կղզիացած է միւս
երկուսից և կարիքի դէպքում կարող է ծառա-
յել իբրև մի առանձին բերդ: Սերնդից սերունդ
Իսպուխիսը, Մենուսը, ինքը՝ Սարդուրիս Գ.
աշխատել են անառիկ դարձնել այս բարձրավան-
դակը և յաջողւել են: Սա մատչելի է միայն ա-
րևմտեան կողմից, որտեղից մի տեսակ նեղ
կածան անդունդի վրայով աստիճանաբար ստո-
րոտից բարձրանում է մինչև գագաթը: Այս թա-
գաւորները մի քիչ կանոնաւորում են բարձրա-
վանդակը նրա կողքին պարիսպներ քաշելով և աշ-
տարակներ շինելով, որոնք իշխում էին ամբողջ
երկարութեան վրայ. ապա՝ պլատֆորմե-

րի վրայ բարձրանում են մի միջնաբերդ, մի
պալատ, տաճարներ, վաճառանոցներ, ուր կի-
տում էին այնքան զէնքեր ու պաշարներ, որոնք
բաւական էին սովորական մի թշնամու համբե-
րութիւնը հատեցնելու. միայն մատնութիւնը կամ
երկարատև, անուշի մի ումբակոծութիւն կարող
էր ընկճել սրանց: Տիկլաթալադարն անհնա-
րին համարեց այդ բերդի գրաւումը և բաւա-
կանացաւ դաշտավայրը աւարի տալ ու Նինվէ
վերադառնալ հարուստ աւարով: Սրանից յետոյ
Սարդուրիսը քնաց պահպանողական այս դիր-
քի մէջ:

Յաղթողը տեսաւ, որ անհնարին է Ուրար-
տուն վերածել վաճառութեան: Մինչև այս թա-
գաւորի և Սարդուրիս Գ.ի մահը, 730-ին,
Ասորեստանը հրաժարւեց այդ մտադրութիւնից:
Նոյնպէս էլ վերջինիս որդի Ռուզասը զգոյշա-
ցաւ Սաղմանասար Դ-ին անհանգստութիւն,
կասկած պատճառել: Սակայն՝ երբ Սարկօն
Բ. Նինվէի գահը բարձրանալով տեսաւ, որ
ստիպւած է ուժով ընկճել իւր աւատառուներին՝
գերագոյն համարեց կռիւները, յաղթութիւն-
ներ տանելը. մանաւանդ որ իրան ցոյց տրւած
ընդդիմութիւնները Ուրարտուում սրտեր էին վա-
ռում, մտքեր պղտորում: Ռուսասը Զիկադդուի
(Հերոդոտի Սակարդացիները, այն երկրում, ուր
շուտով պէտք է առաջ գային մարերը) մաննա-

իցիների, տաբալների և նոյնիսկ Ասորիքի խա-
տինների (հիտտիտ) հետ միասին դաւադրութիւններ
սարքեց. նրան յաջողեց սահմանի վրայ գտնւած
շատ բերդեր ասորեստանցիների հպատակութիւ-
նից դուրս քաշել: Սարկօն նկատելով, որ այս շար-
ժումը կապ ունի սկիւթների և կիմմերցիների
արշաւանքի հետ, յարձակում է այս վերջին-
ներիս վրայ և մի այնպիսի թափով յետ մղում
նրանց, որ Ռուսասը այլ ևս չը համարձակեց
նրանց օգնել: Սակայն Ռուսասն սպասում էր
աւելի լաւ պատրաստելու նպատակով: Սրան
հարկաւոր էր մաննաիցիների աջակցութիւնը, որը
վերջապէս՝ 716-ին ձեռք բերեց. նա սրանց թա-
գաւորին սպանել տւեց, որպէսզի մի վստահելի
մարդու, ծագամբ օտար Բակադատտիի հրա-
մաններին ենթարկեն: Այս ինքնակոչ միջամ-
տութիւնից չարիքներ ծագեցին: Սարկօն Բակա-
դատտիին ծեծեց և կենդանի մեխեց: Այս ա-
նարգանքը զրգուեց Ուրարտուի և դրացի երկր-
ների իշխանների մեծամասնութիւնը, որոնք
միացան Ռուսասի հետ: Սարկօնը ճարպկութեամբ
երկուսի բաժանեց սրանց ուժը Մաննային այն-
պիսի անգթութեամբ աւերելով, որի բնակիչները
սարսափահար եղած հպատակութիւն խոստա-
ցան: Սրանից յետոյ՝ քնում էր դէպի հիւսիս
գնալ և դաշնակիցներին մէկը միւսի հետեից
ջախջախել: Սակայն՝ հիւսիս արեւմուտքը դեռ

շարժում էր, ուր Սարկօն ստիպւեցաւ յաջոր-
դաբար քսաներկու բերդեր ընկձել. սակայն՝ այս
բերդերը վերականգնեց ի նշան Ուլլուսումու
թագաւորի հետ խաղաղութիւն հաստատելուն.
և այս խաղաղութիւնը յանձն առաւ Ուլլուսումուն
այն պատճառով, որ գիտէր թէ հնարք չկայ այս
թագաւորի իշխանութեան լծից ազատելու: Սար-
կօն ուզում էր նաև միւսներին հասկացնել, որ
իր իշխանութիւնից անհնարին է դուրս գալ, դրա
համար էլ 714-ին ընկաւ Ռուսասիսի ետեից,
որին հասաւ Ուաուշ (տեղը անորոշ է) անցքերի
մօտ, ջարդեց նրա բանակը և ստիպեց իւր հօր
Սարգուրիսի ամօթաբեր օրինակին հետեւել, այս-
ինքն՝ մատակ ձի նստած փախչել: Ամբողջ
երկիրն առանց ընդգիմութան հնազանդեց,
բացի Մուզազիրից, որը նոյնպէս ստիպւած, եղաւ
շուտով հպատակել: Ռուսասը բոլորից լքած
լինելով դաշունահար է լինում, իսկ Սարկօն՝
այլևս ոչ ոքից վախ չունենալով կանգ առաւ:
Արդիստիս Բ. իրօք իւր հայրական թագաւորու-
թիւնը վերանորոգելու փորձը չարեց. զգուժ էր, որ
իւր վասալներն ու դրացիներն ընկձել են և ծարա-
ւի են խաղաղութեան: Առանց ձեւական դաշնագրի
կարիք զգալու՝ Ուրարտուն Ասորեստանին հան-
գիստ թողեց: Ռուսասի ամբողջ գործը այն եղաւ, որ
ամրացաւ Եփրատի ափունքների վրայ և Վանայ
գաւառում: Եթէ այս իշխանի կողմից յարձակ-

ման որոշ գործեր եղած լինեն, դրանք պէտք է սահմանափակւած լինեն Միջագետքի հիւսիսը թալանելով՝ առանց նպատակ ունենալու այդտեղ հողեր գրաւելու: Սարկօն Գ. մեռաւ առանց կասկածելու ապստամբութեան մասին. նա 706-ին Մաննաիի և Ուրարտուի վերահսկողութիւնը յանձնեց իրան յաջորդող որդուն՝ Մէուախէիը բախն (Սեննաքերիբ): «Սարկօն Ուրարտուն և Ելամը անգթօրէն աւերակ դարձրեց համոզւած լինելով, որ այդ ազգերը երբէք չեն ձուլուի յաղթողի հետ. այնինչ նա չափազանց հոգս էր տանում այն ազգերի բարեկեցութեան համար, որոնք կարող կլինէին Ասորեստանի հետ ձուլուել»^{*}:

Սրանից յետոյ արդէն Ուրարտուն մի փոքրիկ, անզօր թագաւորութիւն էր. նրա վերջին թագաւորներն այնքան թոյլ են եղել, որ համարեա թէ ոչ մի տեղեկութիւն չկայ նրանց իշխանութեան դէպքերի մասին: Յայտնի է միայն, որ VIII դարու վերջին, Արդիստիս Բ-ի ժամանակ (714—685), սկիւթացիները գրաւեցին Աւրաքսի արեւելեան աւազանը և նոյնիսկ Մաննայիի որոշ կանտօնները: Սրա յաջորդները՝ Ռուսաս Բ-ը և Երիմենան աւելի բան չարին սրանց աւազակութիւնները արմատախիլ անե-

^{*}). Մասպերօ. վեր. յեջ. հատոր. III. էջ. 247-250 և 251-272

լու, վերջացնելու համար: Սրանք բաւականացան անընկճելի բարձունքների վրայ պալատներ շինելով և ապրելով այդտեղի պարտէզներում, որոնք ոռոգւում էին մեծ ծախքով շինւած ջրանցքներով: Բաւական է յիշել վերջին թագաւորներին՝ Ռուսաս Գ-ին, Սարգուրիս Գ-ին, Իրկուասին և վերջացնել այս թագաւորութիւնը, որը նոյնքան ընկած էր, որքան նինվէին, որի անկումը տեսաւ Իրկուասն առանց կարողանալու օգտուել այդ դրութիւնից: Ուրարտուցիներն իրենց կրած սարսափների ազդեցութեան տակ դեռ ևս երեւակայում էին, որ իրենց յաղթողը դեռ կենսունակ է, որովհետեւ Սարգուրիս Գ. ակնածութեան մի ակտ է կատարում յայտարարելով իւր գահ բարձրանալը Ասսուրբանիպային^{*}: Այս երկու աշխարհներն էլ քայքայման մէջ էին և պատրաստ էին հնթարկւելու նորեկների արշաւանքին: Այս նորեկները մարերն էին, որոնք քաղաքականապէս տիրապետեցին, երբ հայերը գաղութներ էին հաստատում Ուրարտուում:

Ուրարտուի և Նինվէի թագաւորների համեմատական ցուցակը:

^{*}) Ըստ Ս. Վերերի, Կաթոլիկ եկեղեցին հայաստանում. էջ. 6.

Արամէ . . .	860-843	Աստուրնադիրհաբալ	883-860
Լուսիպրիս . . .	843-835	Սալմանասար Գ.	860-825
Սարգուրիս Ա. . .	835-820	Սամսի-Ռաման Դ.	825-812
Իսպուկինիս . . .	820-800	Ռամաննիրարի Դ.	812-783
Մենուաս . . .	805-780	Սաղմանասար Դ.	783-772
Արդիստիս Ա. . .	780-755	Աստուրդան Գ.	772-754
Սարգուրիս Բ. . .	755-730	Աստուրնիրարի Գ.	754-745
Ռուսաս Ա. . .	730-714	Տիկղատապալազար.	745-727
Արդիստիս Բ. . .	714-685	Սաղմանասար Ե.	727-722
Ռուսաս Բ. . .	685-675	Սարկոն Բ. . .	722-705
Երիմենա . . .	675-670	Սինաքերիբ . . .	705-681
Ռուսաս Գ. . .	670-645	Ասսարհադդոն . . .	681-668
Սարգուրիս Գ. . .	645-620	Աստուրբանիպալ . . .	668-626
Իրկուաս . . .	620-600	Սարգանապալ . . .	626-608

✓ Հայերը կարողացան վանայ լճի չորս կողմում խալդերի տեղը բռնել և աւելի դէպի հիւսիս, մինչև Արաքսի հովիտը գնալով յետ մղել խալդերին այն հանգամանքի շնորհիւ, որ պարսից թագաւորութիւնը դանդաղ քայքայման մէջ էր և չէր կարող իւր վասսալների ծաւալումը, ուժեղանալն արգելել։ Օխոսը կարողացաւ Արտաքսէրքսէսին յաջորդել (358) միայն մի շարք վայրագ եղբայրասպանութիւնների միջոցով։ Սրան յաջողեց մի ըռպէ կեանք տալ այդ մահամերձ անսահման կայսրութեանը, որի ոգին միայն թագաւորն էր. սակայն՝ Դարէհ Մեծի հաստատած ուժեղ կառավարութեան երջանիկ ժամանակներն արդէն անցել էին։ Շատ սատրապներ պարսաւելի դիրք էին բռնում և դառնում

խսկական փոխ-արքաներ։ Շատ ժողովուրդներ, յատկապէս ելամիտներն ու ուրարտացիները, համարեա թէ անկախ էին ապրում իրենց լեռներում։ Թուում է, որ հայերն այս թուլութիւնից օգտւելով առաջին քայլն արեցին կազմակերպելու համար իրենց քաղաքական ազգութիւնը։ Օխոսի իշխանութեան ժամանակ հայերը վերջացնում են իրենց գաղթականութիւնը կամաց-կամաց բռնելով այն բարձրավանդակները, որտեղից արդէն խալդերին քշել էին և հասցրել Արարատի հիւսիսային կողմը։ Սրանց տեղը «ծաղկում է Հայաստանը, որի իշխանները դաշնակից էին Աքիմինիտ ընտանիքին և չնայած իսկական թագաւորական իշխանութիւն ունէին, բայց՝ սատրապ համեստ տիտղոսն էին կրում (Լընօրման, Պատմութեան սկզբները. հատ. 1, էջ 370)։ Սրանց շնորհիւ Իրանի կրօնները, բարքերն ու սովորութիւնները տարածում էին Փոքր-Ասիայի արևելեան սահմանագծերում։ Դրանք թափանցում էին Ալիւսի և Իրիսի աւազանները, Կապադովկիան, Տաւրոսը (ամեն տեղ, ուր հայեր կային). այս հանգամանքի շնորհիւ այդ տեղերում հաստատում էին կայսրութեան պաշտօնական գրութիւնների գործածութիւնը. պարսկական և արամէական սեպագրերը դրանք գործածում էին հասարակական վճիռների կամ արձանագրութիւնների համար և գրում փողե-

րի վրայ»․ այսպիսով հելլենական ազդեցութիւնը, որը տարածւել էր մինչև Ալիւսի արեւմտեան կողմերը, չէր կարող դեռ ևս ազդել Հայաստանի վրայ:

Սակայն՝ հելլենիզմը շուտով վրէժխնդիր պէտք է լինէր: Օլիսը թունաւորւում է մի իսկական Բակոասի (336) ձեռքով․ սրա տեղ թագաւորում է իւր որդի Արսէսը, որին Բակոասը մի քանի ամսից յետոյ ոչնչացնում է․ Անշափ սպանութիւնները ոչնչացնում են Աքիմենիաների ընտանիքը: Կարծում են, որ Կողոմանը այս ընտանիքի վերջին շառաւիղն է․ Բակոասը կարծում էր, որ Կողոմանը Դարէհ Բ-ի թոռան թոռն է, դրա համար էլ թագաւոր դարձրեց հէնց Դարէհ անունով (Դարէհ Գ․ Կողոման, 339—330) յոյս ունենալով իւր նպատակներին ծառայեցնել: Այս ծննդաբանութիւնը պարզ չէ․ ոմանք հաւաստիացնում են, որ Կողոմանը իւր երիտասարդ հասակում սուրհանդակի պաշտօն ունէր: Յամենայն դէպս Օլիսը սրան Հայաստանի վրայ սատրապ էր նշանակել ի վարձատրութիւն իւր քաջութիւնների: Սա վերջում թունաւորում է իւր բարերարին, որը իւր հերթին ուզում էր սրան թունաւորել: Ապա՝ նա միջոցներ է ձեռնարկում, որքան հնար է, յետ մղել Փիլիպպոսի և Աղէքսանդրի յարձակումները: Մակեդոնական արշաւանքները գրաւել էին այս նոր թագաւորի

ուշադրութիւնը այդ պատճառով անկարող էր իւր ոյժը դարձնել իւր կայսրութեան մէջ գտնւած ժողովուրդների գէմ, որոնց փառասիրութիւնը գնալով աճում էր: Հայերն այս դրութիւնից օգտւեցին իրենց ազատագրութիւնն առաջ տանելու համար:

Սակայն՝ հայերն այնքան էլ ազատ չէին դեռ, որ չմասնակցէին պարսիկների մղած պատերազմներին․ Իսոսի ճակատամարտում Աղէքսանդրը իւր արշաւանքին իզուր դիմադրող ժողովուրդների զօրքերի շարքում գտաւ նաև հայերի վաշտերը: Այնուհետեւ երբ Աղէքսանդրը Ասորիքը, Եգիպտոսն ու Բաբելոնը գրաւեց՝ Ասորեստանում, Սրբելայի դաշտերում պատերազմ մղեց, ուր հայերը պարսից կայսրութեան ամենաընտիր ուղիներին հետ միասին կուտակւած էին նրա դէմ: Սակայն՝ հայկական զօրքը շատ չէր․ նա հասնում էր 4,000 հետեւակների և 700 հեծեալի*: Հայերն այդ ժամանակ հասկացան այդ յոյների գերազանցութիւնը, որոնց անխոցելի զօրքը, իմաստուն տակտիկան, անդիմադրելի յանդգնութիւնը ցոյց էր տալիս մի մաքուր, նրբացած, գուռած քաղաքակրթութիւն: Երբէք չի տեսնւել մի փոքրիկ ժողովուրդ — իսկապէս անձանօթ հելլատային — որը սակայն

*) Georg. Kurt. Աղէքսանդրի պատմութիւն. հատ. 1. էջ 272.


յունական ոգով տոգորւած այնքան մեծ հարւածներ կարողանար տալ և վերին աստիճանի խելօք կերպով իւր յաղթանակը կազմակերպէր: Պարսկական կայսրութեան քայքայումը հնարաւորութիւն տւեց հայերին առաջին քայն անել իրենց այն վերելքի, որին պէտք է հետևէին. հայերը հակառակ իրանց դիմադրութեան շփուեցին այն վերանորոգող նոր տարրի հետ, որը նոր էր ասպարէզ իջել:

Այնուհետև իսկապէս հելլենական տիրապետութեան տակ ապրեցին հայերը մինչև որ իրենց անկախութիւնը ձեռք բերին: Հայերն այլ ևս վախ չունէին պարսից լուծը կրելու, որովհետև Դարէհ Գ. Կավկասեայի (Արբելայ կոչւած պատերազմի դաշտը) դաշտերից փախչելով չկարողացաւ ընկճել իւր պաշտօնատարների անհնազանդութիւնը, որոնցից 330-ին ինքը սպանւեց: Սրա հետ միասին վերջնականապէս ընկնում է պարսից մեծ կայսրութիւնը: Սրան սպանողներից մէկը՝ Բեսսոսը Արտաքսերքսէս Դ. անունով գահ բարձրացաւ և հաւակնութիւն ունէր վերականգնել կայսրութիւնը, սակայն՝ Պտղոմէոսը հետևելով սրան սպանել տւեց: Եւ երբ մի մար այս միևնոյն փորձը ուղեց փորձել Հայաստանի սատրապը նրան խելքի բերեց՝ գերելով և Աղէքսանդրին յանձնելով:*

*) Ք. Իւստի. Իրանական Ֆիլոսոֆիայի հիմունքները. հատ. II. էջ 474

Հայաստանը ազատւեց մի ուրիշ վտանգից ևս՝ պարթևներից. այս նորեկները բաւականացան Աղէքսանդրի կայսրութեան հարաւային և արեւելեան նահանգները կռւլ տալով: Կեդրոնը շատ լաւ պաշտպանւած էր Աղէքսանդրի նշանակած Սելևկոսի և իւր յաջորդների շնորհիւ: Բացի այս՝ հայերը պարթևների որրանից բաժանւած էին Մարաստանով: Պարսկական այս թափառաշրջիկ տոհմը համարեա թէ նստակեաց դառնալով և զրադաշտական կրօնը ընդունելով նախ ենթարկւեց Անդրակորասի սատրապութեանը. Անդրակորասին Աղէքսանդրն էր նշանակել սատրապ. սակայն՝ պարթև իշխաններից մէկը՝ Արսակեսը սպանեց յաջորդ սատրապին՝ Պերիկլեսին, ապա՝ երբ ինքը պատերազմում ընկճեց, իւր եղբայր Տրիդատը (երբ հայերն այս անունով թագաւոր են ունենում արտասանում են Տրդատ) 247-ին հիմնեց պարթևական թագաւորութիւնը և Զատուարտանն էլ մայրաքաղաք դարձրեց: Այս ժամանակից սկսւում է նոր թագաւորութեան ծաւալումը նախ՝ դէպի Կասպից ծովի հարաւային կողմում և ապա՝ Միջագետքում. շուտով մենք կտեսնենք, որ հայերը և սրանք ընդհարւում են: Հայաստանը սրանց համար ակրէսիվ դրացի էր և ոչ թէ ուղղակի թշնամի. և քանի որ հայերը ժամանակ ունեցան ամրապնդւելու, հաստատուելու, ուստի՝ կարող կլինէին աւելի ըն-

դարձակել ի վնաս պարթևական խիստ արագ
յաղթանակների, որը կատարւեց իւր սահմաննե-
րի վրայ: Հայաստանն այսպէս կարողանում է
վերջնականապէս դէն ձգել թուլացած Սելև-
կեանների գերիշխանութիւնը մինչև որ հռո-
մայեցիներն են գալիս նրան մի ակելի զօրեղը տա-
լու: Սրանից յետոյ՝ այս արկածների մանրա-
մասնութեանը կանցնենք, որոնք բռնում են մեր
թւահանից առաջ եղած երեք վերջին դարերը:






Վերջին երբորդ պահիր, որը բաղկացած կլինի
հետեւեալ զուխներից,

1. Հայոց թագաւորութիւնը Արաշխեան ազգա-
յին հարստութեան ժամանակ,
2. Օտար տիրապետութիւնները,
3. Հին հայերի կրօնը,
4. Հին հայերի քաղաքակրթութիւնը,
5. Քննադատութիւն հայ պատմագիրներին,

լոյս կտեսնի յունվարին:

Տպագրական եւ ուրիշ սխալները կուղղուն այս
վերջին տրակում:



ՀՀ Ազգային գրադարան



NI.0419290

7490